




Հայոց  
Եղանակ, 28 հազ. 1899

ԱՄԱԹՄԱՑԻՆ ՈՒՂԵԽՈՐՈՒԹԻՒՆԻՑ

ԴԵՊ Ի ՀԱՅՍ



# ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՎՈՐԱԿԱՆ

Է.

ԱՄԵՐԻԿԱՆ ԱԽԱՐԵԼՈՒԹԻՒՆԻՑ

ԴԵՊ Հ Հ Ա Յ Ս

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՔԱՂՈՒԱՁՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՓԱԳՐԵՐԻՑ



Ա Յ Կ Ա Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ն

1892.

13 APR 2011

Մ-39

ԱՄԱԹՆԵՅԻՆ ՈՒՂԵՒԱՐՈՒԹԻՒՆԻՑ

891-99-09

Դ Ե Պ Ի Հ Ա Յ Ս

Մ-30

ՆԿԵՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՔԱՂՈՒԵԾՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵԽԱԳՐԵՐԻՑ

ԳՐԵՑ

Ը Բ Ա Պ Ա Մ Ա Ռ

ՈՒՍՈՒՑՉԵՎՈՒՍ ՀԵՋԵՐԵՐԻ Ի ՀԵՄԱԼՈՒՐԵՐԻ ՊԵՏԵՐԲՈՒՐԴԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ


Ո Ն Ո Փ Ռ Ի Ո Ս Ա Ն Ո Փ Ե Ա Ն



Վ Ա Ր Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1892.



41882-50

## Ա Զ Դ

Սուազիկայ հրատարակութիւնս ամբողջական թարգմանութիւն է նշանաւոր հայերէնագէտ ուսուցչապետին ոռւսերէն հրատարակութեան,<sup>1</sup> որ նախ երկու անգամով լոյս տեսաւ Ծուսական Հնախօսական թերթին մէջ: Նոյն թերթին Ե. Տարեցրջանին մէջ դրուած էին ներկայ գրքուկիս Ա—Թ հատուածները<sup>2</sup>, իսկ մնացեալըն Ժ—Ժ նոյն թերթին Զ բաժնին մէջ<sup>3</sup>:

Հայերէն թարգմանութիւնս մասն մասն լոյս տեսաւ “Հանդէս Ամսօրեայ,”, թերթին մէջ<sup>4</sup>: Թարգմանութիւնն ամբողջական է. միայն դուրս մնացած է ԺԶ հատուածին վերջը դրուած<sup>5</sup> համեմատութիւնն Խորենացւոյ քնազրին Քջմիածնի նշանաւոր ձեռագրին հետ:

Դրուկիս Թ. հատուածին վերջը դրուած մանրագիր հատուածն<sup>6</sup> յաւելուածոյ խմբագրական դիտողութիւն մըն է Հ. Գրիգ. Վ. Դալէմբերեանի, որ նոյնութեամբ առնուած է “Հանդիսի,, 1891, Թ. 9 թուէն”:

<sup>1</sup> Н. МАРРЪ, Извъ лѣтнегъ поѣздку въ Арменію. Запѣтки и извлеченія изъ армянскихъ рукописей. Петерб. 1891—92.

<sup>2</sup> Записокъ восточн. отд. имп. русск. археол. общ. V, стр. 211—241.

<sup>3</sup> Записокъ etc. VI, стр. 135—228.

<sup>4</sup> Հմբարք. «Հանդէս Ամսօրեայ», Ե. 1891, Թ. 9 (Սեպտ.) էջ 260—272 և Զ. 1892. Թ. 8. էջ 231—235. Թ. 9. էջ 268—271. Թ. 10, էջ 303—307 և Թ. 11:

<sup>5</sup> Записокъ, etc. VII, стр. 160—228, եւ էջ 46—94 ուղարկեն առանձին հրատարակութեան մէջ:

<sup>6</sup> Տես էջ 38—41:

<sup>7</sup> Հմբարք. «Հանդէս Ամսօրեայ», 1891, Թ. 9, էջ 271—272:

## ՑԱՆԿ

Եջ

Ա. Բաղասամի վարոց Թարգմանիչ՝ Աստ .	3
Բ. Մովսես Խորենացու Պատմութեան ձեռագիրը . . . . .	5
Գ. Թռնելեաց Երգերի մասին . . . . .	6
Դ. Քաջնորի և Արտառազդի մասին . . . . .	9
Ե. Հայոց Այրուրենքը . . . . .	15
Զ. “Ուկեփորիկի,, Աշանակութիւննը . . . . .	17
Է. Վրաց տարեգրութիւնների հայկական թագրի մասին . . . . .	21
Ը. Աղամ և Եռա . . . . .	22
Թ. Յովլիկի և Ասանեթ . . . . .	32
Ժ. Յիսուսի Մահկութիւննը . . . . .	41
ԺԱ. Աստուածածնի Տեսիլը . . . . .	57
ԺԲ. Պողոս առաքեալի Տեսիլը . . . . .	61
ԺԳ. Պետրոս առաքեալի Երազը . . . . .	66
ԺԴ. Ս. Գրիգորի Տեսիլը և Հոգոն ու մարմոնի վեճը . . . . .	67
ԺԵ. Մի Բանաստեղծութիւն . . . . .	82
ԺԶ. Վերջաբան . . . . .	84

# ԱՄԱԾՈՒԱՅԻՆ ՈՒՂԵԿՈՐՈՌԻԹԻՒՆԻՑ

ԴԵՊ Ի ՀԱՅՍ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՔԱՂՈՒԱՁՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՌԱԳՐԵՐԻՑ

Պատկի է Էջմիածին ուղեւորութեանս ձեռա-  
նարկեցի հայկական գրաւոր մատենագրութիւնից  
առակների եւ առածների նիւթեր ժողովելու նպա-  
տակով։ Ինչ որ կատարել ու ժողովել եմ այդ խնդրի  
նկատմամբ, այն ամենը տեղ կը գտնէ «Հայոց ա-  
ռակների հաւաքածուների մասին», ուսումնասիրու-  
թեանս մէջ, որի վերայ այժմ աշխատում եմ։

Հանգստեան ժամերիս գլխաւոր պարապ-  
մունքներիցս յետոյ՝ ես նկարագրում էի Էջմիածնի  
մատենագարանի քանի մի ձեռագրերը եւ նոցա մի-  
ջից քաղուածներ անում. վերջիններից կազմուած  
են առաջիկայ դիտողութիւնները։ Այստեղ ի միջե  
այլոց մտան նոյնպէս քաղուածներ Քրիստոսի ման-  
կութեան մասին մի մասնաւոր ձեռագրից, որ շնոր-  
հակալութեամբ ընդունեցայ իւր ստացիչ կարսի  
հոգեւոր հովիւ Յուսիկ վարդապետից, որին բախ-  
տաւոր դիպուածը պատահեցրեց ինձ Անիի աւե-  
րակներում։

Ես Անի գնացի արդէն Էջմիածնում աշխա-  
տանքներս վերջացնելուց յետոյ։ Աւելի եւս կանուխ  
կատարեցի շրջագայութիւններ մօտակայ նշանաւոր  
վայրերն, այսպէս օրինակ Սեւանայ վանքը՝ Սեւա-  
նայ լճի (Գէօգչայ) վերայ, ուր եւ կազմեցի վանքի  
ձեռագրերի ցուցակը, որը լոյս կը տեսնէ սոյն իսկ

Էջերի վերայ Էջմիածնի տասը ձեռագրերի նկարագրութեան հետ միասին։

Էջմիածնում կրօնաւոր Գալուստ Մկրտչեանի էական օգնութեամբ յաջողեցաւ ինձ համեմատել Մովսէս Խորենացու տպագրուած բնագիրը Սարգիս Սրբազանի ձեռագրի հետ, որի մասին խօսք կը լինի ներկայ նկատողութիւններից մէկի մէջ։

Ահա այն ամէնը, ինչ որ կարողացայ անել իմ Էջմիածնում եղած աւելի քան երկու ամիս ժամանակամիջոցում — Մայիսի սկզբից մինչեւ Յուլիսի կէսր : Բաց ի սորանից, Էջմիածին լինելս իմ անձի համար շատ կողմերից խրատական էր, եւ եթէ մի ցանկալի բան կայ, այդ ուղեւորութեանս կրկնուիլն է . երկու երեք ամիսը շատ կարճ ժամանակամիջոց է քանի մի հազար ձեռագրերի հաւաքածուի հետ ծանօթանալու եւ ամէն կարեւոր բաները դուրս բերելու համար . բայց եւ այն ինչ որ կարողացայ անել, կախումն ունէր այն մեծ յարմարութիւններից եւ պարապմունքների պատշաճ գեղեցիկ պայմաններից, որոնց մէջ գտնուեցայ իմ Էջմիածին ոտք կոխած առաջին իսկ օրից, որի համար քաղցր պարոք եմ համարում յայտնել խորին շնորհակալութիւնս Էջմիածնի Ճեմարանի ուսուցիչ Յ. Ն. Յովհաննիսեանին, Ճեմարանի տեսուչ Նահապետ աբեղային, Ներսէս Եպիսկոպոսին, Ղեւոնդ վարդապետին, մատենադարանապետ Հ. Սահակին եւ ընդհանրապէս Էջմիածնի բոլոր Միաբանութեան, որոնք այնքան քաղցր եւ ուշադիր են դէպ ի իւրեանց հիւրերը՝ մանաւանդ հայ հնութիւններով հետաքրքրուողները :

Այստեղ եւս յարգանքով արտայայտում եմ խորին երախտագիտութեան զգացմունքս Նորին Սրբազնութիւն ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մակարին, որ բարեյօժարութեամբ հաճեց Էջմիածնի գրքերի գանձարանը իմ կամքին թողնել անպայման աղատ կերպով օգտուելու համար :

### ԱՐԴԱՊՈՒՆԿԵՐ :

1. **Sպ.** = տպագրուած. 2. **Չռդր.** = ձեռագիր.  
 3. **Էջմ.** = էջմիածին. 4. **Ցուցակ** = Ցուցակ Սեւանայ վանքի ձեռագրերի էջմիածնի տասը ձեռագրերի նկարագրութեան հետ միասին:

Առաջ բերուած ձեռագրերի մօտ արարական թուանշանների խումբը լատինական տառի հետ միասին ունի հետեւեալ նշանակութիւնը. — արարական թուանշանը ցոյց է տալիս թերթը, իսկ լատինական տառերը՝ ա — թերթի առաջին էջը, և — երկրորդը եւ այլն: Եթէ այսպիսի մի խմբի դիմաց դրած է նոյնպէս մի հայկական տառ, այն ժամանակ վերջինը ցոյց է տալիս ձեռագրի հայկական paginationը, այսինքն՝ ձեռագիրը կազմող տետրակներից մինը. արարական թուանշանը այդ դէպքում ցոյց է տալիս այն տետրակի թերթը, իսկ լատինական տառերը — այն թերթի էջը:

Ես դնում եմ էջմ. ձռդրերի ճշգրիտ համարները էջմիածնի մատենադարանի ձեռագիր ցուցակի, եւ ոչ թէ 1863թուի տպագրի համեմատ (Մայր ցուցակ, եւն. Թիֆլիզ). միայն ձեռագրի նկարագրութեանս մէջ (Ցուցակ եւ այլն) տպագրուած ցուցակի համարները դրուած են փակագծում իսկականների հետ միասին:

### Ա.

“Ակարագրելով Սեւանայ վանքի ձեռագրերը՝ ես նայում էի Յայսմաւուրքներում “Բաղաամի եւ Յովասափին, արձակ<sup>1</sup> քերթուածը: Ինը ձեռագրից

<sup>1</sup> Այս քերթուածը հրատարակուած է եղել Հնատիալ Յայսմաւուրքներում. տպագրուած օրինակից օգտուել է եւ Մ. Ռեալինին, “Կալիլակ եւ Դիմնակ գիրքը:”, Մուկուա. 1889. էջ LXXXIII. ծանօթ. 141. սակայն ի զուր է ասում (անդ) պլ. Ռեալինին գազանից հալածուած մարդու առածի առթիւ, որ իբր թէ հայկական քերթուածում այդ առածի մէջ փոխանակ փղի՝ շատ անճահ կերպով եղջերու է գրուած: Եղջերու բառի սեռական հոլովը կը լինէր էղջերուի, իսկ բնագրում գրուած է էղջերէն. որը կարող է լինել [մի] եղջիւր, յունական մօνօչէջաւուս համազօր բառի սեռականը. ձեռագրերում, ի միջի այլոց էջմ. թ. 1755, այդպէս էլ կայ մէղջեր. բայց սեռական հոլովի միւս ձեւով — մէղջերու:

(Թիւք 32—40) իմ որոնած հոգեշահ վէպը գտնուեցաւ երեքի մէջ — թիւք 33, 35 եւ 37. վերջինի մէջ թերի, որը, նայելով լուսանցքի ծանօթութեան, առաջ է եկել բնադրի պակասաւորութիւննից, որ տեղից որ օրինակուած է: Թիւք 32 եւ 38 ձեռագրերում վէպը բոլորովին կը պակսի. 34, 36 եւ 39 թուերում նոյնպէս չկայ, բայց շատ կարելի է այն պատճառով միայն, որ ամէնքն էլ ի վերջոյ թերի են. իսկ բաղաամի եւ Յովասափի պատմութիւնը հայկական աւելի հին Յայսմաւուրքներում, այսպէս կոչուած Մայր Յայսմանուրքներում, ինչպէս են եւ Սեւանայ օրինակները, սովորաբար զետեղուած են լինում. վերջին էջերում իբրեւ յաւելուած:

Սեւանի երկու ձեռագրերի մէջ<sup>1</sup> բաղաամի եւ Յովասափի վէպի վերջում գտնուում է յիշատակարան վէպի հայ թարգմանչի անունով. այդ յիշատակարանը աւելի լաւ պահպանուած է այդ իսկ վէպի վերջում ելմիածնի ձեռագրի մէջ թ. 1755<sup>2</sup> գրուած 1441 թուականին:

“Զոր եւ [ես] Ասատ մեղաւոր ծառայս աստուծոյ բազում աշխատութեամբ եւ ջանիւ փոքր ի շատէ ծայրաքաղ արարեալ թարգմանեցի զայս ի հայ լեզու ընդ ձեռամբ իշխանի միոյ բագրատունոյ պատուաւորին՝ եւն:

Սեւանի “B եւ I” օրինակների մասին հարկ է նկատել նոյնպէս, որ երկու պատկերազարդ ձեռագիր Յայսմաւուրքներում թ. 33 եւ 35 լուսանցքների վերայ վէպի բնադրի սկզբին՝ կայ Հնդկաց արքայորդի Յովասափի պատկերը:

<sup>1</sup> թ. 33 ձոգրում, նորոգուած Հ. թ. 1143, այսինքն 1684 թուին եւ թ. 35 ձոգրում, գրուած Հ. թ. 1089, այսինքն՝ 1640 թ.: <sup>2</sup> Տես Յուցակը:

## Բ.

**Տպագիր Խորենացու եւ Սարգիս Սրբազանի ձռդրի համեմատութիւնը,** որը մեծապէս ինձ պարտաւորեց թողնելով ձեռագիրը իմ կամքին օդուլու նրանից, առանձին կը տպագրուի: Այստեղ միայն այսքանս կը նկատեմ, թէ ձռդիրը, ի դէպ ասած, որը պարունակում է Ասողիկի, Արիստակէս Լաստիվերտացու աշխատութիւնները եւ Մ. Խորենացու Աշխարհագրութիւնը, դրուած է մագաղաթի վերայ՝ բնագրի միտքը բնաւ չհասկացող եւ տառերը մեքենաբար ընդօրինակող մի անձի ձեռքով. արտագրողի սխալներից պարզուեցաւ, որ նա իւր ձեռքում ունէր երկաթագիր օրինակ: Եթէ դրիչը բոլորովին անպատճաստ եղած շլինէր իւր գործին, մենք կ'ունենայինք գեղեցիկ զանազան ընթերցուածների մի շարք. սորա մասին կարելի է դատել այն մի քանի օրինակներով, որոնք անվեաս հասած են “Բազմամեղ եւ չարագործ երէցորդի Ներսէսի,” ձեռքով, ինչպէս կոչում է իրեն ընդօրինակողը:

Բաւականանում եմ լաւ ընթերցանութեան մի օրինակով: Մ. Խորենացու Բ. Գրքի երկրորդ գլուխ սկզբին ընդունուած ընթերցուածը այսպէս է. “Որպէս ասացաք, յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ ի վերայ Պարթեւաց Արշակ քաջ ի քաղաքին, որ կոչի Բահու Առաւատին յերկիրն Քուշանաց:”<sup>1</sup> Էմինի ոռուս թարգմանութեան մէջ. “Ինչպէս մենք արդէն ասացինք, Աղեքսանդրի մահուանից վաթսուն տարի յետոյ Պարթեւաց վերայ թագաւորեց Քաջն Արշակ Բահու — Առաջին քաղաքում — Քուշանաց երկրում:”

“Մեր ընթերցողները կարող են նկատել, — ասում է այդ տեղի առիթով գիտնական թարգմանիչը<sup>1</sup>, — որ Մովսէս Խորենացի Պարթեւաց քա-

<sup>1</sup> Н. Еминъ, Исторія Арменіи Монселя Хоренского, ծան. 139, էջ 280:

ղաքը անուանում է Բահլ-Աստառին։ Այս վերջին բառը առանց երկմտութեան ընդունուում է գիտնականներից եւ գրուում որպէս յատուկ անուն միայն նորա համար, որ այդպէս է գրուած ձեռագիր օրինակներում։ Մենք ընդունում ենք այդ բառը իբրեւ ածական եւ վճռում ենք տալ նորան մեր մեկնութիւնը, թէեւ այդ մեկնութիւնը իւր նորութեամբ փոքր ինչ թերեւս համարձակ թուի։

Մ. Էմին առաջարկում է ուղղել Աստառինը, որպէս սխալ ընթերցմունք, պարտական իւր ծագումով գրիշներին, աւելի ճշգրիտ եւ պատշաճ ընթերցուածի — Աստառինի, որը առաւօտեանի, աւելի եւս լաւ՝ արեւելեանի մտքով լիովին պատշաճ է Բահլ քաղաքին։ Եւ ահաւասիկ Մ. Խորենացու նոր օրինակում ճիշտ որ Աստառին է, փոխանակ Աստառինի։

#### Գ.

Խոսք բանալով մի անգամ Հայոց Պատմութեան հօր վերայ, կ'օգտուիմ դէպքից յայտնելու իմ ենթադրութիւնը մի տեսակ երգերի մասին, որոնք յիշուում են Մ. Խորենացու մօտ — ես ինկատի ունիմ երեւ Թուելէաց։ Իմ կարծիքը չէ տալիս վերջնական պարզաբանութիւն, բայց միայն որոշում է այն նշանակութեան բնաւորութիւնը, որը կարող են ունենալ յիշեալ երգերը. եւ հիմնուած է (իմ կարծիքը) մի մերձեցման վերայ։ Յայտնի է որ Մ. Էմին (Վէպք հնոյն Հայաստանի<sup>1</sup>, էջ 19. ծան. 19, եւ Պատմ. Հայ. Մ. Խոր. էջ 272, ծան. 112) համարում է նրանց ժամանակագրական

<sup>1</sup> Այս աշխատութիւնը մտաւ նոյն հեղինակի վերջին հետազօտութեան մէջ «Մ. Խոր. եւ Հայոց հին վէպք», գրուած ուուսերէն 5դ հնագիտական ժողովի առթիւ Թիֆլիզում 1881 թ.։ Այս վերջին հետազօտութիւնից կատարուած են երկու թարգմանութիւն նոր աշխարհիկ լեզուով. Գ. Խ. III. Յաւելուած Աբահենի, Մովսէս Խորենացին եւ Հայոց հին վէպքերը, Թիֆլիզ 1886 եւ Խաչ. Յովհաննիսեանց, Մովսէս Խորենացի եւ հին հայկական վէպք. Թիֆլիս 1887։

Երգեր. Դիւլորիէ (Journ. Asiat. 1852 vol. XIX. էջ 27) ընդունում է նրանց որպէս չափակտն երգեր. իսկ Մխիթարեանները իտալական Tomaséoh թարգմանութեան ծանօթութեան մէջ (էջ 82,)<sup>1</sup> ենթադրութեամբ կոչում են նոցա յանգական (rimato od in versi), իսկ բնագրում թարգմանած են քանուածով թերում Առաքելք բառը ես յառաջ եմ բերում Առաքելք բայից. այս երկու բառերը հայկական հին քերթողութեան մէջ, ըստ երեւութին, ունէին առանձին նշանակութիւն եւ ցոյց էին տալիս ոտանաւոր յօրինելու կամ արտասանելու եղանակներից մէկը, բայց թէ նոքա երգելով կարդալուն, ասելուն, թէ պերճասացութեան (declamation) էին վերաբերուում, չեմ կարող ասել: Մինչեւ իսկ չեմ վստահանում այս բառը մերձեցնել Առաքելքին, որ եկեղեցւոյ պաշտամանց գրքերում որոշեալ տեղերում դրուում է, որոնք չեն երգուում, այլ մի տեսակ րեչատիվ ասուում են. կարծում եմ, թէ բաւական կը լինի, եթէ յաջողուի ինձ ցոյց տալ Առաքելք գործածութեան գէթմի գէպքը — որից, իմ կարծիքով, յառաջ է գալիս Առաքելք+, իմ ցոյց տուած նշանակութեամբ: Մենք՝ զոր օրինակ, ունինք Մ. Խոր. մէջ Ա. լա. “Եւ կարի իմն նմանագոյնս զՃերակլեայ նահատակութեանցն նմա երգէին:”

Ճշմարիտ չէ<sup>o</sup> արդեօք, որ եթէ փոխանակ երգէինի՝ բնագրում դրուած լինէր Առաքելքն, այն ժամանակ իմ ցոյց տուած Առաքելք առանձին դերը Հայոց հին քերթողութեան մէջ բաւական պայծառ կ'երեւէր այդ տեղից, եւ միեւնոյն ժամանակ Երքու Առաքելքաց խօսքերը մեզ փոքր մի հասկանալի կը լինէին: Եւ Առաքելք բայի մի այսպիսի գործածութեան

<sup>1</sup> Այս (Թիւ) բառի բացատրութիւնը հայկազնեան բառարանում միայն երկու վկայութիւններով (իբր առանց եղանակի երգոց) թէ թէրի է եւ թէ լիով արտայայտուած չէ:

**տեղ՝ մենք արդարեւ ունինք Մովսէս Խորենացու  
յօտ Բ. ը., ուր մենք կարդում ենք.**

“Բայց եթէ կամիս, ստեմ եւ ես յաղագս նո-  
րա անյաջ եւ փցուն, որպէս Պարսիկք վասն Ռոս-  
տոմայ Սագճիկի<sup>1</sup> հարիւր եւ քսան փղոյ ոյժ ասեն  
ունել: Քանզի կարի իմն անյարմար Շուշին նմա  
երդ բանիցն<sup>2</sup> վասն ուժեղութեանն եւ սրտեայ լի-  
նելոյն. որում ոչ Երակլեայ եւ ոչ Սագճին յար-  
մարին այս զըոյցքս:<sup>3</sup> Քանզի Երդէին նմա բուռն  
հարկանել զորձաքար վիմայ ձեռօք ուրոշ գոյր գեղու-  
թիւն, եւ ճեղքել ըստ կամաց մեծ եւ փոքր,, եւն:

**Ես գիտութեամբ ստորագծեցի Շուշին բա-  
ռը. չեմ պաշտպանում այդ, ինչպէս եւ յանձն**

<sup>1</sup> Բնագրում դրուած է Սահմէն. եւ Մ. Էմին այդ  
առթիւ նկատում է (Աշ. Արմ. Ա. Խ., էջ 286, ծան. 168.)  
“Դժուար է որոշել, թէ ինչո՞ւ համար Ռոստոմը կամ Ռուս-  
տէմը մեր հեղինակի մօտ կոչուում է Սահմէն: Ֆիրդուսիի  
մօտ չկայ այս վերջին անունը,,,: Հազիւ թէ սխալուած կը  
լինիմ, եթէ ասեմ, որ Սագճիկը իրանական հերոսի մակա-  
նունն է ըստ ծննդեան տեղւոյն՝ կազմուած ին ածանցով,  
ինչպէս Պարս-իկ հնդ-իկ եւայլն, Սահմ բառից, նա է  
Ռուստէմի հայրենիքի (Սէիստան) անունը, որը Պարսից լե-  
զուում պտտուհում է Տաշկենտ ճեւով էլ: Ֆիրդուսին  
եւս ընդհանրապէս Սէիստացուն կոչում է Հայկա, այդ-  
պէս էջ 999, տող 4. հրատ Վուլերսի:

<sup>2</sup> Երես Բանիցն — հայց. հոլով առանց զ նախդրի:  
Բանաւոր Երդերի միտքը մինչեւ սյժմ բաւականացուցիչ  
կերպով նոյնպէս չէ պարզաբանուած. այդ արտայայտու-  
թեան մասին գոյութիւն ունեցող պարզաբանութիւններին  
թոյլ եմ տալիս ինձ, թէեւ անվստահութեամբ, աւելա-  
ցնել մի ուրիշն էլ. արդէօք կոչուած չե՞ն այդ Երդերը Բա-  
նաւոր առանց խօսքերի Երդերից զանազանելու համար, սյա-  
ինքն, որոնք միայն եղանակ ունին: Կովկասում-Հուրիայում  
առանց խօսքերի Երդեր Երդուում են այժմս էլ: Նոքա-  
խմբական են:

<sup>3</sup> Զըոյց, ի հարկէ գործ է ածուում Հայոց լեզուում,  
եւ նոյն իսկ Մ. Խ. ի մօտ (տես Էմին. Վէալք Եւայլն. էջ  
7—8 եւ Dulaurier յ. տ., էջ 8—11), հետիւննի մտքով,  
բայց եւ այս դէպքում վար չի դուրս գալ եւ նորա նախ-  
նական նշանակութեամբը, որովհետեւ զրոյցը կապ ունի,  
ըստ Երեւութին, պահը. ՏՐՈՒԴԱՆ (Երդել) հետ, եւ պարս.  
Ճայակ (Երդ) հետ:

շառի ճշգրիտ կերպով բացատրել եւ նույնացնելու խօսքերի իմաստը։ Կամեցայ միայն իրեն իսկ խորենացու խօսքերի հիման վերայ վերականգնել նույնացնելու ասացուածի եւ նույնացնել բայի ստուգաբանօրէն ակնյայտնի կապակցութիւնը։

Այսպիսի թուելեաց երդերից մինը (Մ. Խ. Ա. և առաջարկում եմ ստորեւ իմ ընթերցանութեամբ եօթնոտեան չափով, ի հարկէ դուրս ձգելով պատմաբանին պատկանող “այլ եւ” եւ “ասեն”, բառերը, ինչպէս եւ վերականգնելով սկզբնական քերականական կազմութիւնը՝ փոփոխուած միջանկեալ ասեն բառի պատճառով։

“Ճաշ գործեալ Արդաւանայ  
Ի պատիւ Արտաշիսի  
Խարդաւանակ լեալ նմին  
Ի տաճարին վիշապաց։”

Յաջորդ տողերը շատ փոփոխուած են դարձեալ կախում ունենալով ասենից, թէեւ նոցա մէջ եւս կարելի է նշմարել չափը, բայց մնացեալ ոտանաւորները պահպանուած են անարատ կամ գրեթէ անարատ։

“Նա անց գնաց եւ շինեաց  
Ի մէջ Մարաց զՄարակերտ։”  
Եւ յետոյ։

“Տենչայ Սարթենիկ տիկին  
Տենչանս զարտախուր խաւարտ.  
[Տենչայ] եւ զտից խաւարծի  
Ի բարձիցն Արդաւանայ։”

### Դ.

Վովսէս Խորենացու աշխատութեան բնագիրն ընթերցողը կը յիշէ անշուշտ հին հայկական երդի թանկագին հատուածը։

“Դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս.  
Զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի Մասիս.

Անդ կացցես եւ զլոյս մի տեսցես<sup>1</sup> :

Ըտապում եմ արդարացնել գիտակների ապաջ ականջի համար խորթ ընթերցմունքը . ես բաց թողեցի հատուածի սկզբի ենէ բառը, որը Մովսէս խորենացու թարգմանիչները փոխադրել են ենէ (если) բառով . բայց ենէն ոչ թէ միայն նշանակում է ենէ (если) այլ եւ որ (что), եւ դրանով ասել բայից յետոյ առ հասառակ սկսուում է լրացուցիչ նախադասութիւնը, նոյնն է եւ իմ կարծիքով ներկայ դեպքում ասէ այսպէս բառից յետոյ : Բնագրի միտքն եւս թոյլ չէ տալիս ենէն թէականաբար առնել : Մենք այստեղ գործ շունինք հանդարտ կերպով մեռնող հօր խօսակցութեան հետ, որը օրհնում է որդուն եւ խրատում է զգոյշ կենալ օրհասական վայրից, որ եթէ նա երթայ Մասիս, դեւերը կը գերեն նորան : Այդպիսի բան չկայ այս տեղ : Ամբողջ հատուածը հօր ուժգին կերպով արտայայտած անէծքն է, որ վշտացած է եւ մինչեւ սրտի խորքը յուղուած որդու խստասիրտ յարաբերութեան եւ անագորոյն խօսքերի համար եւ հայրը անիծում է որդուն անպայման, առանց որեւէ չափաւորութեան, եւ ոչ թէ միայն այն դեպքում, երբ նորա միտքն ընկնի բարձրանալ Մասիսի վերայ :

Նոյն իսկ ապառնի ժամանակի գործածութիւնը հայրական անէծքին տալիս է չարագուշակ մարգարեւութեան կնիք, մի բանի, որ անխուսափելի կերպով պէտք է կատարուի : Առաւել դժուար է բաժանուել է վեր բառից, որը ես պահպանում եմ միայն առաջին տողի մէջ . — ազատ ի վեր ի Մասիս : Ապաքէն այնքան ընտելացել է մեր ականջը այդ է վեր բառին, այնպէս նա ժողովրդական է թուում, որ ակամայ ցանկալի է լինում կրկնել նորան եւ երկրորդ տողի վերջում, ուր եւ իսկապէս նա կայ թէ ձեռադրերում եւ թէ հրատարակու-

<sup>1</sup> Մ. Խոր. Բ., կա :

թիւններում։ Սակայն ուշադրութիւն դարձնենք բնագրի վերայ։ “անդ կացցես եւ զլոյս մի տեսցես” նախադասութիւնը ես հասկանում եմ, ինչպէս եւ ամէնքը, բառացի, առանց ոեւէ այլաբանութեան “այնտեղ կը մնաս եւ լոյս չես տեսնել։” Ո՞ւր Արտաւազդը լոյս չի տեսնել։ Ազատ Մասիսի վերայ։ Միթէ Արարատ լեռան վերայ լինելով կարելի չէր լոյս տեսնել։ Եթէ անձեռնմխելի թողնենք մեր բնագիրը, այն ժամանակ հարկ կը լինի թոյլ տալ մի այսպիսի տարօրինակ երեւոյթ։ Այդ տարօրինակութիւնը, ինչպէս երեւում է, զարմացնում էր եւ ուրիշներին<sup>1</sup>, որովհետեւ, կարծես թէ դորա բացատրութեան համար դիմում էին ներկայ դարի առաջին կիսի մատենագիր Մեսրոպ Թաղիաղեանի վկայութեանը, որը ասում է (Ճանապարհորդութիւն. Կալկաթա 1847, Ա. էջ 1847) թէ Երեւանի բնակիշները այժմ էլ Մասիսին կոչում են Տուն-շիռն։ Ես կարող եմ այլ եւս ցոյց տալ, որ Հայերի մօտ յաճախակի պատահում են թէ իրականութեան եւ թէ հեքիաթների մէջ կառույց կամ սես—անունով լեռներ։ Բայց այդ անունները հազիւ կարող են կապ ունենալ լեռների վերայ գտնուած լուսոյ առատութեան կամ պակասութեան հետ, եւ գլխաւորը՝ ոչ մի յարաբերութիւն չունին խորենացու իւր պատմութեան մէջ հինգերորդ դարում մտցրած երգի հատուածի հետ<sup>2</sup>։ Սորանից զատ թողներով երկրորդ ստանաւորում է Մասիս բառի

<sup>1</sup> Ա. Էմին, Ալեքսանդր Հնոյն Հայաստանի, էջ 44 եւ Dulaquier, Journ, As. XIX, էջ 50. note 2.

<sup>2</sup> Եթէ այս անունը հին համարենք, այն ժամանակ նա կարող է առանձին նշանակութիւն ստանալ գուցէ պահել. tīrak բառի հետ կապուելով, որ կիւցաբանական Haraiti (= Ararat?) Barēza լեռան գագաթներեց մէկի անունն է, եւ եթէ միայն թոյլ տանք որ վերջինիս — օյն մութն, պարսկական ժողովրդական ստուգաբանութիւնը Հայոց յայտնի էր։ Հայոց մութ լեռների մասին տես St. Martin. Mém. sur l'Arm. I p. 47, եւ II p. 176.

առաջ է վեր, մենք կը հանդիպինք մի ուրիշ ոչ  
ինչ պակաս անտեղութեան կամ տարօրինակու-  
թեան, այսինքն՝ մի տեսակ պառաւական բազմաբա-  
նութեան. հատուածը այս միտքը կը ստանայ, թէ  
Արտաւազդը կ'երթայ որսի Մասիսի վերայ, եւ քա-  
ջերը կը տանին նորան Մասիսի վերայ: Եթէ Ար-  
տաւազդը ինքը կ'երթայ Մասիսի վերայ, էլ ուրիշ  
ի՞նչ Մասիսի վերայ կը տանեն քաջերը: Մինչդեռ  
իմ առաջարկած ուղղագրութեամբ այդ բոլոր ան-  
տեղութիւնները կը վերանան, անէծքի իւրաքան-  
չիւր խօսքը իմաստ կ'ընդունի եւ կը բերէ մի ինչ որ  
նոր արհասական դրութիւն, եւ մանաւանդ թէ կը  
ոտանայ չափ, որի գոյութեան մասին հայկական  
հին քերթողութեան մէջ՝ թող դատէ գործին  
ծանօթ ընթերցողը: Իսկ թարգմանութեամբ այդ  
հատուածը այսպէս կըլինի.

Կու կ'երթաս ազատ Մասիսի (Արարատի) վերայ  
Ոգինները քեզ կը բռնեն, կը տանեն ազատ Մա-  
սիսի խորքը (Խոռոջը)

Այն տեղ կը մնաս եւ լոյս չես տեսնել:

Ճշմարիտ է արդեօք, որ +աջ+ ասելով պէտք է  
հասկանալ շար ոգիններ, եւ ոչ՝ քաջարիններ, ինչ-  
պէս այդ կամենում էր Փլորիվալ (Hist. d'Armén.,  
Paris, II p. 291) եւ յետոյ Դիւլորիէ (անդ, էջ 50):  
Այդ խնդիրը շատ հիմնաւոր կերպով վճռել է ոգի-  
նների օգտին Մ. Էմին. (Վէպք հնոյն Հայաստանի, էջ  
44 ծան. 59 եւ Աշ. Արմ. Խօր. ծան. 289, էջ  
299—300). այլ եւ յիշելով հին ձեռագիր բա-  
ռագրքերի բացատրութիւնը եւ ցոյց տալով +աջակալ  
բառը, պատուարժան հայագէտը յենուում է նոյն  
բառի նշանակութեան վերայ եւ Արաց լեզուում.  
սակայն պէտք է նկատել, որ նոյն իսկ Հայոց մէջ  
+աջ բառի ոգի առմամբ գործ էր ածուում. դեռ  
եւս ԺԳ դարում Հայոց քարոզիչները պէտք է հա-

շիւ տեսնեին քաջերի<sup>1</sup> վերայ եղած սնապաշտական զրոյցների հետ, որոնք տարածուում էին ժողովրդի մէջ։ Այս մոքով մի հետաքրքրական տեղ կայ Վարդանի “Հարցերի եւ Պատասխանների”<sup>2</sup> մէջ<sup>2</sup> որն եւ քաղում եմ իջմ։ թ. 453 ձռդրից, գրուած 1628 թ.<sup>3</sup> դա բովանդակում է եւ ժողովրդական աւանդութիւնը Արտաւազդի մասին, որը բանտարկուած է Մասիսի մէջ եւ պիտի ազատուի գեղեցիկ օր մի աքսորից եւ դերէ ողջ տիեզերքը<sup>4</sup>։

“Հարցուած։ Ապա զիա՞րդ է, որ բաղումք ասեն թէ քաջք պատերազմունս մղեն։ Եւ զորս էրէոց որսան։ Եւ զաբմտիս կալոց կրեն։ Եւ զգինիս ի հնձանաց կրեն եւ առնուն։ Եւ վիշապք զտոհմականս յանդէոց (կարդա՝ յանդոց)<sup>5</sup> ծծեն։ Եւ յուլով մարդիկ տեսեալ։ զի վիշապք վերանան յերկրէ յերկինս։

Պատասխանի։ Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր։ միթէ արժա՞ն է այսպիսի ասացօղսն քրիստոն(ե)այս համարել։ Եւ կամ բնաւին առ մտաւորսն։ ոչ քաջ լեալ է եւ ոչ վիշապ։ վիշապդ ա-

<sup>1</sup> Հայոց մեծ բառարանում այդ բառի առաջ Մխիթարեանները բերում են վկայութիւններ միայն Ներսէս Շնորհալուց, Վիպասանութիւն։ (Վենետիկ 1830. էջ 511) եւ եկեղեցական կանոններից։

<sup>2</sup> Վարդանների եւ նոցաւ վերագրուած աշխատութիւնների մասին իմ կողմից առանձին քննութիւնն կը լինի։ Կը բաւականանամ այստեղ մի նկատողութիւնով, որ երկու Վարդանները — Մեծն Վարդանը եւ Վարդան Այկէակցին եթէ միեւնոյն անձերը չեն, այնու ամենայնիւ գոնէ ժամանակակից են, որով աւելի եւս խճճանք է մտնում այդ գործի մէջ։

<sup>3</sup> Տե՛ս Ցուցակը։

<sup>4</sup> Այս հաւատքը ունի եւ խորենացի (Բ., կա.) եւ ուրիշները. բայց շարունակութիւնը արտայայտելիս Վարդան կրկնում է Եղնիկին (Ա. իեւ. էջ 99—107 Վենետ. հրատ. 1826)։

<sup>5</sup> Չոգրում դրուած է յանդէոց, կարծում եմ, սխալմամբ՝ փոխանակ յանդոցի։ Եղնիկի մօտ — արդէոնց։ տես նոյնպէս Գարագաշեան, Քննական պատմ. Հայոց եւն. էջ 277։

նուն բառ է. զի որ ինչ երկրի մեծ լինի՝ վիշտապ ասեն. ըստ գրոց<sup>1</sup> թէ “դու փշբեցեր զգլուխ. եւ ետուն”<sup>2</sup>: Որ նշանակեր զՓարաւոն փշբելի Կարմիր ծովին. եւ զզէնս եւ զզարդ նոցա յալեաց եզր ծովուն գտեալ. եւ ի ձեռն լեղորդացն ի խորսն անկաւ յաշխարհն Հնդկաց. նա էր վիշտապն. որպէս մարդ մեծանձնեա յաղթանդամ ասի. եւ թէ ուղեղ է զոր ասեն. ցորեան եւ գինի առեալ դիւացն. սակայն ոչ ուտեն եւ ոչ ըմպեն. եւ ոչ ի տեղոյն շարժին. այլ երեւոյթս իմն տան. միթէ հրեշտակքն զոր մատուցանէին նոցա կերակուր, որպէս Մանուէլ եւ Գեղէոն, կերա՞ն. անմարմնոյ բնութիւն զիա՞րդ կերակրի զմարմնական կերակուր. դեւք լոկ երեւոյթս տան:”

“Հարցուած. Իսկընդէ՞ր ոք ապա ասեն. տեսեալ ոմանց քաջաց վիշտապաց տաճարս ի լերինս բարձունս եւ բնակութիւնս. ուր եւ զԱղէքսանդր կապեալ ունին ի Հռոմ. եւ զԱրտաւազդ . . . ի Մասիս. եւ զԵրուանդ ի գետս եւ ի մոայլս:”

“Պատասխանի. ոչ Աղէքսանդր կայ կենդանի ի կապանս. եւ ոչ Արտաւազդ եւ ոչ այլ ոք յառաջնոց անտի. զի յորդոց մարդկան Ենովք եւ Եղիայ միայն կենդանիք են. այլ ամենեցուն զմահ ճաշակեալ է. բայց մոլորութիւն դիւաց խաբեաց զկուապաշտոն Հայոց ի ձեռն քրմացն որք ասէին. թէ զԱրտաւազդ ոմն վիշտ(ք) արգելեալ են կենդանի ի Մասիս լեառն. ի նա (կարդա՛ եւ նա) ելանելոց են (կարդա՛ է) եւ զաշխարհս ունելոց. եւ ոմն այլ(ա)մտաց ունէր զիշխանութիւն Հայոց. զարհուրեալ հարցանէր զղձայս որում դիւաց. եւ զկա-

<sup>1</sup> Նոյն տեղը ոազմոսի ոուս թարգմանութեան մէջ այսպէս է. (74. 14) “Ты сокрушилъ голову левіаона, отдалъ его на съѣденіе обитателямъ пустыни,,, ուշւոներէնի մէջ (73. 14) “Ты сокрушилъ еси главу зміеву, далъ еси того брашино дюдемъ зоіопскимъ,,,”

<sup>2</sup> Աշղմ. Դաւթի ՀԳ. 14. Դու փշբեցեր զգլուխ վիշտապին եւ ետուր զնա կերակուր զօրացն Հնդկաց:

խարդան . թէ ե՞րբ լինի Արտաւազդայ ելանելն ի կապանացն<sup>1</sup> : Եւ նոքա ասեն ցնա . թէ ոչ կամիս զելանելն նորա ի կապանաց . հրաման տուր ընդ ամենայն աշխարհս դարբնացն որ ի նաւասարդի օրն որ ամենայն դարբին կոբէ (այս ինքն՝ կոփէ) կռանաւն ի վերայ սայլի իւրոյ . եւ երկաթն<sup>2</sup> Արտաւազդայ անդրէն հաստատի . եւ կատարեն զնոյն հրաման այժմ ամենայն դարբին . որ ի նաւասարդի կռանաւ հարկանէն զսայլն մինչեւ ցայսօր . եւ զայս ստութիւնս արձանացոյց սատանայ յաշխարհս . նոյնպէս եւ զվիշապ որ է օձ մեծ առաջօք (կարդա՝ առ աչօք) ցուցանէ . զի ահագին երեւեալ՝ մարդիկ ի պաշտօն առնուցուն զօձն . որպէս արարին Բաբելացիք եւ Ելադացիք . զվիշապ օձսն պաշտեցին եւ յաստուծոյ հեռացան : <sub>ո</sub>

## Ե .

Անհաւատալի է թուում , որ Հայերը չունենային գրականութիւն , դորա հետ միասին եւ նշանագրեր իրենց քրիստոնէութիւն ընդունելուց եւ Մեսրոպի՝ Հայոց նոր կրօնական ուսման պիտոյքների համար այբուբենի հնարելուց շատ տարիներ առաջ : Իսկ առաջին թարգմանութիւնները , որ գրուած էին մեսրոպեան նշանագրերով , պարունակում են գրականական բոլորովին մշակուած լեզու , որը օրինակ դարձաւ յետագայ բոլոր դարերի մատենագիրների համար : Մինչդեռ ազդային աւանդութիւնը կարծես թէ ժխտում է , որ Հայերը նախ քրիստոնէական շրջանում ունեցել են զիր : Արդեօք շափազանց չե՞նք վստահանում քրիստոնեայ , եւ այն էլ առաջին դարերի հելլենասէր ուսուցիչ-

<sup>1</sup> «Ի կապանաց» , կարելի է թարգմանել եւ «կրծերից» . բայց այստեղ «կապանք» կապ ունի «կապեալ ունին» ի հետ . տես վերը երկրորդ Հարցուածի ընագիրը :

<sup>2</sup> Բնագրում «երկաթ» է ասուած , այսինքն «երկաթի շղթաներ» , որոնց մով կաշկանդուած է Արտաւազդ , կամ երկաթէ սիւն , որին կապուած է նա :

ների վկայութեանը՝ հեթանոս Հայոց վերաբեր-  
մամբ, որոնք առաւել սերտ հաղորդակցութիւն ու-  
նէին իրանի հետ։ Ցանկալի կը լինէր ի մի ժողովել  
այդ հարցին վերաբերեալ եւ հնագոյն եւ նորա-  
գոյն տեղեկութիւնները<sup>1</sup> քննադատօրէն հետազօ-  
տուած իրողութիւնների վերայ մի ուղիղ տեսու-  
թիւն հաստատելու համար։ Մէջ եմ բերում այս-  
տեղ Մեծն Վարդանի Սուրբ Գրքի մեկնութիւնից  
մի քանի տող, որից մենք ծանօթանում ենք, թէ  
ինչպէս էին նայում այդ խնդրի վերայ Ժ. Դ.  
Պուտման կարծում է, թէ Աբգար Թաղէոս  
առաքետլի հետ միասին թարգմանել է Սուրբ  
Գիրքը ասորերէն, եւ ոչ թէ Հայերէն լեզուով, այն  
պատճառով, որ Հայերէն նշանագրեր չկային։ Այս-  
պիսի դէպքերում կարեւոր է իմանալ, թէ այդ  
մատենագրերը իրենց կարծիքը արտայայտելիս  
ինչի վերայ էին հիմնուում։ Ահաւասիկ եւ Վար-  
դանի խօսքերը<sup>2</sup>։

“Ի սկզբանէ արար աստուած զերկինս եւ զեր-  
կիր։ Կամիմ քեզ նիւթ բանի տալ. եւ ոչ կարգաւ  
մեկնութիւն գրել. ապա եւ զոր ինչ նոր թուի մեզ  
քեզ ի բացումն սրտի։ Որպէս զայս ամենայն ազգ-  
ունին ի Հ. ից թարգմանութենէն. իսկ Աբգար  
արքա՝ եւ Թաղէոս առաքեալ բերին զգրեանն յե-  
րուսաղեմէ ի (կարդա՝ եւ) հաւատացեալ եբրայեցիք  
(կարդա՝ եբրայեցիս) որ թարգմանեցին յասորի դիր  
եւ ի լեզու։ Յայն թարգմանութեան սոյնպէս կա-  
գրեալ։ “Ի սկզբանէ աստուած զէութիւն երկնի  
եւ զէութիւն երկրի. յ եւ այս յոյժ գեղեցիկ է. զի”

<sup>1</sup> Այս աշխատանքի սկիզբ դրուած է Մ. Էմինի  
“Հայկական այբուրենի մասին”, ծանօթութեան մէջ (Աշտ.  
Արմ. Մ. Խօր. Յաւելուած 4. էջ 361—376) որ տեղ ի միջի  
այլոց մէջ է բերուում նոյն Վարդանի բոլորովին այլ կար-  
ծիքը Հայոց նշանագրերի մասին լրեսրոպին աւելի մօտ  
ժամանակի։

<sup>2</sup> Մեծի Վարդանայ ճաշակ ինչ ի Սուրբ Գրոց, էջմ.  
ձոգը. Թ. 2282, Լ. 2b—3a։

ցուցանէ թէ յոշեից արար. եւ ըստ Հ. իցն բազում  
երկինս<sup>1</sup> ցուցանէ. եւ այս մի երկին: Եւ էութիւնն  
երկնի հուրն է եւ օդ՝ եւ էութիւն երկրի հողն է  
եւ ջուր. որ երեւի Դ տարրն: Կարի յոյժ անոյշ  
է. Եւ հայերէն գրիչ չկար. վասն որոյ ասորի գրով  
թարգմանեցին. այս ի մեր նախնոյն մեզ յիշատակ,  
եւ այլն:


Ո՞ւր տեղից կարող էր ասորերէն թարգմանու-  
թեան մէջ էս-նիւն բառը լինել, քանի որ եբրայե-  
րէն բնագրին մէջ չկայ այդ: Ես չեմ ուզում են-  
թագրել, թէ մենք գործ ենք տեսնում էան մաս-  
նիկի սուտ բացատրութեան հետ, որ նախդիր է  
հայցական հոլովի, ինչպէս հայերէնում չն, ասորոյ  
էն բառի մտքով, որ նշանակում է էութիւն. բայց  
ուրիշ բացատրութիւն չեմ գտնում:

## Զ.

Ոսկեթունն ասելով ընդհանրապէս հասկա-  
նում ենք Գրիգոր Տաթեւացու Աստուածաբանու-  
թիւնը. այդպէս է կոչուած տպագիր օրինակներում,  
ինչպէս Կ. Պոլսի 1746թ. հրատարակութեան մէջ.  
այդպէս են կոչում նորան եւ ձեռագրերը, օրինակ  
Էջմիածնի թ. 1632, 1633, 1634 եւ այլք: Այս  
ձեռագրերից առաջինի մէջ բաց ի Գրիգոր Տա-  
թեւացու գործերից՝ կան նոյնպէս Մատթէոս վար-  
դապետի ճառը, Եսայի Նշեցու Հաւատոյ թուղթը,  
Ստեփանոս Եպիսկոպոս Սիւնեցու նամակը եւն: Սա-  
կայն յիշատակարաններից երեւում է որ Ոսկեթունն  
է կոչուում միայն ձեռագրի<sup>2</sup> այն մասը, որը բո-

<sup>1</sup> Հայկական տպագրուած Աստուածաշունչերում,  
գոնէ Վենետիկի 1805 թուի հրատ. մէջ դրուած է նոյնպէս  
մի երկինք՝ Աւրին. Հմիտ. Prud'hommeի հատուածը. անդ,  
ստորեւ էջ 172:

<sup>2</sup> Էջմ. N. 1632, 180 p. in 40. Բնագիրը երկու սիւն  
բաժանուած, իւրաքանչիւրը — 19, 4×6, 4c. — տող՝ 29—  
30, կազմը՝ տախտակեայ. կաշին՝ դրոշմուած. գրքի եզերքը  
կարմիր ներկած. թուղթը՝ հաստ, դեղքնկեկ, սակաւ ինչ  
մոմած. — թուահամարները (pagination) հայ տառերով



վանդակում է “Հարցմունք Մասուտ<sup>1</sup> Շահ իշխանի բարեպաշտի: Եւ պատասխանիք Գրիգորի եռամեծի՝ աշակերտի տեառն Յոհաննու Որոտնեցոյ տիեզերալյս վարդապետի: Նախ յաղագս սրբոյ Երրորդութեան եւ ապա յաղագս Բանին մարդեղութեան ի սուրբ գրոց եւ յուղղափառ վարդապետաց հաւաքեալ:”

Այս աշխատութիւնը, ինչպէս յայտնի է, սկսուում է այս խօսքերով. “Սման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի. ասէ ճշմարտութիւն յաւետարանին”, եւն. եւ վերջանում է այսպէս. “Եւ մեք զնոյն (դաւանութիւն) պինդ կալցուք յանշարժ յուսով ի կեանս ի մահ եւ յետ մահու. նորին խոստացեալ բարեացն արժանաւոր լիցուք ի Քրիստոս Յիսուս տէր մեր ամէն<sup>2</sup>”, Ահա եւ այստեղ (132 ա) մենք կարդում ենք:

“Գրեցաւ եւ կատարեցաւ գիրս Աստուածաբանութեան. որ անուանեալ կոչի Ոսկի Փորիկ. զի ըստ իրին եւ զանունն առեղեալ ունի. Ոսկի, այսինքն անապական եւ պատուական գանձիւք աստուածային առլցեալ. ձեռամբ Անդրեաս դպրի ի վայելումն տէր Յակոբ աւագերէց քահանային:

---

իւրաքանչիւր թերթի վերսոյ, գրութիւնը՝ խառն. մինչեւ 83 ա բոլորդիր — մնացեալը նոտրդիր. զարդերը՝ կենդանակերպ գլխատառեր, մանրանկարներ. ցանկը ժա—ժբ ա. Գրչի անունը եւ գրութեան ժամանակը՝ տես բերուելիք յիշատակարանը. վիճակը՝ բաւական շօլափուած կաշեայ թելերը եւ աւզուքը կորսուած. մի քանի թերթեր ելած են կազմից. ձեռագրի վերջում կազմուած է՝ երկուսի ծալած մէջտեղից՝ Մելքիսէթ կաթուղիկոսի թուղթը առ Հայս Լեհաստանի 1076 հայկական թուականով, այն է 1627 Քրիս. թուին 24 Փետրուարի շաբաթ:

<sup>1</sup> Տպագրի մէջ Մաշտուս:

<sup>2</sup> Սորանից յետոյ թ 1632 ձռդրի մէջ կան քանի մի ճառեր (132—147) մասամբ նոյն իսկ Գրիգորի, մասամբ էլ հանուած Վահրամ վարդապետի երկերից, իրեւ յաւելուած, ինչպէս որ այս պարզ երեւում է ի միջի այլոց հետեւեալ՝ “Առաւել քան զչորս հատորն,, խօսքերից, որոնցմով նոքա սկսուում են:

Աստուած իրեն բարով վայելել տացէ յերկար ամօք,, եւն:

“Նոյն կերպով բացատրում է Ուիշտորի բառը եւ հետեւեալ յիշատակարանում, որ զետեղուած է չորս մասերի յաւելուածի վերջում (147 b):

“Եւ ես տարտամն յուսումնասիրաց Գրիգոր պիտականուն խնդրող բանի հաւաքեցի զգիրս Աստուածաբանութեան. որ անուանեալ կոչի ոսկի փորիկ. զի եւ ըստ իրին զանունն առեղեալ ունի. ոսկի այսինքն անապական գանձիւք աստուածային առլցեալ. որ եւ զստացող իւր եւ զսիրողս աստուածաբանութեամբն փարթամացուցանէ<sup>1</sup>:”

“Նոյն կերպով բացատրուում է Ուիշտորի անունը նոյն գրքի տպագիր հրատարակութեան յառաջաբանում, որ գրել է “Աստուծուց ներշնչուածուսուցիչն եւ Պոլսոյ պատրիարք Յակոբ:

“Քանզի արդարեւ սոյն այս գրքուկ՝ ունի յինքեան իբր ի փորի իւրում զէւիլատական ազնիւ ոսկիս. բուսուցեալ խոնաւութեամբ աստուծայնոց շնորհաց. եւ եփեալ հրով աստուածային սիրոյն:”

<sup>1</sup> Յիշատակարանի մնացեալ մասերը ոչինչ չեն տալիս մեզ Ոսկեփորիկ կոչումը լաւ ըմբռնելու համար, բայց եւ այնպէս նա բովանդակում է այս աշխատասիրութեան յօրինման ժամանակն ու պատճառը (Թաւրէժ քաղաքի իշխան Մասուտի յաճախակի խնդիրը). դորա համար աւելորդ չեմ համարում բերել այստեղ դոնէ ծանօթութեան մէջ յիշատակարանի այդ մասը. “Արդ գրեցաւ սա ընդ հովանեաւ առաքելոյս առաքելական աթոռոյս Եւստաթէի եւ այլ բազմահաւաք սրբութեանց ի նեղ եւ ի նուազեալ ժամանակի թուականութեան մերոյ ազգի ՊԾ երդ. Ի խնդրոյ ումեմն բարեպաշտի խոճայ Մասուտ շահի բնակութեամբ ի սեպուհ արանց Թաւրէժ քաղաքի. զոր խնդրեաց բազում անգամ գրով եւ բանիւ գրել յաղագս սրբոյ երրորդութեան: Եւ յաղագս քրիստոսի աստուածութեան: Եւ ես տկար հոգով եւ ծիւրեալ մարմնով հաւաքեցի ի սրբոց արանց զձշան. եւ զուղիղն եւ գրեցի կարձառօտ բանիւ. եւ ի Դ հատորս բաժանեցի վասն դիւրութեան ընթերցողաց եւ յաւելեալ ի մերոց վարդապետաց իբրեւ թագաւորական կնիք եւ մեկնութիւն ի վերայ եղեալ եւ քրիստոսի աստուծոյ մերոյ փառք,, եւն:

Եջմ. թ. 1633 ձեռագիրը, Ուիշտունիկ կոչուած, բովանդակում է ազգային եկեղեցու ջատագովի նոյն աստուածաբանական գիրքը: Միեւնոյնը կարելի է ասել եւ թ. 1634 ձեռագրի մասին, որ օրինակուած է 1601 թ. Մարիամ միանձնուհու ձեռքով<sup>1</sup> Շէնհէր կուսանոցից, (Տաթեւի մօտ.) ուր այն ժամանակները ճգնում էին բաղմաթիւ կոյսեր:

Բայց կոյ բաւական ճիշդ որոշուած երկասիրութիւնների ուրիշ շրջան մի, որոնք ձեռագրերում նոյնպէս ընդհանուր անունով Ուիշտունիկ են կոչուում: Ուկեփորիկների այս տեսակը իւր բաղմագան բովանդակութեամբ յիշեցնում է սակաւ ինչ նմանանուն Legenda Aurea կոչուած ժողովածուն, եւ բովանդակում է՝ Նախ եւ առաջ Ալարդան Այկեակցու տասը վաճառականների առակը ընդարձակ մեկնութեամբ, այլեւայլ խմբագրութիւններով, եւ տեսիլներ եւ ընդհանրապէս անվաւեր բնագրեր, օր. Աղամի եւ Եւայի վերայ, յետոյ զանազան հոգեշահ պատմութիւններ, վարք Ալեքսիանոսի առն Աստուծոյ վկայաբանութեան նման, եւ խրատներ, ինչպէս օր. Եփրեմ Խուրին Ասորու ճառը՝ յարութեան վերայ: Այս տեսակ Ուկեփորիկների առաւել հանդա-

<sup>1</sup> Բերում եմ այստեղ ընդօրինակող միանձնուհու յիշատակարանը. “Չեռամբ տկար եւ սուտանուն Մարիամ հաւատոր (հաւատաւոր) եւ կուսան կոչեցելոյ անուամբ եւեթ. այլ արդեամբ եւ գործով յոյժ տարակացելոյ: Ի ժամանակս թագաւորութեան կողմանցս պարսից Շահ Սուլէման կոչեցելոյ եւ ի հայրապետութեան սրբոյ ալժոռոյն էջմիածնի տեառն Յակովը սրբազան կաթողիկոսի եւ հայոց հանուրց գիտապետի եւ առաջնորդութեան սուրբ եւ գեռահռչակ Ստաթեւի Յովհաննիսի աստուածաբան վարդապետի եւ երջանկափայլ մետրապոլիտի տանս սիւնեաց հովապետի ընդհանութեաւ ամէնօրհնեալ սուրբ աստուածածնիս եւ հրեշտակարնակ սուրբ մենաստանիս Շէնհէր կոչեցելոյ ի մէջ բաղմահոյլ եւ խարազնազդեստ կուսանաց . . . Յիշատակ հոգւոյ վերոյ գրեալ տարտամ անձինս եւ ծնողաց իմոց մահդասի Մարդարին եւ Անթառամին եւ հանգուցեալ եղբօրն իմոյ Գասբարին քեռն իմոյ Սողոմին եւ հօրեղբօր իմոյ տեառն Կիրակոսի երկիւղած եւ աստուածասէր քաւշի եւ որդոյ նորին Սուքիասին,, եւն:

մանօրէն նկարագրութիւնը ընթերցողը կը գտնէ ցուցակին մէջ (Թ. 1631, 1636, 1637 և 1638)։ Oskiphorikի մասին տես նոյնպէս էջ 153 Prud'-homme, Extr. du livre intitulé „Solutions des passages de l'Ecr. Sainte“ յօդուածի (Jour. Asiat. 6. IX. 1867. էջ 147—204)։

### Է.

Դեռ եւս 1851 թուին բռուէ գրեց (Reports sur un voyage archéologique etc., III. rap. p. 62) էջմիածնի Թ. 1722 (ըստ Մ. ց. 1681 թիւ) ձեռագրի վրայ կատարած իւր հնագրական (paléographique) դիտողութիւնների հետեւանքները, որը ի միջի այլոց պարունակում էր Վրաց տարեգրութիւնների հայկական բնագիրը՝ որ նկարագրուած է ստորեւ Ցուցակի մէջ։ Այդ հետեւանքներից նա միեւնոյն եզրակացութեան եկաւ. 1<sup>o</sup> qu'elle<sup>1</sup> est antérieure au XIII. siècle, 2<sup>o</sup> qu'elle n'a probablement jamais été poussée plus loin que l'an 1125. 3<sup>o</sup> que le manuscrit dont je m'occupe est l'original de toutes les copies connues.

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ թէեւ յիշատակարանները, որոնց մէջ խնդրուում է յիշել ապսպարողի բարի յիշատակը, անուանում են Տէր Համազասպին, բայց վանահայր է նա արդեօք Ցովհաննավանքին, դեռ եւս յայտնի չէ։ Համազասպի անունով յիշատակարանները պահպանուած են Ղեւոնդի պատմութեան եւ Եւագրի Առակաւոր խօսքերի վերջում։

Բայց մի պարագայ բոլորովին ի նկատի չէ առած Բրոսէ. ձեռագիրը կարող չէր վերջանալ “նստուցով կէս խօսքով, եւ ճիշդ որ չէր վերջանում. բանը նրանումն է, որ ձեռագրի վերջին թերթը, — որ բովանդակում էր Վրաց տարեգրութեան ոչ

<sup>1</sup> Վրաց պատմութիւնը ըստ հայ աղբիւրի։

շատ ընդարձակ՝ շարունակութիւնը եւ նոյնպէս,  
հաւանականաբար, գրչի յիշատակարանը — փե-  
տուած է, բայց այնպէս, որ հետքերը մնացել են:  
Միւս բոլոր արտագրութիւնները արուած են այս  
ձեռագրից, եւ արուած են՝ ինչպէս երեւում է,  
այն ժամանակ, երբ որ նորա մէջ արդէն չկար գըւ-  
խաւորող թերթը, եւ հասկանալի է, որ բոլոր օրի-  
նակութիւնների մէջ Վրաց տարեգրութիւնների  
հայկական բնագիրը ընդհատուում է “նստուց”  
կէս խօսքով: Ահա բոլոր օրինակները, որոնք ծագել  
են իջմ. ձեռագրերից:

Չեռագիր

Էջմ. N. 1722.

1674 թ. օրինակը.

“ԵՐ ՅԵՄՈՅ ԴԱՐՁԱւ ԿԱՐԱՊԵՄ ԵՎՍԻ. ԱԵՎՀԱԿԱ-  
ՆՈՒԹԻՒՆ:

1830 թ. օրինակը.

ԲՐՈՍԵՒԻ ՕՐԻՆԱԿԸ.

(ՎԵՆԵՏԿՈՒՄ. ՄԽԻԹԱՐԵԱՆց  
ՃՈՄ. ԺԹ. ՃԱՌԵՆՏԻՐ)

Համառօտ պատմութիւն  
Վրաց ԶՈՒԱՆՆԵՐԻ պատ-  
մը. ՎԵՆԵՏԻԿ. 1884.

Chronique Arménienne  
(Brosset, Addit. et Éc-  
laire. 1851 pp. 1—61.)

¶.

“Le *Առաջ գիր*, dont trois exemplaires fi-  
gurent en tête du Catalogue des manuscrits  
d'Etchmiadzin<sup>1</sup> (n° 1, 2 et 3) est peut-être notre  
Livre d'Adam apocryphe,” դրույժ էր A. Carrière

<sup>1</sup> Տփղիս 1863:

1886 ին<sup>1</sup>: “Ախալուում է հմուտ ուսուցիչն, „նկառում էր այդ առթիւ 1889թուին Մարտենաբարձուն հայկական Շաքիմանունեանց նախնեացի<sup>2</sup> հեղինակը: Իսկապէս երկու ուսումնականներն եւս իրաւացի էին, որովհետեւ ցուցակի յիշեալ առաջին երեք թուերի տակ յիրաւի նշանակուած են Առաքել Սիւնեցու<sup>3</sup> Աղամի եւ Եւայի վրայ յօրինած քերթուածի երեք օրինակները եւ ոչ անվաւեր մատեանը. բայց եւ այնպէս էջմ. մատենադարանում կայ մի անվաւեր դիրք Աղամի վերայ, որն եւ որոնում էր իսկապէս Ա. Կառիէռ: Որ Հայերը այդպիսի անվաւեր պատմութիւն ունեցել են, այդ յայտնի էր եւ հ. Զարբահալեանին (յ. տ. էջ 188):

Հայոց գրականութեան մէջ, ասում է նա, մենք պատահել ենք մի երկասիրութեան հետեւեալ խորագրով: “Պատմութիւն վարուցն Աղամայ եւ Եւայի նախաստեղծիցն, որ յայտնեցաւ հրամանաւն Աստուծոյ ի ձեռն Միքայելի հրեշտակապետին՝ մեծ մարդարէին Մովսիսի, որ զաստուածագիծ տախտակն ընկալաւ, զոր նոր թարգմանեաց հոգեւոր տէրն Սիմէռն յԵրուսաղէմ: „Էջմիածնի ձեռագրում յիշուած չէ թարգմանիչը, ինչպէս եւ ոչ այն թէ Միքայել հրեշտակապետի ձեռքով յայտնուել է Մովսիսին:

<sup>1</sup> Une version arménienne de l'histoire d'Asséneth (Nouveaux Mélanges Orientaux, Paris, 1886, pp. 481.):

<sup>2</sup> Վենետիկ. էջ 191. “Կը վրիպի հմուտ ուսուցիչն,, եւ այլն:

<sup>3</sup> Հրատարակած Կ. Գոլսում 1721 ին. ես դարձեալ նկարագրեցի մանրամասնորէն Էջմիածնի այդ քերթուածի մի ձեռագիրը (թ. 1): Տես ցուցակը: Ինձ յայտնի չէ ինչ յարաբերութիւն ունի “Հայկական մատենագրութեան” մէջ (էջ 7) “Աղամ եւ Եւա Կ. Պօլիս.,” գրուածքը այն քերթուածի եւ կամ Աղամի վասին անվաւեր պատմութեան հետ: Մարդկային ազգի նախահօր մասին Հայոց մատենագրութեան մէջ կան շատ բանաստեղծների ոտանաւորներ, այդպէս ի միջի այլոց Վարդան Պիւլպիւլինը (Էջմ. ձռգր. թ. 283) “Մեր տէրն ի դրախտին երեկ, Աղամայ ստեղծողն եկեալ,, եւն:

Էջմ. մատենադարանի Աղամի եւ Եւայի վարուց պատմութեան օրինակը ներկայացուցիչ է այն յունական խմբագրութեան, որի մասին Դիլլման յիշում է իբրեւ միջինդարեան երկասիրութիւն, եւ որը Դիշենտորֆ՝ հրատարակիչը ըստ ձեռագրաց ժբ եւ ժԳ դարուց, վերագրում է Քրիստոսի ծննդեան մօտ դարերին<sup>1</sup>: Ընդհանրապէս ասած՝ Հայ եւ յոյն բնագիրների նոյնութիւնը պարզ երեւում է, թէ համեմատենք Հայ բնագիրը Ճիշ-ցիստէս չափութեան չորս ամսանութիւնների մէջ կարելի է մտնել, երբ յայտնուին մի քանի Հայ օրինակներ, որ կարող չէ չպատահել, երբ հէնց որ մէկը մխուի նոյն իսկ էջմ. մատենադարանի խոր-քերը: Քանի մի զանազան ընթերցուածներ, որով զանազանուում է Հայոց բնագիրը յոյն բնագրից, գտնուում են յունական հրատարակութեան վարիանտներում. այդպէս օր. յունական բնագրում ըստ Դիշենտորֆի (յ. տ. էջ 3) չէ յիշուում Աղամի տարիքը, բայց այդ տեղին վերաբերեալ վարիանտներից յայտնի է, որ տարիքը յիշուած է յունական ձեռ-ագրերից (B) մէկում<sup>3</sup>, ինչպէս եւ մեր հայկական քերթուածում: Միւս կողմից հայկական քերթուածը չունի՝ օրինակ՝ Սեթի հարցմունքը (էջ 3) ու չունի սունուածում: Այս մասին առաջարկը կատարելու համար առաջարկ է մատենադարանի մեջ օրինակում:

Ներկայացնում եմ մասսամբ թարգմանաբար, մասսամբ էլ կրծատ բովանդակութիւնը Աղամի եւ

<sup>1</sup> W. Meyer, Vita Adae et Eva. Abh. d. Phil.-Philol. Classe d. k. Bayer, Acad. d. Wiss. XIV. B., III Abth. pp. 192—193.

<sup>2</sup> C. Tischendorf, Apocalypses Apocryphae. Lipsiae 1866, pp. 1—23. Նոյնպէս Ceriani, Monumenta Sacra et Profana, Mediolani 1868, pp. 19—24.

<sup>3</sup> Տես նոյնպէս Ceriani l. c., p. 21. “Εζησεν δὲ ἄδαμ ἔτη ἐνακόσια λ'.

Եւայի պատմութեան ըստ Էջմ. Հայ ձեռագրին  
Թիւ 1631 (198a—212a) դրուած 1539թուին<sup>1:</sup>

“Պատմութիւն վարուցն Ադամայ եւ Եւայի  
նախաստեղծացն զկնի ելանելոյ նորա (նոցա) ի  
դրախտէն փափկութեան:

Առեալ Ադամ զկնին իւր զԵւայ եւ գնաց ի  
տեղի մի որ էր ի կողմանս յարեւլից, դէմ յանդի-  
ման դրախտին փափկութեան: Եւ բնակեալ եղեւ  
անդ զամս ութուտասն եւ ամիսս երկուս՝ եւ յետ  
այսորիկ մերձեցաւ Ադամ յԵւայ ի կինն իւր՝ եւ  
յղացաւ եւ ծնաւ երկուս որդիս՝ զԱնլոյսն որ կոչի  
Կայեն. եւ զբարեխորհ որ կոչի Հաբել<sup>2:</sup> Իսկ յետ  
այսորիկ մինչ դեռ ննջէին Ադամ եւ կինն իւր՝  
ետես Եւայ տեսիլ: Յայնժամ զարթուց(ոյց) Եւայ  
զԱդամ եւ զտեսիլն պատմէր Ադամա. եւ ասէր  
այսպէս. Տէր իմ, տեսանէի ի տեսլեան գիշերիս զի  
արիւն որդոյն մերում Հաբելի լցեալ լիներ ի բերան  
Կայենի եղբաւր իւրում. եւ նա ըմպէր զարիւն եղ-  
բաւր իւրում: Իսկ Հաբել աղաչէր զնա թողուլ նմա  
սակաւիկ մի յարենէ անտի: Եւ նա ոչ լինէր նմա  
ունին դիր՝ այլ վաղվաղակի ըմպէր զամենայն, եւ  
ոչ մնայր արիւն այլ ի փորի նորա. այլ արտաքս  
փսխէր զամենայն: Իբրեւ լուաւ զայս Ադամ ասէ  
ցնա. յարուցեալ երթիցուք տեսանել զորդեակսն  
մեր. եթէ զի՞նչ պատահել(հեալ) իցէ նոցա:

Երեւեցաւ, որ Աբել սպանուած է իւր եղբօր  
Կայենի ձեռքով. Ադամ ստացաւ հրաման Աստուծուց  
Միքայէլ հրեշտակապետի միջոցաւ լոել իւր ամէն  
տեսած բաների մասին եւ Եւային նախագուշակուե-  
ցաւ սփոփանքի համար, որ նա կը ծնի մի ուրիշ որդի:

<sup>1:</sup> Տես Յուցակը: Ես պահպանում եմ, ինչպէս առ  
հասարակ, ձռդրի. ուղղագրութիւնը ի բաց առնելով ու  
ու տառերը անդէի եւ որդէտի մէջ:

<sup>2:</sup> Յունարէնում (p. 1). τὸν Διάφωτον (Ceriani:  
‘Αδιάφωτον) τὸν καλούμενον Κάϊν καὶ τὸν Ἀμιλαβὲς τὸν  
καλούμενον Ἄβελ.

“Իսկ յետ այսորիկ դարձեալ մերձեցաւ Աղամ յեւայ ի կինն իւր եւ յղացաւ եւ ծնաւ՝ զԱկթ. եւ ասէ Աղամ ցեւայ. Ահա ծնաք որդի փոխանակ Հաբելի զոր եսպան Կայէն. արդ յարուցեալ տացուք փառս եւ աւրհնութիւն աստուծոյ: Եւ եղեն Աղամայ որդիք. Լ. եւ ժամանակս կենաց նորա զոր եկաց ի վերայ երկրի. Զ. եւ Լ. ամք:”

Սորանից յետոյ Աղամ հիւանդացաւ եւ բարձրածայն կանչեց իւր մօտ որդիներին:

“Յայնժամ ասէ Սէթ որդին իւր ցԱղամ. Ով հայր իմ, զի՞նչ է հիւանդութիւն (եւ) խա(ւ)թութիւն քո: Եւ նորա պատասխանի տուեալ ասէ ցնա. Ցաւք բազումք եւ անհնարինք պաշարեն զիս, ով որդեակ իմ: Ասէ ցնա Սէթ. Ով հայր իմ, միթէ զմտաւ ածե(ա)լ իցես զփափկութիւն եւ զվայելցութիւն դրախտին աստուծոյ եւ զպէսպէս զանազանութիւն պտղոցն յորմէ հանապազ ճաշակէիր. Եւ վասն այնը տրտմութեան է հիւանդութիւն քո. Եւ թէ այդ այդպէս իցէ, ով հայր իմ, ասա ինձ, եւ ես երթայց բերիցքեզ ի պտղոյ դրախտին կենաց՝ զի երթայց արկից հող ի գլուխ իմ եւ լացից առաջի նորա եւ աղաչեցից զտէր աստուած. Եւ տէր լսէ ձայնի աղաչանաց ծառայի իւրոյ եւ առաքէ զհրեշտակս իւր եւ կատարեսցէ զխնդրուած իմ. Եւ բերից քեզ ի պտղոյ դրախտին կենաց կերակուր քեզ զի ճաշակե(ա)լ ողջանա(J)ցես ի հիւանդութենէ քումմէ:

Ասէ ցնա Աղամ. Ոչ այդպէս իցէ, որդէակ իմ Սէթ. այլ հիւանդութիւնք բազումք եւ ցաւք անհնարինք նեղեն զիս: Ասէ ցնա Սէթ. Եւ որպէս եղեն ցաւք հիւանդութեան քում, պատմեա ինձ, հայր իմ:”

Աղամ պատմում է իւր յանցանքի եւ Աստուծոյ անէծքի մասին, որը հասաւ նորան Աղամին:

“Իսկ եւայ լացեալ յոյժ եւ ասէ ցԱղամ.

Տէր իմ, յարուցեալ եւ զկէս ցաւոց անձին քո  
տացես ինձ եւ բարձից զնոսա. վասն զի յաղագո  
իմ եղեւ քեզ այդո՞ւ եւ վասն իմ իցես յաշխա-  
տութեանդ: Եւ ասէ ցնա Ադամ. Յարուցեալ դու  
եւ որդիք քո Սէթ եւ երթիջիք մերձ առ դրախտին  
եւ արկջիք հող ի վերայ գլխոց ձերոց եւ ողբասջիք  
յոյժ լալով եւ աղաչեցէք ղաստուած զի թերեւս  
գթասցի ի վերայ իմ. եւ առաքեսցէ զհրեշտակս  
իւր ի դրախտն փափկութեան եւ տացէ ինձ ի  
պտղոյն յորմէ ելանէ աւծումն ողորմութեան՝ եւ  
աւծանիցէք նովաւ զանձն իմ. զի թերեւս ապաքի-  
նացայց ի ցաւոց աստի:”

Եւա եւ Սէթ գնում են դրախտի ուղղու-  
թեամբ: Ճանապարհին Սէթի հետ կոռում է մի  
շար գաղան: Դրախտի մօտ Միքայէլ հրեշտակա-  
պետը Աստուծոյ անուամբ մերժում է նոցա տալ  
ներողութեան ծառի պտղից եւ գուշակում է Ա-  
դամի մօտալուտ մահը: Եւա ու Սէթ վերադառ-  
նում են տուն: Որդիները լացով ու կոծով շրջա-  
պատում են Ադամի մահուան անկողինը: Նոցա հետ  
միասին ողբում է եւ Եւա:

Եւա պատմում է, թէ ինչպէս նա մեղանչեց,  
լսելով սատանային, ինչպէս նա մեղքի մէջ մտցրեց  
Ադամին. եւ ինչպէս իրենք անիծուեցան, Ադամ  
եւ Եւա, եւ օձը:

“Եւ յետ այսորիկ հրաման ետ տէր հրեշտա-  
կաց իւրոց սրբոց հանեալ (կարդա՝ հանել) զմեզ  
ի դրախտէն փափկութեան: Եւ իբրեւ հանեալ  
տանէին զմեզ՝ ողբայայք յոյժ եւ լացաք դառնա-  
պէս: Եւ ասէ հայրդ ձեր Ադամ. թոյլ տուք ինձ  
սակաւիկ մի զի աղաչեցից զմարդասէրն աստուած.  
զի թերեւս գթասցի ի վերայ իմ զի ես միայն մե-  
ղայ: Եւ թոյլ ետուն նմա հրեշտակըն առ ի հանե-  
լոյ զմեզ: Եւ գոչեաց Ադամ ի ձայն մեծ եւ ասէ ող-  
բալով. Թող ինձ, տէր, զանցանս իմ զոր ինչ գոր-  
ծեցի: Յայնժամ ասէ տէր յհրեշտակս իւր. ընդէր

Թողացուցէք շարտաքսել զդոսա ի դրախտէդ.  
Միթէ ես ինձէն արարի կամ անիրաւ դատեցի  
զդոսա . . .

... Եւ դարձեալ տէր յԱղամ եւ ասէ ցնա.  
Ոչ թողից զքեզ յայսմհետէ լինել քեզ ի  
դրախտի աստ: Եւ պատասխանի տուեալ Աղամ եւ  
ասէ ցտէր. Տէր իմ եւ աստուած իմ, աղաշեմ  
զքեզ պարզեւեայ ինձ ի տնկոյն կենաց զի ուտի-  
ցեմ ի նմանէ յառաջագոյն քան զելանելն իմ ի  
դրախտէն կենաց: Դարձեալ խաւսեցաւ աստուած  
ընդ Աղամ եւ ասէ. Եւ այժմ ոչ առնուցուս ի  
դմանէ. Քանի հրամայեցաք քերովբէիցն բոցեղէն  
սրովն պահեալ(հել) զճանապարհն վասն այդո-  
րիկ զի մի ճաշակեսցես ի նմանէ եւ անմահ մնաս-  
ցես յաւիտեան՝ այլ եղիցի ընդ քեզ թշնամին:  
Եւ յորժամ հրաժարեսցես դու ի դրախտէն եւ  
պահեսցես զանձն քո յամենայն շարութենէ եւ  
զմտաւ ածիցես զմահ. զկնի վախճանելոյ(լոց եմ  
զ)քեզ. Եւ յայնժամ տաց քեզ ի պտղոյն կենաց  
եւ մնասցես անմահ յաւիտեան: Եւ զայս ասացեալ  
տէրն. Հրաման ետ հրեշտակաց արտաքս հանել  
զմեզ ի դրախտէ անտի. Եւ ապա հայրդ ձեր Աղամ  
ելաց դառնապէս ի դրախտին առաջի հրեշտակացն:  
Եւ ասեն ցնա հրեշտակըն. զի՞նչ կամիս զի արաս-  
ցուք քեզ՝ ով Աղամ: Պատասխանի ետ եւ ասէ  
ցհրեշտակսն. Գիտեմ զի այժմ հանէք զիս՝ այլ  
թողացուցէք ինձ զի առից անուշահոտ ինչ ի  
դրախտէ աստի. զի յորժամ լինիցիմ արտաքոյ ի  
սմանէ եւ մատուցանեմ պատարագ աստուծոյ՝ եւ  
տէր լուիցէ խնդրուածոց իմոց: Իսկ հրեշտակաց  
մատուցեալ առ տէր եւ ասեն ոյիլի ոյիլ<sup>1</sup>. որ  
թարգմանի թագաւոր յաւիտենական. Եւ՝ հրա-  
մայեաց տալ Աղամայ խունկս անուշահոտութեան  
ի դրախտէ անտի: Եւ հրամայեաց տէր աստուած

<sup>1</sup> Յուն. բնագրում (էջ 16). <sup>2</sup> Ιαὴλ αἰώνιε βασιλεῦ.

ածեալ(ել) Աղամ առաջի իւր. զի առնուցու զխունկս անուշահոտութեան եւ զսերմանիս կերակրոց իւրեանց. թոյլ տուեալ հրեշտակացն։ Եւ եկեալ Աղամ առաջի տեառն։ Եւ տէր աստուած հրամայեաց տալ նմա չորս իրք որ են այսոքիկ՝ կրաւկաւն<sup>1</sup> որ է զափարան. Եւ նարդոս<sup>2</sup> որ է փայլասենի. Եւ կալամոն<sup>3</sup> որ է եղեգն. Եւ կինամոն<sup>4</sup> որ է դարասենի. Եւ այլ բազում սերմանիս ի կերակուրս մեր։ Եւ իբրեւ առ զայն ամենայն ելաք ի դրախտէ անտի. Եւ տեսանէաք եղեալ զմեզ յերկիրս յայսմիկ։”

Աերջացնելով վշտալի պատմութիւնը, Եւա պատուիրում է զաւակներին յիշել նենդաւոր ոսուին (սատանային)։ Աղամ աղաչում է ամուսնուն, որ իւր մահից յետոյ որդիներից ոչ մէկին չժողնէ իւր մօտ մինչեւ հրեշտակի երեւիլը, իսկ մինչեւ մահը խնդրում է, նա աղօթք անէ։ Եւա աղօթում է եւ այն ժամանակ հրեշտակները տանում են փայլով Աղամի հոգին Աստուծոյ մօտ։ Եւա կոչում է Սէթին հրճուելու այն փառքի տեսարանով, որը շրջապատում է Աղամին, հրեշտակները աղաչում են Աստուծուց, որ ներէ Աղամի մեղքերը։

“Եւ արդ ովլ իցեն երկու արքն այնոքիկ եթէսպացիքն. որ կան առաջի աստուծոյ աղաչելով զաստուած յաղագս հաւրն քո Աղամայ։ Ասէ ցնա Սէթ։ Ովլ մայր իմ, արքն այնոքիկ զոր տեսանես՝ արեգակն եւ լուսին են. որ կան եւ աղաչեն զաստուած անկեալք ի վերայ երեսաց իւրեանց յաղագս հաւրն իմոյ Աղամայ։ Եւ ասէ ցնա Եւայ եւ ուր իցէ լոյս նոցա. զի՞արդ մթնացեալ երեւին։ Պատասխանի ետ Սէթ եւ ասէ. Ոչ եթէ ի բաց եղեալ է լոյսն ի նոցանէ. այլ ոչ երեւի լոյս նոցա

<sup>1</sup> Βուն. (էջ 16) κρόκον.

<sup>2</sup> Βուն. (անդ) νάρδον.

<sup>3</sup> Βուն. (անդ) κάλαμον.

<sup>4</sup> Βուն. (անդ) κινάμιωμον.

առաջի հաւրն լուսոյ վասն զի ծածկի պայծառութիւն նոցա ի փառաց եւ ի մեծ պայծառութենէ երեսաց հաւրն լուսոյ։<sup>1</sup>

Վերջապէս Աստուած ներեց Աղամին եւ մէկը վեցթեւեան սերովբէներից տարաւ նորան անստեղծ ծովը, ընկղմեց նորա մէջ երեք անգամ եւ յետ բերեց։

“Իսկ յետ այսորիկ արձակեալ զձեռն իւր որ հայրն է ամենեցուն. որ կայր նստեալ ի վերայ աթոռոյ իւրոյ. եւ առեալ զԱղամ ետ զնա ի ձեռն Միքայելի հրեշտակապետին ասելով ցնա. տար զնա յերկրորդ երկինս եւ հանգոյ մինչեւ յաւր մեծի նորոգմանն. զի կամիմ առնուլ զփրկութիւն ի մէջ երկրի յաղագո Աղամայ եւ ամենայն ծնընդոց իւրոց։<sup>2</sup>

Միքայէլ հրեշտակապետը կատարում է Աստուծոյ կամքը։ Հրեշտակները խնդում են եւ զմայլում են Նորա մարդասիրութեան վերայ<sup>1</sup>։

“Իսկ յետ այնչափ խնդրութեանս (Էպրա՞ խնդրութեանս) զոր լիներ վասն Աղամայ՝ խաւսեցաւ Միքայէլ հրեշտակապետն ցհայրն լուսոյ վասն Աղամայ եւ ասէ ցնա Տէր[ն]<sup>2</sup>. ժողովեսցին հրեշտակը ամենայն առաջի աստուծոյ իւրաքանչիւր ոք ըստ կարգի իւրում, եւ ժողովեցան ամենեքեան սմանք զբուրվառն ի ձեռն ունելով եւ սմանք քնարս եւ փողութեան ահա տէրն համբարձաւ փառաւք ի վերայ չորից հողմոց եւ սերովբէք բուռն հարեալ ունեին զհողմոցն. եւ հրեշտակը յերկնից իջանէին եւ գային առաջի նորա ամենեքեան եւ իջանէին յերկիր. ի տեղւոջ յայնմիկ յորում կայր անկեալ մարմինն Աղամայ։ Եւ անտի երթեալ

<sup>1</sup> Հրեշտակների ուրախութեան մասին յունական ընագրում ոչ մի խօսք չկայ. պակասութիւն է զդացուում եւ հայ ընագրում, որ հետեւում է անմիջապէս։

<sup>2</sup> Եթէ հետեւինք ձեռագրի կիտադրութեանը, դուրս կը գայ, որ հրեշտակապետը ասաց Նորան “Տէր, ժողովեսցին” եւ այլն։

տէր մտանէր ի դրախտն երկնաւոր զաւրաւքն։ Յայնժամ տունկը եւ ծառք՝ պտղաբերեալ ծաղկէին առ հասարակ եւ բուրէր անուշահոտութիւն մինչեւ ամենեցուն որ ծնեալ էին յԱդամայ՝ թըմբեալք լինէին եւ ի քուն ննջէին ի բուրմանէ անուշահոտութեան ծաղկանց դրախտին՝ բայց միայն ի Սեթայ որ ոչ թմբեցաւ. քանզի տէր կամեցաւ ցուցանել նմա զսքանչելիսն զոր գործելոց էր։ Իսկ տէր աստուած նայեցեալ տեսանէր զմարմինն Ադամայ այնպէս անկեալ յերկիր. տրտմեալ լինէր յոյժ մարդասիրութեամբն իւրով. եւ ասէ. Ո՛վ Ադամ, ընդէր գործեցեր զայդ՝ զի եթէ պահեալ էիր զպատուիրանն իմ զոր ետու քեզ՝ ոչ ուրախ լինէին այնոքիկ որք ածին զքեզ ի տեղիդ այդմիկ։”

Բայց Աստուած խոստանում է Ադամին, իսկ գորա հետ եւս ամբողջ մարդկութեան, մեղքերի ներումն. իսկ մինչեւ այն ժամանակ Ադամի մարմինը պիտի հանգչի Դրախտում, այն իսկ հողում, որ տեղից նա առնուած է։ Ինքը Աստուած եօթը հրեշտակների օգնութեամբ թաղում է Ադամի մարմինը Աբելի մարմնի հետ միասին։

“Իսկ Եւայ ոչ իմացեալ եթէ ուր եղաւ մարմին նորա (Ադամայ)՝ լի լինէր տրտմութեամբ մեծաւ եւ լայր դառնապէս յաղագս մահուան նորա եւ դարձեալ յաղագս ոչ գիտելոյ զմարմին նորա եթէ զինչ եղեւ. քանզի որպէս ասացաք յառաջագոյն թէ ամենեքեան թմբեալք էին հանդերձ Եւայիւ ի ժամն այնմիկ յորում էջ տէրն ի դրախտն վայելութեան՝ յաղագս մարմնոյն Ադամայ։ Եւ արդ եղեն հրաշքս այս ամենայն, եւ ոչ ոք գիտաց ի նոցանէ՝ բայց միայն Սէթ որդի նոցա։ Իսկ յետ այսորիկ՝ իբրեւ եհաս ժամն վախճանի Եւայի. յարուցեալ իսկ ինքնին եկաց յաղաւթ արտասուակք եւ ասէ. Տէր աստուած ամենայն բնութեանց արարածոց՝ մի որուշեր (որոշեր) զիս ի մարմնոյ ծառային քո Ադամայ. քանզի դու իսկ

առեր զիս ի մարմնոյ Ադամայ եւ յոսկերաց նորա  
եւ ստեղծեր զիս եւ աղաչեմ զքեղ արայ արժանի  
զիս զանարժանս եւ զմեղուցեալ մարմին աղախնոյ  
քո՝ ոչ որուշեալ (որոշեալ) ի մարմնոյն Ադամայ  
որպէս յառաջագոյն էի ընդ նմա ի դրախտի անդ:  
Քանզի եւ յանցեալն (ցանել) մեր զպատուիրա-  
նաւքս(նաւ քով) ոչ բաժանեցաք ի միմեանց: Եւ  
իբրեւ կատարեաց զաղաւթս զայս՝ հայեցաւ յեր-  
կինս եւ բախեաց զկուրծսն իւր եւ ասէ. Ով տէրդ  
եւ աստուածդ ամենեցուն, ընկալ զհոգի իմ խա-  
ղաղութեամբ. եւ զայս ասացեալ ննջեաց աւան-  
դելով զհոգին իւր ի ձեռն հրեշտակաց: Իսկ յետ  
այսորիկ Միքայէլ հրեշտակապետն հանդերձ երեք  
հրեշտակապետաւքն. բարձեալ զմարմին Եւայի եւ  
տարեալ թաղեցին ի տեղւոջն յորում կայր մար-  
մինն Ադամայ եւ Աբելի արդարոյ: Եւ յետ այսորիկ  
ձայն ետ Միքայէլ հրեշտակապետն առ Սէթ եւ  
ասէ այսպէս. թաղեսցես այսպէս զամենայն մարդ  
վախճանե(ա)լ մինչեւ յօր միւսանդամ գալստեան  
եւ յարութեան: Եւ այսպէս եղեալ զաւրէնս՝ ասէ  
ցնա. եւթներորդումն աւուրն հանդիցես եւ ու-  
րախ լինիցիս ի նմա. զի յայսմ աւուր աստուած եւ  
ամենայն հրեշտակը նորա ուրախ լինիցիմք հան-  
դերձ ամենայն հոգիաւք արդարոցն որք իցեն ի վե-  
րայ երկրի: Եւ զայս իբրեւ ասաց Միքայէլ հրեշ-  
տակապետն ցՍէթ եւ առ ժամայն համբարձաւ  
յերկինս հանդերձ երեք հրեշտակապետաւքն դո-  
հաբանելով եւ փառաւորելով զաստուած եւ եր-  
դէին զերգս ասելով՝ ալէլուայ ալէլուայ՝ ոուրբ  
սուրբ սուրբ. տէր զաւրութեանց: Փառք աստուածոյ  
ամենակալին յաւիտեանս յաւիտենից:,,

## Թ.

ամեմատելով հայ մատենագրութեան մէջ  
գտնուած անվաւերական գրքերի ցուցակը ըստ եր-  
կու նշանաւոր մատենագրաց, Ա: Կառիէռ նկատել

է, որ Եբիստան Կանապետաց գլոբից յետոյ Մխիթար Այրիվանեցին (ԺԳ դար) դնում է “Աղօթք Յովսեփայ”, իսկ Յովհաննէս Սարկաւագը (ԺԱ դար) “Ասենիթի աղօթքն” : Comment le même livre peut-il être désigné sous le titre de Prière de Josef, et en même temps sous celui de Prière d'Asséneth<sup>1</sup>? Հարցնում է փրանկ արեւելագէոր:

Իմ թ. 1755 (Տես ցուց.) Նկարագրած էլմիածնի ձեռագիրը տալիս է իմ վերջնական կարծիքիս Համեմատ փոքր ի շատէ հիմունք տարբեր Համարելու Ասանէթի աղօթքը Յովսէփի աղօթքից եւ միանգամայն չշփոթուիլ Մխիթար Այրիվանեցու եւ Յովհաննէս Սարկաւագի առերեւոյթ Հակասութեամբը, որ եւ դարձրել է իւր վերայ ուսուցչապետ Կառիեռի ուշադրութիւնը:

Ասանէթի աղօթքը Յովսէփի եւ Ասանէթի պատմութեան մի մասն է: Այս պատմութիւնը ըստ էջմ. յիշեալ ձեռագրին, եւ ինչպէս առ Հասարակ յայտնի է, կաղմուած է երկու ժամանակակետերից: Ասանէթի Յովսէփի հետ ամուսնանալու պատմութիւնից եւ եզիպտական թագաժառանգի միջադէպից, որ հետամուտ էր Ասանէթին՝ որն արդէն Յովսէփի կինն էր դարձել. այս իսկ միջադէպն է Կառիեռի հրատարակածը՝ հայերէն եւ փրանկ թարգմանութեամբ<sup>2</sup>. բայց հրատարակիչը սկզբից թողել

<sup>1</sup> Nouv. Mél. Or. p. 483.

<sup>2</sup> Մէջ եմ բերում էջմ. ձեռագրի եւ ապագրի տարբերութիւնները: — Տպագրուած չուստու հօր է-ըսյ եւայլն (Էջ 491 տող 3) ձեռագրում — չուստու նոր չըր ա-րէն-ի ի-ի-ս+ չուստու հօր է-ըսյ եւայլն: Տպ. յառական (տող 7) ձեռագրում — ալ-ի-ն-ի-ս: Տպ. էրբորտ էրինից (տող 19) ձեռագրում — էրիրորտ էրինից: Տպ. է- ա-ն-յ նէր յարդուի յէրի-ս-ս- ա-լ-ի-ս-ս- + ա-լ-ի-ս-ս- լ-ի- ա-ր-ա- պ-ա-ր-ա- մ-ա-ն-ս. (տող 3 ցածում) ձեռագրում — է- յ-ն-յ նէր յարդուի յէրի-ս-ս- էրի-ս-ս- (կարդա ա-լ-ի-ս-ս-) Սիմոն- պ-ա-լ-ի-ս- է- յ-ն-յ է- յ-է-ր-ի-ս- ի-ս-ր-ի-ս- լ-ի- ա-ր-ա- պ-ա-ր-ա- մ-ա-ն-ս: Տպ. է դ-ա-ր-ա-մ-ի-ն (Էջ 492. տող 14 ցածում) ձեռագրում — է դ-ա-ր-ա-մ-ի-ն (այս ինքն՝ դ-ա-ր-ա-մ-ի-ն): Տպ. [է- ա-ն- ի-ն-է է յ-է-ր- ա-] (Էջ 495. տող 9. ցածում): ձեռագրում — ա-ն-ի-ն է յ-է-ր- մ-է: Տպ. յ-ս-ե-ր-ա- (Էջ 496 տող 6) ձեռա-

է մի երես, որի վերնագիրն է ձեռագրի մէջ “Աւրհնութիւն (Եւ) խոստովանութիւն Ասանեթայ” :,, Ահա հայ բնագիրը :

“Մեղայ տէր՝ մեղայ առաջի քո եւ բազում ա-  
նօրէնութեամբ յանցեայ ես Ասանէթ դուստր Պե-  
տափրէի քրմին Արեդ քաղոքին. որ վերայկացուն  
էր աստուածոցն ամենայնի. մեղայ տէր՝ մեղայ ա-  
ռաջի քո. բազում յանցեայ. եւ պաշտեցի զչաս-  
տուածս որ ոչ գոյ թիւ. եւ ուտէի ի հայէ զոհից  
նոցա, մեղայ տէր՝ մեղայ առաջի քո եւ բազում  
յանցեայ. եւ ոչ գիտէի եւ զբաժակ որոգայթից  
արբի եւ ուտէի [ի] սեղանոյն մահու. մեղայ տէր՝  
մեղայ առաջի քո. բազում անցեայ եւ ոչ գիտէի  
տէր աստուած երկնից. եւ ոչ յուսացայ ի բարձր-  
եալն աստուած կենդանին յաւիտենից. մեղայ տէր՝  
մեղայ առաջի քո եւ բազում յանցեայ եւ յու-  
սայցայ ի մեծութիւն փառաց իմոց եւ ի գեղեց-  
կութիւն իմ եւ էի հպարտ եւ ամբարտաւան. մե-  
ղայ տէր՝ մեղայ առաջի քո. բազում յանցեայ եւ  
արհամարհելով զամենայն մարդով. եւ ոչ էր այր  
որ երեւէր առաջի իմ. մեղայ տէր՝ մեղայ առաջի քո.

գրում — սահմանական Տալ. Հարդեցան է սբուն+ (տող 16) ձեռագրում — Հարդեցան սբուն+ (forme plurielle de սուր, à moins que ce ne soit une erreur de copiste, նկատում է. Պլով. Կառիեռ. բայց աւելի լաւ չէ արդեօք այսպիսի դեպքում սբուն+ բառը համարել կանոնաւոր ձեւ. որն ինչպէս կայ, սրունքի մտքով: ) Տալ. Է հուն էղէնդան+ (էջ 497, տող 1) ձեռագրում — Է պլուսկուն էղէնդան+ Տալ. Է փոքրանիս (տող 5) ձեռագրում — Է պլուսկուն (այսինքն՝ պլուսկուն կամ պլուսկուն): Տալ. Էնդրեցէն+ (տող 11 եւ 15) ձեռագրում — Էնայեցէն+. (ուղղել է արդէն հրատարակիչը 2 նկատ. մէջ. Il faut lire probablement... ինայեցէր): Տալ. Ճանես+ (էջ 498, տող 1) ձեռագրում — Ճանայշ (նոյնպէս ուղղել է հրատարակիչը 1 նկատ. մէջ):

<sup>1</sup> Այդ վերնագիրը կայ եւ ասորական աղբիւրի մէջ.  
“Թէշըսիթա դը-թաւդիթա դ’Ասանաթ լվաթ ալահա մրայ-  
մա.,” Land. Anecd. syriac., t. III. p. 38. Oppenheim, Fabula  
Josephi et Asenethae apocrypha e libro syriaco latine  
versaի մէջ Berolini 1886, p. 40, թարգմանում է Հymnus a c eleb rati o Asenethae in Deum excelsum, բայց  
“թաւդիթա” նշանակում է խոստովանութիւն:

բաղում յանցեայ եւ ասէի ոչ գոյ իշխան յերկրի որ լուծանէ զգօտի կուսութեան իմոյ. մեղայ տէր մեղայ առաջի քո բաղում յանցեայ. այլ եղէց հարսն որդոյ մեծ թագաւորին մինչդա եկն յօփ. զաւրաւորն աստուծոյ եւ իջոյց զիս ի զօրութենէ իմմէ եւ խոնարհեցոյց զիս յամբարտաւանութենէ իմմէ. եւ գեղեցկութեամբ իւրով որսաց զիս եւ իմաստութեամբ իւրով որպէս ձուկն կարթիւ եւ դեղովն որպէս զդեղ կենաց եւ զօրութեամբ իւրոյ հաստատեաց զիս եւ ած մատոյց զիս աստուծոյն յաւիտենից :<sup>ո</sup>

Կասկած չկայ, որ առաջիկայ հատուածում մենք գործ ունինք աղօթքի հետ. նորա բովանդակութիւնը ճշդիւ լիով արտայայտուած է “Աւրհնութիւն եւ խոստովանութիւն”, վերնագրի մէջ: Ասանէթ որտաբեկուում է իւր անցեալ մեղքերի համար. նորա խօսքերի մէջ լսուում է գովաբանութիւն դէպ ի բարեգութն Աստուած, որ այնքան երկար հանդուրժել է նորան, մեղաւորին, բոլոր անօրէնութիւններին, կուապաշտութեանը, հպարտութեանը, աւելորդ ինքնավստահութեանը, եւ այլն: Մի խօսքով սա մի ապաշաւող հոգու աղօթք է եւ կարծեմ նման է Յովհաննէս Սարկաւագի “Աղօթք Ասենիթի”, կոչածին. այս դէպքում պէտք է ենթադրել, որ “աղօթք”, ասելով Յովհաննէս Սարկաւագը հասկանում էր Յովսէփի եւ Ասանէթի բոլոր պատմութիւնը. որովհետեւ այլապէս միայն աղօթքը իւր չափազանց կարծութեամբ, ինչպէս որ մէջ բերինք, դժուար թէ դարձնէր իւր վերայ հայ եկեղեցու նախանձախնդիրների ուշքը եւ ընկնէր Index apocryphorumի մէջ: Ճշմարիտ է, բաց ի վերնագրից ԺԱ դարի հայ մատենագրի Ասանեթի Աղօթքի մասին ուրիշ ոչ ինչ չդիտենք. բայց բանը նրանումն է, որ բաց ի այդ Աղօթքից Յովհաննէս Սարկաւագը ուրիշ անվաւերականի անուն չէ տալիս, որ կապուած լինի Յովսէփի կամ

Ասանէթի անուան հետ, որոնց մերժուած պատմութիւնը, ըստ երեւութին, գոյութիւն ունէր նորա ժամանակ։ Յետոյ, Ասանէթի Աղօթքը առանձնացած չէ հայ մատենագրութեան մէջ. այսպէս կամ այնպէս, նա պէտք է կապ ունենայ Մխիթար Այրիվանեցու ցուցակի Յովեկոյ, Աղօթքի հետ, իսկ այս Յովսեփայ Աղօթքը, կարծեմ, նոյնպէս ունինք։ Էջմիածնի միեւնոյն թ. 1755 ձեռագրում Ասանէթի անվաւերականից առաջ կայ Կոտի Յովեկոյ, որ սկսուում է այս փառաբանութեամբ, ինչպէս Սաղմոսի շատ տեղերում։

“Եւ տեսի ի կեանս իմում զնախանձ եւ զմահ եւ ոչ մոլորեցայ ի ճշմարտութենէ տեառն։ Եւ եղբարք իմ այսոքիկ ատեցին զիս. սոքա կամէին սպանանել զիս եւ աստուած հարցն իմոց պահեաց. ի ջրհորն ընկեցին զիս. բարձրեալն եհան զիս. ի ծառայութիւն վաճառեցայ ես. եւ տէրն ամենայնի ազատեաց զիս. ի գերութիւն վարեցայ ես եւ տէր ինքն դարմանեաց զիս. միայն էի եւ աստուած մխիթարեաց զիս. ի հիւանդութեան էի. եւ խնամակալն այցելու եղեւ ինձ. ի բանդի եղայ ես. եւ աստուած շնորհալից արար զիս. ի կապանս էի եւ տէր արձակեաց զիս. ի չարայխաւսութիւնս (մատնեցայ) եւ ջատագովեաց վասն իմ. ի բանդս դառինս (եղիպտացւոց) եւ անդի փրկեաց զիս,<sup>1</sup> եւն։

Այս արդար Յովսէփի աղօթքն է, որը երբեք չէ շեղուել ճշմարտութեան շաւղից եւ նորա հակադրութիւնը ապաշաւող Ասանէթի աղօթքի հետ դժուար թէ պատահական լինի. նոքա, ըստ երեւութին, կարգաւորուած էին, այնպէս որ ընթերցուլը անպատճառ մի աղօթքից յետոյ կարդում էր միւսը եւ համեմատութիւնից դուրս էր բերում յայտնի համոզմունք, “պիտանի վասն հոգւոյ եւ

<sup>1</sup> Այսպիսի աղօթքներ դանուում են անվաւերականի եւ միւս մասերում։

վասն մարմնոյն, ինչպէս ասուում է Հայկական ձեռագրերում բարոյագիտական ասացուածների եւ պատմութիւնների մասին:

Որ իմ ցոյց տուած Յովեկեայ հրանի մէջ մենք իրաւունք ունինք փնտռել այն, ինչ որ Մխիթար Այրիվանեցի կոչում է Աղօնտ Յովեկեայ, ապացոյց է տալիս մի տեսակ եւ նորա գտնուած տեղը: Յովեկայ կտակը, նա է, իմ կարծիքով, Յովսէփայ Աղօթքը, եւ Էջմիածնի թ. 1755 ձեռագրի մէջ՝ ըստ Մխիթարի մերժուած գրքերի ցուցակին՝ գտնուում է Հին կտակարանի նահապետների պատմութիւնից յետոյ, թէեւ, ճշմարիտ է, ոչ անմիջապէս: Միւս կողմից նորան հետեւում է — այս տեղ արդէն անմիջապէս — Ասանէթի պատմութիւնը, նա է, իմ կարծիքով, Յովհաննէս Սարկաւագի Ասանէթի Աղօթքը: Վերջին պարագան կարող է մեզ բացատրել, թէ ինչու այնտեղ՝ որ տեղ Մխիթար Այրիվանեցու ցուցակի մէջ զետեղուած է Յովեկեայ Աղօնտը, Յովհաննէս Սարկաւագը անուանում է Ասանէթի Աղօնտ. էապէս այդ երկու զանազան Աղօթքները, լրացնելով միմեանց, կազմում են մի ամբողջ պատմութիւն՝ Յովսէփի եւ Ասանէթի մասին:

Արտաքին կողմից նոցա կապակցութիւնը, որ Հիմնուած է բովանդակութեան միութեան վերայ, յայտնի է նրանից, որ Հայոց ձեռագրերում նոքա միասին են գտնուում, ինչպէս որ պատահում է եւ հետեւեալ ցուցակներում, զոր օրինակ եւ մեր 1441 թ. ցուցակում (Էջմ. ձեռագր. թ. 1755): Այս տեղից հասկանալի է, որ Հայ գրականութեան մէջ մի քանի անգամ յառաջ բերուած անվաւերական գրքերի ցուցակների կազմովները կարող էին բոլորովին միմեանց չհակածառել, եթէ մէկը նահապետների պատմութիւնից յետոյ յիշատակէր Յովեկեայ Աղօնտը իսկ միւսը Ասանէթինը. եւ եթէ թոյլտանք այս բոլորից յետոյ, որ իւրաքանչիւրը նոցա-

նից, անուանելով մի մասը, ի նկատի է ունեցել ամբողջ Յովակի եւ Ասանեթի անվաւերականը, ինչպէս եւ այժմ տեսնում ենք, որ կազմուած է Յովակիայ Կտակից կտմ Աղօթքից եւ Ասանեթի Աղօթքից կամ Պատմութիւնից: Ըստ Հետաքրքիր կը լինէր պարզաբանել, թէ ի՞նչ համեմատութեան մէջ է գտնուում մեր Հայոց Յովակիայ Աղօթքը Յունաց համանուն անվաւերականի Հետ, որով օգտուում էր Որոգինէսը իւր Հոգու վերայ ունեցած Հայեացքի հաստատութեան համար (Richard Simon, Bibliothèque critique t. II., p. 237 եւ հմմ.) եւ որից Ներկայումս մնացել են միայն քանի մի հատուածներ Որոգինէսի մօտ (Richard Simon, l. c., q. 239. նոյնպէս տես Migne, Dict. des apocryphes, t. I, p. 705—706): Բայց իմ Հայ Ճեռագրից դուրս բերած կտորները դժբախտաբար անբաւականացուցիչ են դուրս դալիս:

---

**Գ**իտնական Ուսուցչապետին յօդուածին երկու վերջին հատուածներուն ներուի մեզ քանի մը տող լիցել:

Նախ Աղամայ եւ Եւայի մասին յերիւրեալ անվաւերական գրքերու Հայ թարգմանութենէն Պր. Մառզիտէ Հ. Զարբհանէլեանի Հետ միայն “Պատմութիւն վարուց Աղամայ եւ Եւային: Սակայն պէտք չէ կարիէրի (Nouv. Mél. orient.) եւ Հ. Զարբհ.ի Հետ (Մատղըն. Հայկ. թարգմ. նախնեաց. 1889 էջ 188) Մի. Այրիվանեցւոյ (Պատմ. Ա. Պետրը. էջ 33) “Աղամայ,, բառով՝ Աղամայ տրուած մի միակ գիրք մ'իմանալ:

Մառ ուղղելով Կարիէրի մէկ սխալն՝ կ'ըսէ թէ “Էջմիածնի մատենագարանը կայ անվաւերական գիրք մը Աղամայ վրայու: Մենք Էջմիածնի տպագրեալ Մայր ցուցակով (Թիֆլ. 1863) միայն զինեալ՝ կը գտնենք նաեւ թ. 1995 է. Պատմութիւն Աղամայ եւ Եւային որ անշուշտ զատ օրինակ մըն է Մառի տեսածէն, որ

“Պատմութիւն Հարսոցն Ադամայ եւ Եւային վերնագրով յառաջ կը բերէ, եթէ միայն կարելի է ապահովագես պնդել Մայր ցուցակի կաղմողին ճշդութեան վրայ։ Սակայն Էջմիածնի մատենադարանը կայ նաեւ աՊատմութիւն Ապաշխարութեան Ադամայ եւ Եւայի նախաստեղծին թէ որպես արարին, անվաւերականը (Մայր ցուցակ, թ. 914 էջ), որուն նաեւ Հ. Զարբհան. չէ “Հանդիպեր:”, “Ծանօթ է մեզ նաեւ այս անվաւերականին թարգմանութեան ժամանակն: Գրիգոր Տաթեւացի (Գիրք Հարցմանց, Ա. Պոլիս, 1730, էջ 544) Յովհ. Օձնեցւոյ վրայ խօսելուն առթիւ կ'ըսէ. “Այլ որ Ճ՛Ծ ամաւ եկին ի Հայք՝ Ասորիք արք քաջաբանք, եւ կամեցան սերմանել զաղանդն Նեստորի, որք նղովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին եւ թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս զԳորտոսակ, զկիրակոսակ, զՊ(օ)Ղ(ոս)ի տեսիլն, զԱրմանակ Աղալիսուննեանն եւ զԳիաթեկ զՄանկութեան Տեառն<sup>1</sup>, եւ զԱբրիոս, եւ զՃիռն օրհնութեան, եւ զԱնթաքչելի մատեանս, եւ զԱւետարանի մեկնութիւն զՄանեայ։ Եւ որ Հաւատայ նոցա նղովին:

Թէ արդեօք Ադամայ անվաւերականներէն է հետեւեալը, կամ ԺԲ նահապետաց կտակները, չենք կարող ստուգել. “Պատմութիւն նախահարց”, (Մայր ցուց. թ. 2218 է.):)<sup>2</sup>

Վերջին թ. Հատուածին մէջ Մառ ուղելով միաբանել զՄիւ. Այրիվանեցի եւ զՅով. Աարկաւագ,

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, որմէ բառ առ բառ առնուած է ամբողջ կտորս, կը դնէ (Տալ. Մոսկուա, 1858, էջ 29). “զԳիաթեկ, զՄանկութիւն Տեառն,,,” Այս թարգմանութիւնք կատարուած են ըստ Կիրակոսի՝ “ի տասներորդ ամիտեառն Աբրահամու, եւ յԼի թուին Հայոց,, Ասորւոց գալստենէն ետեւ”:

<sup>2</sup> Հայերէնագետ Ուսուցչապետն Է. Տէղա ի Բատուա կը գրէ մեզ՝ թէ Ադամայ վարուց սկիզբներն յիշուող Բարեխորհ (ա. վերն՝ էջ 25) բառին դիմաց Մառ ի ծանօթութեան կը դնէ՝ Ամալաթէս բառը, զոր կարելի էր, կըսէ Տէղա, չնայած կարդալ, եթէ Հայք այս բառը “Բարեխորհ”, կը թարգմանեն սովորաբար, այլազդ կենայ ըլլալ չնայած:

կը ջանայ ցուցընել՝ թէ Այրիվանեցւոյ յիշած “Աղօթք Յովսեփայ”, եւ Սարկաւագի “Ասենիթի աղօթքը” տարբեր են իրարմէ, եւ կը յաւելու՝ թէ “Աղօթք Յովսեփայ”, ըսուածը նոյն է “Կտակ Յովսեփայ” հետ, եւ “Ասենիթի աղօթքը” նոյն է “Պատմութիւն Ասանեթայ”, կոչուածին հետ:

Մտադիր կ'ընենք յարգելի Ուսուցչապետն, որ էջմիածնի տպագրեալ ցուցակն այս մասին ալ քիչ մ'աւելի լուսաւորութիւն կու տայ: Ասիկայ մեր առջեւ կը դնէ. (անշուշտ շատերէն միայն մէկ քանին.)

1. Պատմութիւն Յովսեփայ արդարոյ, Թ. 1737. ժե:
2. Վասն Յովսեփայ թէ ո՞րպէս վաճառեցաւ յեղբարցն յԵղիպտոս, Թ. 914 իդ. եւ Թ. 918 հհը:
3. Կտակ Յովսեփայ նահապետին, Թ. 1714 դ:
4. Կտակ Յովսեփայ վասն նախանձու: Թ. 922 ժւ. եւ Թ. 1714 դ:

5. Գիրք Յովսեփայ (°) Թ. 159:

6. Պատմութիւն Յովսեփայ եւ կնոջ նորա Ասանեթայ, Թ. 155 եւ 160:

7. Պատմութիւն Ասանեթայ: Թ. 924 ժւ:

Եթէ ասոնք հետազոտուէին, կարելի էր աւելի լուսաւոր դաղափար ունեցուիլ: Սակայն կրնանք ապահովապէս ըսել՝ որ վերոյիշեալ չորս անվաւերականնք իրարմէ զատ զատ դործեր են: Ասոր կը վկայէ մեր մատենադարանի մէկ ձեռագիրն, որ միայն այս կարգի իրեր կը բովանդակէ:

Այս ձեռագիրն (Թ. 88) գրեալ 1388ին կը բովանդակէ ի սկզբան եկեղեցականի մը գրութիւնն, որ կը նմանցընէ զՅովսէփ՝ Քրիստոսի: Կը յաջորդէ Պատմութիւն Յովսեփայ, առանց վերնագրի այսպէս՝

1. “Այս երանելիս զլ եւ զժ ամաւ վարեցաւ առաքինութեամը . . . , եւ կը պատմէ Յովսեփայ պատմութիւն մինչեւ Յակոբայ Եղիպտոս դալը: Ասոր կը յաջորդէ՝ վերնագրով,

2. “Պատմութիւն Ասանեթի զոր խօսեցաւ: Եւ եղեւ յամին յառաջնում. . . ո կը բովանդակէ Յովսե-

փայ պսակումն ընդ Ասանեթայ: Ի վերջն՝ “Եւ կատարեցաւ պատմութիւն Ասանեթայ: Կը յաջորդէ”

3. “Աւրհնութիւն խոստովանութեան Ասանեթայ: Մեղայ . . . , որ ինը տուն է: Վերջինն է՝ “Մեղայ տէր մեղայ առաջի քո ես հարսն մեծի որդւոյ թագաւորին:” Կը յաջորդէ վերնագրով”

4. “Այլափոխութիւն: Մինչեւ եկն Յուսէփ զօրաւոր Աստուծոյ . . . , որ կը պատմէ Փարաւոնի որդւոյն դէպքն: Այնուհետեւ

5. Կտակ ԺԲ նահապետաց:

Յայտնի է ուրեմն որ զատ զատ բաներ են Ասանեթի աղօթքն ու պատմութիւնն, Յովսէփայ պատմութիւնն, աղօթքն ու կտակն, որ ԺԲ նահապետաց կտակաց հետ կը գտնուի շատ աեղ:

Չեռագրիս բովանդակութենէն 2—4 հրատարակուած է (Բաշևալեա 1885—6, եւ Կարիէր, N. Mél. or.): Աւելորդ է ըսել՝ որ երկու հրատարակութեանց եւ այլ ձեռագրաց մէջ շատ տարբերութիւնք կան: Այս մասին առիթ կ'ունենանք աւելին ըսելու:

Հ. Դ. Դ.

## Ժ.

**Արգիս Շնորհալին** (ԺԲ. դար) մերժուած գլքերի թուում անուանում է Քրիստոսի Մանկութիւնը: (Մատ. Հայկ. թարգ. էջ 195, ծանօթ): Մխիթար Անեցին (ԺԳ. դար) պատմում է (Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն. ի լոյս ած Ք. Պ. 1879. Ս. Պետերբուրգ, էջ 36), որ Բ(ա)խիրան Մահմետին կարդացել է մի գիրք, որ կոչուում էր Քրիստոսի Մանկութեան գիրք: Կարելի է կարծել, թէ այդ գիրքը յայտնի էր Մխիթարին Հայերէն լեզուով: Սակաւ մի քիչ յետոյ նոյնպէս ԺԳ դարու մատենագիր Վարդանը անտարակոյս օգտուել է Քրիստոսի Մանկութիւն կոչուած անվաւերական վեպով. նա թուում է թագաւոր-մոգերի անունները, որոնք պատահում են անվաւերականում, եւ հաղորդում է

անվաւեր մանրամասնութիւններ Մանուկ Յիսուսի  
ճանապարհորդութեան մասին դէպ ի Եղիպտոս։  
(Տես Ev. Prud'homme, Extrait du livre intitulé  
Solutions des passages de l'Écriture-Sainte etc.,  
Journ. As. 1867, XI, pp. 100, 161)։ Վարդանի,  
Համառօտ Աշխարհագրութեան հեղինակի ասելով  
Փրկչի Եկեղեցու բակում, Մոկաց աշխարհում,  
գտնուում է մոգերի (անվաւեր) թագաւոր Գասպարի  
շիրիմը։ ԺԴ դարու վերջում Միսիթար Այրիվանե-  
ցին մերժուած գրքերի թուում հաշուում է Յիսուսի  
Մանկութիւնը։ (Ժամանակագր. Միսիթ. Այրիվ.  
Հրտ. Ք. Պատկ. Պետր. 1869, էջ 359։ Hist.  
Chronol. par Mkhitar d'Aïrivank, traduite par  
Brosset, S. P. 1869, p. 22)։ Այս անվաւերականի  
գոյութեան մասին Հայոց հին գրականութեան մէջ  
ի միջի այլոց վկայում է եւ իմ գտած Վրաց գրքերի  
Յուցակը, որը կազմուածէ անցեալ դարու վերջում  
կամ ներկայ դարու սկզբում։ Նորա մէջ Հայերէնից  
վրացերէն թարգմանուած ուրիշ երկերի թուում  
անուանուած է (Թիւ 177) Տիրոջ Մանկութիւնը։

Հ. Զարբհանէլեան իւր վերջին աշխատու-  
թեան մէջ (Մատենագարան Հայկ. թարգմանու-  
թեանց. Վենետիկ 1889, էջ 196 եւ հետեւ.)  
անուանում է Քրիստոսի Մանկութեան երեք ձեռա-  
գիր. նոցանից մինը, ամենահինը, այն է 1347 թուի,  
պահուում է Կտուց անապատում, իսկ միւս երկուքը  
գտնուում են Միսիթարեանց վանական մատենա-  
գարանի մէջ Վենետիկում։ Ըստ երկու վերջիններին  
Հ. Զարբհանէլեան յառաջ է բերում վերնագրերը։  
Վենետիկի ձեռագրերը պարունակում են, դատելով  
վերնագրերից, անվաւերականի Հայկական աղբիւրը,  
որ առաջ եմ բերում քաղուածօրէն եւ պատմելով  
Յուսիկ վարդապետի ձեռագրից։<sup>1</sup>

<sup>1</sup> Յուսիկ վարդապետի ձոգրը՝ որ նուիրել է Ս. Էջմ.  
վանական մատենագարանին, Թ. 244 in-8<sup>o</sup>: Գրութիւն  
երկսիւն, իւրաքանչիւրը 14, 6×4, 2 սնդ. — Տող 18.—

Մեր յիշատակարանը բաւականին զանազան-  
ում է նոյնատեսակ Եւրոպական լեզուներով եղած  
յայտնի յիշատակարաններից, ինչպէս այդ նկատեց  
Հ. Զարբհանէլեան. բայց նա, ըստ Երեւութիւն,  
կապ ունի Յիսուսի Ամանկութեան Պատմութեան  
արեւելեան աղբիւրների հետ, այսպէս օրինակ՝ ա-  
րաբական Ճայի ճայի հետ, հրատարակուած  
արդէն թարգմանութեամբ հանդերձ Հենրիկոս Սի-  
կէի ձեռքով (Trajecti ad Rhenum, MDCXCVII):  
Եթէ չեմ սխալուում, միայն արեւելեան աղբիւրների  
մէջ է պատահում զոր օր. ներկարարի մօտ պատա-  
հած Յիսուսի արկածի պատմութիւնը, որ կայ հայ-  
կական անվաւերականում։ Առհասարակ կարեւոր  
կարող է համարուել հայկական աղբիւրի հետազոտու-  
թեան համար պարսկական չուաթ حضرت حضرت طفولیت،  
որի գոյութեան մասին մենք իմանում ենք ի միջի  
այլոց եւ Angeli de la Brossseի պարսկական բառա-  
րանից Tinctoria ars բառի տակ (տես. H. Sike, l.  
c. p. 55): Որ մեր հայկական անվաւերականը ունի  
պարսկական ծագում, այդ երեւում է դլխաւորա-  
պէս այն առաջնակարգ դերից, որն ըստ այդ ան-  
վաւերականին պատկանում է Պարսից մոգ թագաւո-

կազմը՝ կաշուե. — Թուղթը՝ հաստ, մի քիչ դեղին. — Իջա-  
թիւը՝ ամէն մի տետրակին վրայ հայ տառերով։ — Գիրը՝  
նօտրդիր — Զարդերը՝ դլխատառեր միջակ մանրանկարնե-  
րով. — Գրիչը՝ Պարսամ քահանայ. — Գրութեան թուա-  
կանը՝ ՌՃԺ (1666) — Հանդամանքը՝ սկզբից պակաս է  
երկու թերթ, տեղ տեղ թերթերից կտրուած են կտոր-  
ներ, տեղ տեղ սրբուել է թանաքը. — Բովանդա-  
կութիւնը. 1. Առակների հաւաքածու, որ վերագրուում է  
Վարդանին, սակաւ բացառութեամբ նոյն լիակատար խմբա-  
գրութեամբ, ինչ որ ներկայացնում է սոյն ժողովածուի  
Պարիզեան ձեռագիրը՝ մասամբ Ա. Մարտենից հրատարա-  
կուած։ 2. Յիսուսի մանկութիւնը եւ 3. Պղնձէ քաղաքի ա-  
ռասպելական պատմութիւնը։ Այս ձեռագրի առաջին եւ Եր-  
րորդյօդու ածների վրայ ընթերցողը տեղեկութիւններ կը դանէ  
մեր այն հետազոտութեան մէջ, որ պատրաստում ենք Հայոց  
գրաւոր առակների գերայ. տես նոյնպէս մեր նկատողու-  
թիւն խորամանկ Աղուեսի եւ գայլի մասին “կենդանի Հնու-  
թեան,, (ինչ. սարինա) չորրորդ տետրի մէջ։

րին եւ առհասարակ պարսիկ ժողովրդին։ Այդ իսկ անվաւերականի օգտին են ասում փոխ առնուած խօսքերը, ինչպէս ուստան — Կա, աւելի եւս լէտն — Կաշ փայտ գնդակախաղի համար, որ պատահում է Յիսուսի Մանկութեան Պատմութեան հայ աղբիւրի մէջ։ Առհասարակ մեր յիշատակարանը գրուած է այն յետագայ դարերի գրականական լեզուով, որը յատուկ է հայկական գրաւոր հեքիաթներին եւ առակներին, որոնք, որքան յաջողուեցինձ առժամանակ պարզել, սերտ կապերով են կապուած նոյնատեսակ երկերի հետ արեւելեան ազգերի, գլխաւորապէս Պարսից եւ Արքացւոց գրականութեան մէջ։ Արժ։ Յուսիկ վարդապետի ձեռագրում բայց են թողնուած վեց գլուխ, որոնք բացառապէս վերաբերում են Մարիամ կուսին, Նորա ծնողներին, Նորա ծննդեանը, տաճարին ընծայմանը եւ այլն, որոնք կան Աւենետկի Մխիթարեանների մատենադարանի ձոգրերում։ յետոյ, ինչպէս կարելի է նկատել եւ իմ քաղուածներից, վերնագրերը ձոգրում անհոգ կերպով են դրուած։ Մերթ նոքա վերաբերում են յաջորդ, մերթ՝ նախընթաց բնագրի։ Անվաւերականը սկսուում է այսպէս։

1. “Եւ վաղիւն յարուցեալ առ զՄարիամ ուրախութեամբ սրտի առաջի իւր եւ ասէ. մեղած տեառն աստուծոյ. քանզի բաղում անդամ զբարտեցի զկուսութիւն քո սուրբ եւ ոչ յառաջ իմացա եւ ծանեա եթէ ճշմարիտ է բանդ զոր ասես. եւ մինչ իւս Յովսէփ զայս ամենայն զմտաւ ածէր խաւսէր եւ զբաղ . . . :”

Այս կէս խօսքով ընդհատուում է բնագիրը. Հետեւեալ հինգ տողերը մի փոքր էլ աւելի կտրուած են ձոգրի թերթի կտորի հետ. պահպանուած մասից իմանում ենք, որ Յովսէփին գալիս է Աննա դպիրը, որը առաջին ողջոյններից եւ հարցմունքներից յետոյ հիւրասիրուեցաւ. ճաշի ժամանակ նա նկատում է, որ Առյուր յղի է (յղի ծանրացեալ)։ Աննան

յայտնում է այդ Զաքարիա քահանայապետին, եւ Յովսէփին՝ Կուսի հետ միասին՝ դատաստան են կոչում. դատաստանում յայտնուում է նոցա անմեղութիւնը. ոչ Յովսէփ եւ ոչ Մարիամ շեղուածէին Աստուծոյ պատուիրանքներից: Ճշմարտութիւնը ակնյայտնի անելու համար ձեռնարկում են ջրով փորձելու:

“Ասէ քահանայապետն. արբուցից զջուրն յանդիմանութեան. եւ տէր յայտնեսցէ զգործն ձեր եթէ ճշմարիտ էք: Յայն ժամ առեալ քահանայապետն Զաքարիա զջուրն ի փորձութեան<sup>1</sup> ի ձեռին իւրում եւ կոչեաց զՅովսէփ առաջի իւր եւ ասէցնա. այր դու հայեաց ի ծերութիւն յալեաց քոց. եւ տես յայտնապէս աչօք քո զքեզ կենաց եւ մահու եւ մի տար կամաւ զանձն քո ի փորձութիւն եւ ի կորուստ. ասէ Յովսէփ. կենդանի է տէր եւ սուրբ է անուն նորա. որ բնաւ շար զանձնէ իմէ ոչ դիտեմ. այլ եթէ տէր կամեսցի զիս անմեղութեամբ դատել, կամք տեառն լիցին: Եւ առ ժամայն ետ քահանայապետն ըմպել զջուրն Յովսէփան եւ ասէ. գնա փութով երթալ եւ դառնալ. եւ Յովսէփ ընթացեալ գնաց եւ գա[J]ր իջանէր ողջանդամեւ անփորձ մնալով եւ իբրեւ տեսին ամնքն թէ ոչ վնասեցաւ, երկեան յոյժ:”

Չնայելով իւր անմեղութեան, Յովսէփ քաղաքի վայրահաջութիւններից եւ իւր ծանօթների արած ծաղրածութիւններից ազատուելու համար որոշեց ծննդեան ժամանակ տանել Մարիամին հեռաւոր աշխարհ:

2. “Յաղագս ծածուկ գնալոյ նոցա. երթալ ի Բեթղահեմ:”

Յովսէփ պատրաստեց պաշար, ժողովեց կահկարասիքը եւ ճանապարհ ընկաւ Ովսէ կրտսեր որդու եւ Մարիամի հետ, որին նստեցրեց գրաստի վերայ:

<sup>1</sup> Պէտք երկուսից մինը լինի՝ կամ “փորձութեան,, կոմ “ի փորձութիւն:”

Մարիամ ճանապարհին տեսիլք տեսաւ, որոնց մասին եւ խօսում էր Յովսէփի հետ, երբ նա յանկարծ ծննդեան մօտ լինելը տեսնելով, ասաց Յովսէփին:

“Ի՞նչ զիս ի գրաստէ աստի. զի մանուկն ստիպէ զիս: Յովսէփ ուրախացեալ ասէ, ուր կամիս զի տարայց զքեզ: Ասէ Մարիամ. փութա իջոյ զիս վաղվաղակի. զի նեղէ զիս մանուկս: Ասէ Յովսէփ. զինչ լինիմ արդեաւք, որ պատահեաց ծնունդ դորառ ի շէնս այլ ի տեղի անապատի եւ անմարդաբնակ. որ ոչ դոյ ուրէք աւթեւանք:”

Մօտակայքում երեւեցաւ մի այր, ուր վատ եղանակ պատսպարուում էին հովիւները խաշինքի հետ միասին: Յովսէփ թողեց այրում Մարիամին եւ Ովսէին, իսկ ինքը վաղեց մանկաբարձ որոնելու. շուտով նա հեռուում տեսաւ մէկին, որն Եւան էր. դորա հետ էլ վերադարձաւ Յովսէփի ծննդականի մօտ:

3. “Պատմութիւն յաղագսն շանացեւ սքանչելեաց որ դործեցաւ ի յայրն. ու եւն: Ծնուում է Քրիստոս հրաշքով, որ կուսի անարատութիւնն է վկայում: Եւա պատմում է հրաշքի մասին Երուսաղէմից դեռ նոր եկած մի կնոջ, բայց այդ կինը որ կոչուում էր Սողոմէ, չէ հաւատում կուսի անմեղութեանը. իբրեւ պատիժ՝ Սողոմէի ձեռքը չորանում է. երբ նա հրաշալի բժշկութիւն է ստանում, հրեշտակը հրամայում է նորան պատահածի մասին քաղաքում լուր չտարածել, որպէս զի այս ամէնը չհասնի Հերովդէսի ականջը:

4. “Յաղագս վասն հրեշտակին կոչելոյ զառ հովիւսն զաւետաւոր բարբառն եւ յայրն փութով հասեալ նոցա բաղում ընծայիւք Երկրպագութիւն տեսանելով:”

Մանրամասնօրէն նկարագրուում է այս գլխում ի միջի այլոց մողերի գալուստը Երկրպագութեան արեւելեան աշխարհներից. մողերի առաջնորդներն էին Երեք Եղբայրներ, Պարսից թագաւոր Մելքոնը, Արարների թագաւոր Բաղտասարը եւ Հնդկաց թա-

գաւոր Գասպարը : Պարսից թագաւորի ընծաների թուում գտնուում էր մի ձեռագիր ապագայ Աղքե- իր թողութեան մասին, որ տուեց Աստուած Ադա- մին իբրեւ սփոփանք կորսուած Դրախտի համար . ձեռքից ձեռք անցնելով, վերջապէս հասաւ Կիւ- րոսի ձեռքը, եւ այդ օրից ի վերնա պահուում էր Պարսկաստանում :

5. “Յաղագս վասն դալստեան տեառն քա- ռասնօրեա ի տաճարն : ” Այս գլխում ի միջի այլոց պատմուում է ութերորդ օրը թլիփատման եւ նորան Յիսուս անունը տրուելու մասին :

6. Այս գլխի վերնագիրը կպցրած է ձոգրում : Նորա մէջ պատմուում է թէ ինչպէս Բեգովը անունով “Ապօրէն մարդը Երուսաղէմ քաղաքից ” իմաց տուեց Հերովդէսին, որ մոգերը ժամանեցին այցելել Բեթղեհէմը, երկրպագել Յիսուսին եւ հեռանալ : Մանուկների կոտորածը այս իսկ գլխի յաջորդ նիւթն է կազմում :

7. “Յաղագս վասն դարձեալ նենգութեամբ Զաքարիա զհայրն Յովհաննու ” եւ այլն : Հերովդէս նոյնպէս խստիւ որոնում էր Յովհաննէս մանկանը : Զաքարիայի կինը փախաւ Յովհաննէս որդու հետ անապատ լեռները : Յովհաննէսի մօր աղօթքով դետինը բացուեցաւ եւ կլանեց մօրը՝ որդու հետ մի- ասին, տալով նրանց այդպիսով ապահով ապաս- տան : Զաքարիա հօրից ոչ մի տեղեկութիւն չստա- նալով նորա որդու ուր գտնուելու մասին, Հերով- դէս մարդիկ ուղարկեց, եւ Զաքարիա սպանուեցաւ տաճարի մէջ : Սրբութիւն Սրբոցի մէջ սեղանն ո- ղողուեցաւ Զաքարիայի արիւնով, իսկ նորա մար- մինը անհետացաւ :

8. Հետեւեալ ըստ կարգին ութերորդ ան- վերնագիր գլխում պատմուած է Յովսէփի փախուսոր Եղիպտոս Մարիամի եւ Յիսուսի հետ : Պանդուխտ- ները ընկան քառասուն յելուզակների առաջնորդի ձեռքը, որի մօտ Յիսուս Քրիստոս կատարեց մի քանի

Հրաշքներ։ Այն աւազակը, որ խաչուածէր Փրկչի  
աջ կողմը, այդ առաջնորդի Դեմաս որդին էր։

Շարունակելով իրենց ճանապարհը, քաղաք-  
ներից մէկում մանուկ Յիսուսը, որպէս զի զուար-  
ճացնէ մանուկներին եւ ցոյց տայ Իրեն, բարձր տա-  
նիքից ցած իջաւ արեւի շողի վերայով, որ թափան-  
ցում էր պատուհանից։

Մշտապէս հալածուելով Հերովդէսից, Յով-  
սէփ ընտանիքի հետ վերջապէս հասաւ մի քաղաք,  
որի դռների վերայ նկարուած էին թալիսմաններ.  
այստեղ Յիսուս զնաց Ապողոնի տաճարը նայելու։

9. “Յաղագս վասն Յիսուսի խորտակելոյ  
զկուոսն եւ կործանել զմէհեանս դիւաց. եւ բազ-  
մութիւնք մարդկան որ մեռան անդ եւ յարութիւն  
որ եղեւ։”

Յետոյ այստեղ պատմուում է թէ ինչպէս  
նոյն քաղաքում Յօվոէփին՝ ընտանիքի հետ միասին  
Հրաւիրեց մի հարուստ մարդ. այդ Երուսաղէմից  
եկած Հրէայ Եղիազարն էր, Պաղարոսի, Մարիամի  
եւ Մարթայի հայրը։ Նոքա պանդուխտներին մօ-  
տիկ ընկեր դարձան։ Հերովդէսի մահից յետոյ  
փախստականները իրեն իսկ Յիսուսի կամքով եւ  
Հրեշտակի ազդմամբ համարձակուում են վերա-  
դառնալ հայրենի աշխարհը, առաջին ժամանակնե-  
րում՝ իսկապէս նորան սահմանակից երկիրը։

10. “Դարձեալ Հրեշտակին երեւել գալ ի  
յաշխարհն իւր ‘Նազարեթ’, եւայլն։ Ճանապարհին  
դէպի ‘Նազարէթ’ պանդուխտները կանդ առան Արա-  
բիայի սահմաններում գտնուող մի քաղաքում. քա-  
ղաքը լի էր մէհեաններով. դեւերը տաճարներից  
քաղաք թափուեցան, որպէսզի բնակիչներին եկու որ-  
ների դէմ գրգռեն, բայց քաղաքացիներից ոչ մէկին  
չդտան։ Յիսուս կործանեց կռապաշտների բոլոր ա-  
ղօթատները. մանուկ Յիսուս այն ժամանակ չորս  
տարեկան էր։ ‘Նասիրով էր վարվում հասակիցների  
հետ, որոնք նոյնպէս փոխադարձաբար հնազան-

դում էին ‘Նորան’, կատարելով ‘Նորա ամեն մի ցանկութիւնը։ Յիսուս բժշկում էր մանուկներին ախտերից և հարուածներից և ամեն կերպով պաշտպանում էր նոցա։ Միանգամնորատի Արիասը, Թամարի որդին, որքնած էր բարձր պատշգամի վերայ, ցած ընկաւ և սպանուեցաւ . մանուկները երկիւղից յանցանքը ձգեցին Յիսուսի վերայ. դատաստանում իրեն պաշտպանելու համար Յիսուս գլխաւորապէս յենուում էր մի պարագայի վերայ. ուղիղ է, մանուկ-ընկերներս միաձայն վկայում են իմ յանցանքը, ասում էր ‘Նա, բայց ոչ ոք չէ վկայում, որ նոքա ճշմարիտ են ասում’։ Բայց դատաւորը անողոքելի էր . այն ժամանակ Յիսուս արդարացրեց իրեն սպանուածի բերանով, որին նա առժամանակ յարութիւն տուեց։

11. “Յաղագս վասն ելանելոյն նոցա յեղիպտոսէ և գալ ի կողմանս հարաւոյ յաշխարհն Արաբիա. տղայութիւն<sup>1</sup> զոր առնէր Յիսուս և մահուան որ եղեւ յարութիւն եւ մեռելոց”։

Արաբիայից պանդուխտները եկան Ասորւոց աշխարհը, Շահապրաւտ քաղաքը։ Յիսուս այդ ժամանակ հինգ տարուան եւ երեք ամսուան մանուկ էր։ Յիսուսի կեանքում պատահած գլխաւոր դէպքն էր Շահապրաւտ եղած միջոցին ‘Նորա արշաւանքը մանուկների հետ դէպ ի անապատ. մանուկները դիտաւութիւն ունէին որսորդութիւն անելու, բայց ոչ մի երէ չերեւեց, եւ դեռ ծարաւից ու քաղցից էլ սկսեցին նեղուել. այն ժամանակ Յիսուս փայտի հարուածով ժայռից ջուր բղխեցրեց. հոսած աղբիւրի մէջ մանուկները ի դէպ ձուկ բռնեցին եւ տուն դարձան հարուստ աւարով, բայց այդ միջոցին քաղաքից անհետացաւ Շարուհի փոքրիկ Մովսէսի որդին. ծնողները շփոթութեան մէջ ընկան, դատ բացուեցաւ.

<sup>1</sup> “Տղայութիւն,, նշանակում է՝ մանկութիւն, չարաճնիութիւն, բայց կարող է նշանակել եւ ‘արիութիւն, հերոսութիւն, կարճութիւն’”.

մեղադրեցին Յիսուսին . դատաստանում Յիսուս  
արդարացրեց իրեն դարձեալ հրաշքով :

12. “Յաղագս փոխելո՞ նոցա անդ(ի) եւ դնալ  
յերկիրն Ասորիստան՝ եւ այլն : Ասորիքիցնժդեհները  
ուղեւորուեցան դէպի Քանանացւոց երկիրը . այստեղ  
Մադիամ քաղաքում մանուկները կամեցան չար-  
շարել նորատի անծանօթին , վեցամեայ Յիսուսին .  
Յիսուս առաւ հող , նորանից շինեց մի թռչուն եւ  
կենդանութիւն տալով իւր շնչով , ազատ թռղեց , իսկ  
մանուկներին առաջարկեց բռնել նորան : Յետոյ նա  
առաւ գետնից փոշի եւ ցրուեց . օդը լցուեցաւ մժեղ-  
ներով , ճանճերով , մեղուներով ու պիծակներով , եւ  
քաղաքը հանդստութիւն չունէր : Յովսէփ եւ Մա-  
րիամվճռեցին անզուսպ Յիսուսին տալ ուսման (‘ի  
գործ արուեստի ի դպրութիւն’):

13. “Յաղագս երթալոյ նոցա յերկիրն [Քա-  
նանու] եւ տղայութեան զոր առնէր Յիսուս եւ մա-  
հուանն որ եղեւ իսկ եւ յարութեան եւ մեռելու-  
թեան զոր արար Յիսուս : ”

Խորայելացւոց երկրում , Բոդոսորոնքաղաքում  
թագաւորում էր Բարէյեսու անունով մի երկիւղած  
հրէայ : Բարէյեսուն սիրալիր կերպով ընդունեց Յով-  
սէփին , երբ նա ընտանիքի հետ միասին հասաւ Բո-  
դոսորոն , խոստացաւ նորան իւր հովանաւորու-  
թիւնը , եւ Յիսուսի կրթութիւնը յանձնեց Գամա-  
ղիէլ ուսուցին : Եօթնամեայ Յիսուս շփոթեց ու-  
սուցին իւր հարցերով եւ Գամաղիէլ չուղեց իւր  
մօտ պահէլ Յիսուսին : Յովսէփ Գամաղիէլի խոր-  
հըրդով սկսեց Յիսուսին սովորեցընել հիւսնութեան  
արուեստը . այդ միջոցին երկու անգամ Յիսուս հրաշք  
գործեց եւ երկու անգամն էլ քարշմամբ երկարաց-  
նելով փայտը Յովսէփի ձեռքում պէտք եղածին  
շափ . այդ դէպէրից մինի ժամանակ Յովսէփ թա-  
գաւորին ընծայ էր պատրաստում մի գեղեցկաքան-  
դակտախտակ (‘տախտակ մի գեղեցիկ քանդակեալ’)

իսկ միւսի ժամանակ թագաւորի պատուերով աշխատում էր պալատի շինութեան վրայ:

14. «Յաղաղս գնալոյ նոցաի քաղաքն Տապարիա, ներկութեան եւ տղայութեան զոր առներ Յիսուս:»

Տապարիա քաղաքում Յովսէփ ընտանիքի հետ միասին ապաստան գտաւ Ուղ ներկարարի մօտ: Ուղ յանձն առաւ իւր արհեստը սովորեցնելու Յիսուսին, որն արդէն ինը տարեկան եւ երկու ամսական էր: Միանգամ Ուղ ամբողջ քաղաքից պատուերներ ժողովեց, զգուշութեամբ դարսեց ներկերը եւ ինքը գիւղ գնաց դործի. Երթալուց առաջ նա պատուիրում էր իւր աշակերտին զգոյշ լինել, նայել տունը եւ խանութի իրերը («Դուքանիս իրացն»), որպէս զի ամէն ինչ ամբողջ եւ պահպանուած մնայ. «Մեզ պէտք է, ասում էր Ուղ, հաշիւ տալ քաղաքացիներին եւ գանձարանը հինգհարիւր դենար ձգելո:

Բայց հազիւ տէրը անհետացաւ, Յիսուս բացեց պահարանի դուռը, առաւ ներկերը եւ բոլորը թափեց կապոյտ ներկի տակառի մէջ. յետոյ նա թողեց տունը:

«Եւ ելեալ գնաց ըստ սովորութեան իւրումի խաղալ. ու [ւ]ր մանկունքն քաղաքի ժողովեալ էին. եւ ընդ նոսագաւտէմարտ եղեն (այսպէս) զամոլաջիլս կարճեցուցեալ. եւ տղայքն անկեալ լային ի վերայ երեսաց իւրեանց եւ ոչ կարէին կանգնել. եւ նա ձեռն դնէր եւ հաստատէր զնոսա. փչէր ընդ դէմ երեսաց տղայոց եւ կուրացուցանէր զաչս նոցա. եւ դարձեալ ձեռն ածէր եւ լոյս տայր նոցա. եւ առեալ զփայտն ի ձեռն եւ ձգէր ի մէջ տղայոցն. եւ առիւծ լինէր. զամենեսեան փախստական առնէր. եւ զորս յարեալ (այսպէս) վիշապն՝ ձեռն ածեալ եւ բժշկէր զնոսա. եւ ածէր զմատունս ի լսելիս տղայոցն եւ խլացուցանէր. դարձեալ փչէր եւ լսողութիւն ածէր. առեալ զքարն ի ձեռն փչէր եւ իբրեւ զհուր

բորբոքէր եւ ձգէր առաջի տղայոցն . կիզուր զհողն իբրեւ զխոիւ չոր . եւ դարձեալ առնէր զքարն առաջի բնութեանս (այսպէս) փոխեալ . առեալ զտղայսն միաբանեալ երթեալ յեզր ծովուն . եւ առեալ զգունդն եւ զճոկանն ընթացիւք երթա[յր] ի վերայ ջրոյն իբրեւ ի վրայ պաղի խաղալ[ե]օք : „

Մանուկները ափշած էին այն ամենով , ինչ որ տեսան . եւ գնացին պատմելու քաղաքի բնակիչներին . քաղաքացիները ժողովեցան նայելու հրաշալի մանկան վերայ : Եկաւ Յիսուսին եւ Յովսէփ՝ կշտամբելով թէ ինչու Նա թողեց ներկարարի տունը եւ մոռացաւ տիրոջ յանձնարարութիւնը : Տանը Նորան յանդիմանեց Մարիամ մայրը , թէ արդէն երեք օր է , որ Նա ոչինչ չէ անում : Յիսուս հաւատացնում էր , որ տիրոջ մօտ ամէն ինչ կարգին է , որ Նա ներկարարի բոլոր յանձնարարութիւնները կատարել է : Տէրը վերադարձաւ . տեսնելով նորան , Յիսուս ուրախութեամբ վաղեց նորան ընդ առաջ եւ խոնարհուեցաւ մինչեւ գետինը : Ուղ սիրալիր կերպով ողջունում էր նորան , բայց սաստիկ բարկացաւ , երբ նկատեց , որ Յիսուս բոլոր գոյների ներկերը առանց խորութեան նետել է կապոյտ ներկի տակառի մէջ : Յիսուս հանգստացնում էր ներկարարին , հանգստացնում էր Յովսէփին եւ Մարիամին որոնց գանդատուեց տէրը . Յիսուս հաւատացնում էր , որ Նա սովորել է այդպէս անել իրեն իսկ ներկարարից , եւ վնաս չկայ որ բոլոր ներկերը խառնուած են մի տակառում : Տէրը համբերութիւնը կորցրեց , վերցրեց մի կոփիչ եւ պատրաստուեց ծեծել Յիսուսին . Յիսուս փախաւ , ներկարարը նետեց նորա ետեւից կոփիչը եւ , վրիպելով , ընկաւ Նորա ետեւից . Յիսուս դուրս եկաւ քաղաքի դռներից , հասաւ ծովին եւ սկսեց վաղել ջրի մակերեւոյթի վերայով : Գրգռուած Ուղ սկսեց օդնութեան կոչել քաղաքացիներին . Ինձ կողոպտեց մանուկ Յիսուս կանչում էր Նա : Սկսեցին որոնել փախստականին . որոնեցին եւ ծովափին :

“Եւ ելեալ Յիսուս ի ծովէն նստէր ի վերայ վիմին ի նմանութիւն տղայոյ . գային հարցանէին քաղաքացիքն . մանուկ՝ դու ոչ ես տեսեալ Յիսուս որդի ծերոյն . ասէ մանուկն . ոչ դիտեմ . դարձեալ լինէր ի նմանութիւն երիտասարդի . հարցանէին ցնա . պատան[ե]ակ՝ դու ոչ ես տեսեալ զորդին Յովսէփա . ասէ Յիսուս . ոչ . դարձեալ լինէր ի նմանութիւն ծերոյ . գային հարցանէին ցնա . ալեւոր՝ ոչ ես տեսեալ որդի ծերոյ մի . ասէ ոչ դիտեմ : ”

Զգտնելով Յիսուսին . քաղաքացիք բռնեցին Յովսէփին եւ սկսեցին նորան տանջել : Մինչ այս մինչ այն՝ ներկարար Ուղ , տուն վերադառնալով , նկատեց իւր բակում , որ կոփիչը արմատներ է արձակել , ծածկուել է սաղարթով , ծաղկել է եւ պտուղ է տալիս . իսկ երբ սկսեց նա ներկերը հանել տակառից , տեսաւ որ մի ինչ որ հրաշքով իւրաքանչիւր ներկը պահպանել է իւր բնական գոյնը : Այս Աստուծոյ ձեռքի գործ է մտածեց ներկարար Ուղ . նա ներողութիւն խնդրեց Յիսուսից , պատմեց հրաշքի մասին քաղաքացիներին , որոնք ազատ թողեցին Յովսէփին , եւ ներողութիւն խնդրելով ընկաւ Յովսէփի եւ Մարիամի ոտքը :

16. “Յաղագս երթալոյ նոցա յԱրեմաթեա քաղաքի եւ տղայութեան զոր առնէր Յիսուս եւ մահուանն որ եղեւ իսկ եւ յարութեան եւ մեռելութեան զոր արար Յիսուս : ”

Արդէն ինն տարեկան էր Յիսուս , երբ նա խաղում էր Գալիլիայի Արեմաթեա քաղաքի մանուկների հետ . նոցա ներկայութեամբ նա հրամայում էր ժայռին խօնարհեցնել գագաթը , եւ ժայռը հնազանդում էր : Արիմաթեայում Յիսուս կուրացրեց մի պատանի , որ հալածում էր նորան , եւ նորից վերադրեց նորան տեսողութիւնը . նոյն իսկ Արիմաթեայում կրկնուեցաւ նորա հետ էապէս միեւնոյն բովանդակութիւնն ունեցող բազում անցքերից մէկը . տղաներից մինին իւր սեփական անզգուշու-

թիւնից կամ իւր ընկերների չարամտութիւնից անակնկալ մահ է հասնում, մանուկները մեղադրում են Յիսուսին, իսկ նա արդարանում է սպանուածի բերանով, որին եւ յարութիւն է տալիս. Արիմաթեայում սպանուածն էր նորատի Յովաթան Բերիայի որդին («Յովաթա որդի Բերիա»), որին ընկերները խռովութեան տաքացած ժամանակ հրեւէին ջրհորը եւ խեղդել էին:

17. «Յաղագս երկմտելոյ անդի եւ գնալ յարեւելեան լերինն եւ տղայութեան զոր առնէր Յիսուս ընդ մանկունս: »

Արիմաթեայից Յովսէփ ընտանիքի հետ յառաջ էր գնում Գալիլեայի միջով, ուր Յիսուս թափառեց վեց ամիս. Նա խօսում էր մանուկների հետ, բայց մանուկները Կորան չէին հասկանում. այն ժամանակ Նա նստաւ մի ջրհորի մօտ. մանուկները ջրի էին գալիս քաղաքից, իսկ Յիսուս առնում էր նոցանից սափորները, քարին զարնելով ջախջախում է եւ կտորները ջրհորն էր ձգում. այդպիսով Կորա մօտ ժողովուեցու մանուկների բազմութիւն. Նոքա չէին համարձակուում տուն գնալ առանց ջրի եւ առանց սափորի, սակայն յետոյ Յիսուս փայփայեց մանուկներին, հրամայեց ծովի (այսպէս) ալիքներին վերադարձնել մանուկներին ջրով լի սափորները, եւ այդպէս էլ եղաւ: Յիսուս հրամայում էր բարձր ծառերին խոնարհեցնել ճիւղերը, նստում էր նոցա վերայ ընկերներին հետ եւ նորից հրամայում էր բարձրանալ, եւ ճիւղերը հնազանդում էին: Յիսուս բժշկեց բորոտութիւնից մի երկոտասանամեայ մանուկ:

18. «Դարձեալ անդ [ի] գեղ մի գնաց. բժշկութիւն եւ սքանչելիս զոր արար ի հիւանդա: »

Յովսէփ Մարիամի եւ Մանկան հետ գնում է Եմմաւու գիւղը: Յիսուս մօտակայ Եփայա գիւղում բժշկում է բորոտութիւնից մի հրէայ մանուկ, Յուդայի ցեղից:

19. “Յաղագս վասն հրեշտակի որ աստ առնել  
Յովսեփա դնալ ի քաղաքն Նազարեթ եւ սքան-  
չելեացն եւ բժշկութեան:”

Հրեշտակը երեւում է Յովսեփին եւ հրա-  
մայում է բնակուել Նազարեթում. այստեղ Յի-  
սուս, որն արդէն տասնեւերկու տարեկանից անց էր,  
հաշտեցնում է երկու խռոված մանուկներ — Մա-  
ղաքիա եւ Միքիա հարազատ եղայրներին: Մա-  
րիամ մայրը Յիսուսի հետ արած խօսակցութեան  
մէջ յայտնում է իւր երկիւղը Նորա ապագայի վե-  
րաբերմամբ. “Մենք հոգս էինք քաշումքո մանկու-  
թեան օրերին, որ Դու շտապէիր մի որեւէ արհես-  
տով պարապելու, ” ասում էր նա, “բայց Դու  
չհնազանդեցիր եւ այժմ Դու կատարելահասակ  
այր մարդ դառար, ի՞նչ պէտք է անես Դու: ” Յի-  
սուս անբաւական էր, որ մայրն էլ չէ հասկանում  
իւր կոչումը: Պանդխտելով Գալիլիայում, Յիսուս  
բժշկեց ասորի երեսնամեայ Կիրամին, եւ անդամա-  
լոյծ ծերունի հնդկաստանիցի հրէայ Բաղտասարին,  
որ բժշկի որդի էր. նոցանից առաջինը (Կիրամ)  
բժշկուեց Բոյսբորոյն գիւղում: Յետոյ Յիսուս ժա-  
մանեց Խորտար եւ Ճոտար երկու զինուորներին  
կռուելիս: Խորտար եւ Ճոտար Արեւելքից Յիսու-  
սին երկրպագութեան եկած մոգերի զօրքիցն էին.  
այդ զինուորները մնացին քաղաքում (Երուսաղէ-  
մում) արքունի ծառայութեան մէջ, երդում տա-  
լով մինը միւսին, որ ամէն մի աւար կը բաժանեն:  
Յիսուս հաշտեցրեց նոցա:

Փրկչի Մանկութեան Պատմութեան հայ աղ-  
բիւրը ըստ Յուսիկ վարդապետի ձոդրին վերջանում  
է Յիսուսի հետեւեալ կարճ խօսակցութեամբ Խոր-  
տար եւ Ճոտար զինուորների հետ:

“Ասէ Յիսուս զինչ կամիք առնել ասացէք  
զճշմարիտն. [ասեն.] որպէս կամք քո հրամայեն.  
զի այս աւր յայտնի դատաւոր երեւեցար ի միջի մեր  
զի տեսաք զքեզ. շիջաւ բարկութիւն մեր եւ աստու-

ծոյ սէրն եկն ի վերայ մեր . Եւ ի դաւ քո առ մեզ  
ուրախացան սիրտ[ք] մեր : Ասէ Յիսուս եթէ կա-  
միք զահութիւն աստուծոյ ընկալցուք (-ջե՞ք) ի  
սիրտս ձեր . Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւ-  
իտեանս ամէն :

Կարճ ոտանաւոր աղբիւր, որը ցոյց է տալիս,  
որ հեղինակը ծանօթ էր Յիսուսի Մանկութեան  
հենց այդ իսկ խմբագրութեան հետ, դժումենք  
մենք հայ բանաստեղծ Յովասափ Սեբաստացու մօտ  
(ԺԶ դար): Նորա Հին եւ Նոր Կտակարանի չափաւոր  
մեկնութեան մէջ (Ճռդրը յօժարաբար յանձ-  
նուած ինձ բժիշկ Թ. Զաքարեանից, դ 2b — 9 Ճ.) 38 զլսի մէջ Մարիամի ծննդեան եւ Աւետ-  
ման մասին եւ 39ի մէջ Յիսուսի Քրիստոսի Ան-  
ձառելի Ծննդեան մասին կան մի քանի անվաւե-  
րական նշաններ, ի միջի այլոց յիշատակութիւն  
յանդիմանութեան ջրի մասին, բայց դորա փոխա-  
նակ նորան հետեւող գլուխները ներկայացնումեն,  
աննշան փոփոխութեամբ, Յիսուսի Մանկութեան  
մեր խմբագրութեան համապատասխան տեղի բո-  
վանդակութիւնը, բայց բովանդակութիւնը կրծա-  
տուած է . օրինակի համար յառաջ կը բերեմ ներ-  
կարարի հետ պատահած դէքը:

“Գնացեալ Տապարիայ քաղաքըն մըտին .

Անդ այր մի Խորայէլ անուն կոչէին .

Ետուն զյիսուս յարւեստ ներկարութիւն .

Եւ նայ տարեալ եցոյց ըզդործըն ներկին .

Ասէ . որդեակ, կացիր դու յայս մի տեղին .

Եւ ինքըն զընացեալ բերել կերակրին .

Եւ յիսուս ժողովեաց զամեն կըտաւին .

Եւ եդ ի մի կարաս որ սեաւ ներկ էին :

Զի լինելոց էր սեաւ կապոյտ եւ դեղին .

Ոմըն կանաչ կարմիր որդան պիտէին .

Եկեալ վարպետն ետես ի սեւ կարասին .

Բարկացաւ եւ յիսուս փախեաւ ի նըմին :

Եւ նա՛ էառ զկոփիչն ընկէց հետ նորին .

‘Նոյն ժամն արմատացեալ պըտղով ի տեղին  
Եւ յիսուս փախուցեալ ի վերա ծովին  
Երթայր անթաց ոտիւք որպէս յամաքին:  
Յայն ժամ զահի հարեալ ընդ հրաշըս բանին  
Եմուտ եհան զկըտաւսն ի միջոյ կարսին,  
Որպէս եւ տեաբք նոցա յոր գուն ուղեին՝  
Սեւ եւ կապոյտ, կանաչ, կարմիր եւ դեղին:  
Մին ասէ. կըտաւոյս իմ ներկ ոչ պիտին.  
Եհան զնորա սպիտակ որպէս զառաջին.  
Եւ որք ըղնայ տեսին կամ լըսէին,  
Զաստուած աւրհնաբանեալ փառաւորէին:”

### ՓԱ.

Աստուածածնի Տեսիլը հայ գրականութեան  
մէջ, որքան յայտնի է ինձ, կայ երկու խմբագրու-  
թեամբ. տարածուածը՝ որ կցուած է յունական  
Ամենասուրբ կուսի Յայտնութեանը<sup>1</sup> եւ որից ես  
գտել իմ երեք օրինակ<sup>2</sup>, եւ համառօտը կամ  
գուցէ կրծատուածն<sup>3</sup>, որի բովանդակութիւնն ես  
յառաջ եմ բերում ստորեւ, քաղուածով եւ մի-  
քանի տեղերի բառացի թարգմանութեամբ:

“Տեսիլ սուրբ կուսին Մարիամու աստուածա-  
ծնին զոր գրեաց սուրբ առաքեալն եւ աւետարանիչն

<sup>1</sup> Tischendorf, Apocalypses Apocryphae. Lipsiae, pp. XXVII—XXIX.

<sup>2</sup> Էջմ. Թիւ՝ 1636, 1637 եւ 1638 ձռգրեր (տես Ցուցակը). առաջին երկուսի մէջ Տեսիլը ունի այս վերնա-  
գիրը “Տեսիլ սուրբ Աստուածածնի”, որ Սուրբ կոյսը տե-  
սաւ դժոխքի վերաբերմամբ,, վերջինի մէջ — “Սուրբ Աս-  
տուածածնի հարցմունքները եւ հրեշտակի պատասխաները,,”  
իսկ Տեսլեան սկզբը բոլոր երեք ձռգրերում միօրինակ է.  
“Մտածեց Ամենասուրբ Մարիամ Աստուածածինը գնալ  
էլեօնի սարը, կանգնել աղօթքի,, եւայլն: Շատ ժամանակ  
չէ, որ կարդալով Աս. Թանգարանի Msc. Arm. թիւ 3, ես  
գտայ քարոզների մէջ այս իսկ Աստուածածնի Տեսիլը եւ  
Ա. Գրիգորի Տեսիլը: Յարմար գեպում կ'աշխատեմ աւելի  
մանրամասն տեղեկութիւն տալ այս Տեսիլների մասին ըստ  
Աս. Թանգ. ձռգրին:

<sup>3</sup> Էջմ. ձռգր Ժ. գարու՝ թիւ 1631, 85b — 90a.  
(Տես Ցուցակը:)

քրիստոսի Յոհաննէս. զի նա սպասաւորէր սրբոյն կուսին մինչեւ փոխեցաւ յաստեաց:

“Սուրբ կոյսն Մարիամմայր բանին աստուծոյ. որ հանապաղ ի բարեխաւսութիւն կայ առաջի աստուածութեան վասն ամենայն հաւատացելոց քրիստոսի. յորժամ փոխել կամէր յաշխարհէս եւ երթալ յանտրտում ուրախութիւնսն. զմտաւ էած՝ վասն հոգոց արդարոց եւ մեղաւորաց՝ թէ զի՞նչ լինին եւ կամ մեղաւորաց հոգիքն որպէս տանջին՝ եւ արդարոցն հոգիքն յորում տեղոջ զուարձեալ հանդչին:”

Աստուածածինը աղաչում է Տիրոջը հրաման տալ իրեն նայելու մեղաւորների տանջանքների տեղերը, եւ նորան՝ իբրեւ առաջնորդողներ՝ յայտնուում են Գաբրիէլ եւ Միքայէլ հրեշտակապետները:

“Բացան սանդարամետք անդնդոց եւ վարեցաւ խաւարն եւ մութն որ կայր ի վերայ մեղաւորացն: Եւ ետես ամենասուրբ կոյսն զի կային ի միում տեղոջ բազմութիւն արանց եւ կանանց որ հառաչէին եւ կոծէին ի մէջ բոցոյն: Ասէ սուրբ աստուածածինն՝ ով են այնոքիկ որ այնպէս տանջին եւ կամ զի՞նչ մեղաց են պարտականք: Ասէ հրեշտակապետն [Գաբրիէլ]՝ դոքայ են որ ոչ հաւատացին ի հայր եւ յորդի եւ ի հոգի սուրբ. վասն այնորիկ աններելի է տանջանք նոցա: Եւ հայեցեալ յայլում տեղոջ ետես խաւար սոսկալի եւ ի մէջ խաւարին երեւէին արք եւ կանայք եւ ձայնք նոցա ելանէր ողորմագոյն քան զամենայն ողբս՝ եւ ի սաստիկ խաւարէն սեւացեալ էին նոքա եւ աղաղակէին վայ ի վերայ վայի: Ասէ ամենասուրբ կոյսն. ով են նոքա որ խաւարեալ են եւ կամ զի՞նչ դառնագոյն եւ չարգործոց են մեղապարտք: Ասէ հրեշտակն. Ով սըռքուհի մայր եւ կոյս, անհնարին է նոցա տեսանել զլոյսն՝ այլ աղջամաղջին խաւարաւ ծածկին մինչեւ ի գալուստն տեառն. յորժամ որդին քո յայտնեալ

որպէս զարեգակն յերկնից ծագէ: Եւ հայեցաւ աստուածածինն յերկինս՝ եւ գոչեաց հառաջմամբ եւ ասէ. տէր իմ միածին աստուած բան հաւը՝ որ ստեամբք իմովք դիեցուցի՝ լուր աղաշանաց աղախնոյ քո եւ անուամբ զաւրութեան քո վերասցի խաւարն եւ տեսից զպատժեալն: Եւ առ ժամայն վերացաւ խաւարն եւ բացան ամենայն տեղիք տանջանացն եւ երեւեցան անթիւ բազմութիւնք մարդկան եւ լալումն եւ ողբումն գայր ի նոցանէ սաստիկ յոյժ: Յայնժամ սրբուհի աստուածածինն բազում արտասուս եհեղ. յորժամ ետես զնոսա . . . : „

Այս մեղաւորները դատապարտուած են եղել նորա համար, որ չեն հաւատացել Փրկչին:

“Ասէ սուրբ աստուածածինն ընդ հրեշտակն. եկայք երթիցուք յայս տեղի տանջանաց՝ եւ իբրեւ գնացին, տեսին գետ մի հրեղէն եւ յորձանք նորա յորդահոս. եւ կային ի նմա բազմութիւնք արանց եւ կանանց՝ ոմանք թաղեալք մինչեւ ի գագաթունս՝ եւ ոմանք մինչեւ ի պարանոցսն եւ ոմանք բնաւ ոչ երեւեին: Ասաց սուրբ աստուածածինն. ով են այդոքիկ կամ զի՞նչ գործք չարեաց նոցա որ յայս մեծ եւ յահագին տանջանս չարչարին: Ասէ հրեշտակն տեառն. որ մինչեւ ի գագաթունս թաղեալ կան. այնոքիկ են որ չարչարեցին զծնօղս իւրեանց եւ անարգեցին եւ արհամարհեցին եւ բարկացուցին սրտմտութեամբ եւ ժառանգեցին զանէծս նոցա. եւ որ մինչեւ ի պարանոցսն թաղեալ կան ի մէջ հրոյն՝ նոքա են որ ընդ որդեգիրս իւրեանց պոռնկեցան եւ ի մայր նոցա մեղանչեցին եւ զբարձրեալն աստուած բարկացուցին եւ վասն այնորիկ ընկեցան ի մեծագոյն կորուստն. եւ որ ամենայն մարմնովն թաղեալ կան ի մէջ բոցոյն՝ նոքա են կանայք չարք որ շնան եւ պոռնկին եւ յղանան եւ դեղ առեալ սպանանեն զմանկունսն. եւ թէ լինի որ գայ ի ծնունդ՝ խեղդամահ առնեն եւ սպանանեն. եւ որ մինչեւ ի մէջսն են ի տանջանս՝ նոքայ են որ եր-

դուան սուտ ի խաչ եւ յեկեղեցի եւ ի խաչելեալն  
աստուած։ Եւ ետես յայլ տեղի մարդիկ՝ զի կա-  
խեալ կային զոտից իւրեանց՝ եւ հրեղէն որդունք<sup>1</sup>  
լափէին զմարմինս նոցա։ Ասէ աստուածածինն.  
զի՞նչ մեղս գործեալ են նոքա։ Ասէ հրեշտակն՝  
նոքա են մեծատունքն որ զրկեցին զաղքատսն,  
խորեցին ի վարձուց եւ կողոպտեցին զանմեղս եւ  
եղին ի բանդի. առին կաշառ եւ թիւրեցին զդա-  
տաստան արդարոցն. հանին գոյս եւ աւազակս  
յանցս ճանապարհաց եւ սպանութիւն գործեցին  
եւ ժողովեցին ոսկի եւ արծաթ բազում ի կորուստ  
անձանց իւրեանց։ Եւ հայեղեալ յայլ տեղիս ամե-  
նասուրբ կոյսն՝ եւ տեսանէ կանայք զի կախեալ կային  
գլխիվայր եւ բանային զբերանս իւրեանց եւ թափէին  
զլեզուսիւրեանց թզաչափ եւ ելանէր բոց ծիրանի ընդ-  
բերանս իւրեանց՝ ի նմանութիւն իժ[ից] եւ օձից,  
մտանէին եւ ելանէին։ Ասէ սուրբ աստուածածինն.  
ով են այնոքիկ որ այնպէս դառն տանջանաւք չարչա-  
րին։ Ասէ հրեշտակն. նոքա են ականջադիր կանայքն  
որ պատերազմ եւ կոխւ եւ մարդասպանութիւն գոր-  
ծել տային վասն ականջադրութեան իւրեանց՝  
վասն որոյ յիրաւի են տանջանքն այն նոցա։ Ասէ  
սուրբ կոյսն՝ լաւագոյն էր մեղաւորաց թէ բնաւ  
չէին լեալ յաշխարհի եւ ոչ ունէին յարութիւն

<sup>1</sup> Արդան Այկեակցու աշխատութիւնների թուում  
գտնուում էի միջի այլոց մի յօդուած<sup>ա</sup> Աասն անքուն որդանց,,  
այսինքն հրեղէն որդանց (‘Եւ անքուն զնոսա ասացին՝ քանզի  
հրեղէնք են եւ ոչ ունին մարմինք զի ննջեսցեն ։,.) Ի վկայու-  
թիւն նոցա ճմարիտ գոյութեան յառաջ բերելով Եսայի  
մարդարէի եւ Գրիգոր Լուսաւորչի թուան, ‘Ներսէս Հայրա-  
պետի խօսքերը Արդան կարեկցութեամբ յիշում է նոցա  
գոյութեանը Հաւատացողներին. ‘Ոչ գիտեն ողորմելիքնթէ  
հրեղէնք վիշապք են՝ ահաւորք եւ սոսկալիք որ ծնանին մե-  
ղաւք մեր զոր գործեմք՝ ի դեհենական ծովն հրեղէն որ կայ  
ի ներքոյ հիմանց աշխարհի՝ որ լափեալ կիզէ եւն ։, Այս իսկ  
յօդուածում խօսուում է աշխարհիս վախճանի մասին եօթը  
դար անցնելուց յետոյ այսինքն աշխարհի ստեղծմանէ եօթը  
հազար տարի յետոյ։ (Զոդք. Լազարեան ճեմարանի, թիւ  
1172, 210b—222a թ.)

Եւ ակն այս դժուարին տանջանացս եւ զնացին ըստ  
գործոց իւրեանց . եւ երանի է արդարոց եւ բարե-  
գործաց . զի արժանի եղեն նոքա արքայութեան  
երկնից . բայց վայ մեղաւորաց զի ընկալան նոքա  
զյաւիտենից կորուստն : Արդ՝ ով եղբարք իմ սի-  
րելիք լուայք զայս ամենայն մի ըստ միոջէ եթէ  
որպէս տանջանք եւ կորուստ կայ առաջի մեր անո-  
շորմելի . աղաչեմ զձեզ մի ձանձրանայք զբարիս  
գործել զի կարող լինիցիք հասանել խոստացելոց  
բարեացն եւ անթառամ պսակաց ի քրիստոս յի-  
սուս ի տէր մեր . որում փառք յաւիտեանս ամէն :

### ՓԲ.

**Ճ.Օ.** դարու նոյն ձռդրից , որ է 1539 թու-  
ականի՝ (Էջմ. Թիւ 1631) ես դուրս բերի ոտորեւ  
առաջ բերուած Պօղոսի Տեսլեան հատուածը : Ըստ  
բնաւորութեան համասեռ Ժի դարու ձռդրերի հա-  
մապատասխան տեղելում , որոնց նկարագրութիւն-  
ները կը զետեղուին Ցուցակի մէջ (Էջմ. Թիւք 1636,  
1637 եւ 1638) , մենք չենք գտնում այդ Տեսիլը ,  
այլ գտնում ենք “Թուղթ Տեառն մերոյ Յնի Քրիս-  
տոսի , որ առաքուած էր Պետրոս եւ Պօղոս առա-  
քեալների<sup>1</sup> (ԱՊԵՏՐՈՍ ԵՒ ՊՕՂՈՍ Առաքեալների ,  
1637 թիւն է աւելացնում ) սուրբ տաճարը : ” Իսկ  
մեր յիշատակարանի վերնագիրն է “Տեսիլ Պաւղոսի  
առաքելոյն . խաւսելն ընդ հրեշտակին : Մեր դուրս  
բերածը պարունակում է նորա մասը , որ Առաքեալը  
տեսել է դժոխքում . նա կազմում է Տեսլեան եր-  
կրորդ կէոր մի քանի բաց թողնուած տեղերով , այն

<sup>1</sup> Բնագիրը տես Ցուցակում : Դատելով յառաջաբան  
եւ վերջաբան խօսքերից , որոնք ես դուրս եմ բերել այս թըղ-  
թից , մենք նորան ունինք թերեւս մի յօդուածում — Թուղթ  
Յարութեան մասին — վերոյիշեալ քարոզների ձռդիր հաւ-  
աքածուի մէջ , (Առ . թանգ . Արմ . N. 3.) որի մասին զեկու-  
ցանելու ժամանակ մենք միջոց կ'ունենանք աւելի ընդարձակ  
տեղեկութիւններ տալ Պօղոսի թղթի այդ հայ թարգմա-  
նութեան մասին :

է 99a—112b թ., որը՝ բռնելով ձեռագրում ընդ  
ամէնը 96b—113a թ., սկսուում է այս խօսքերով։

“Տեսի զբաղումն ի մէջ թանձրամած խաւարի։  
յոդոց հանի լացի եւ ասացի առ բարձրեալն։ որով-  
հետեւ տանջին։ չէր բնաւ ստեղծեալ էիր զորդիս  
մարդկան։ Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ։ Է՞ր  
լաս. միթէ դու ողորմած եսքան զաստուած։ Հայեցայ  
եւ տեսի ալեւոր մի. եւ չորս հրեշտակ ածէին զնա  
ի գետն հրեղէն։ եւ գետն մինչեւ ի սիրտն հասա-  
նէր. եւ եկն հրեշտակն եւ երեքժանի մահան ի  
ձեռին իւրում։ եւ հանէր զաղիսն ընդ բերանն նո-  
րա։ Եւ ասեմ. ով են սոքա տէր։ Եւ ասէ. երիցա-  
նին են՝ որ ոչ պաշտէին զպաշտաւն աստուծոյ։ այլ  
յորժամ յագէր ուտելոյ եւ ըմպելոյ՝ շնայր եւ մա-  
տուցանէր պատարագ աստուծոյ։ ‘Նոյնպէս եւ այլսն  
տանջանէին այնպէս։ Եւ ասեմ. ով են այսոքիկ.  
եւ ասէ. եպիսկոպոսքն են որ ոչ առնեն տեսչու-  
թիւն ըստ կամացն աստուծոյ եւ զփառս անձին իւ-  
րոյ խնդրեաց, ոչ եկաց որբութեամբ եւ ոչ գնայր ի  
շնորհն աստուծոյ՝ որ տուեալ էր նմա եւ ոչ արար  
իրաւունս որբոյն եւ այրոյն. վասն այնորիկ յաւի-  
տեան տանջին։ Միւս այլ եւս տեսանէի զայր մի.  
որ ածեալ էր հրեշտակն ի հուրն ահագին եւ  
սփոեալունէին զձեռն թագաւորեալ (թաթաւեալ<sup>o</sup>)  
արեամբ։ Եւ ասեմ. ով է սա տէր։ Եւ ասէ սար-  
կաւագն է որ կայր սպասաւոր քահանային եւ առ-  
նոյր հաղորդ եւ շնայր եւ բարի ոչ գործեաց։ Եւ  
տեսանէի զայլ ոք զի արկանէին ի հուր մինչեւ ի  
ծունկն. եւ եկն հրեշտակն եւ ածել[ե]աւ հարթէր  
զմթունս եւ զլեզու նորա։ Եւ ասեմ. տէր ով է  
սա։ Եւ ասէ գրակարդացն եւ վարդապետն որ ասեն  
զպատուիրանն ժողովրդեանն եւ ինքեանք ոչ առ-  
նեն. այլ կան անառակութեամբ. վասն այնորիկ  
տանջին։ Պարձեալ տեսի գուբու լի նշեջ հրով եւ  
ազգի ազգի տանջանարանս. զոմանս անշեջ հուրն  
եւ զոմն լի ցրտագինս սառնամանաւ՝ զոմն լի խաւ-

պրաւ (խաւարաւ) եւ զոմն լի հրացայթ շանթիւք՝  
զոմն լի ծըծմով եւ զոմն լի հրեղէն անքուն որդամբք՝  
եւ արկեալ էր անդ այրս եւ կանայս բազումն ան-  
համարս։ Եթեւ տեսի լալով ասացի ցհրեշտակն .  
ով են սոքա տէր։ Եւ ասէ. նոքայ են որ արհամար-  
հեցին զպատուիրանն աստուծոյ՝ եւ ձայնի քահա-  
նայիցն ոչ լսեցին. այլ հեռացան կամաւք իւրեանց  
եւ ելին յաստուծոյ պատուիրանացն։ Եւ տեսի զոմն  
որ տոկոս խնդրէին ի նմանէ եւ ասեմ. ով են սոքա։  
Եւ ասէ հրեշտակն. սոքա են որ վաշխ առնուն եւ  
տան։ Եւ տեսի զոմանս ի ցրտագին սառնամանիքն  
եւ կախեալ զլեզուէ եւ չար հրեշտակք որ տան-  
ջէին զնոսա։ Հարցի եւ ասեմ. ով են սոքա տէր։  
Եւ ասէ. երդմնահարք են. որ ուրացան զաստուած<sup>1</sup>  
յերդնուլն իւրեանց. վասն այնորիկ տանջին։ Եւ  
տեսի պարիսպ հուր եւ անդ արկեալ էր բազում  
այրս եւ կանայս. եւ գազանք ծամէին զլեզունոցա.  
եւ ասեմ. ով են սոքա տէր։ Եւ ասէ հրեշտակն .  
բամբասողքն են։ Հայեցայ եւ տեսի այրս եւ կա-  
նայս զի արկեալ էր ի գուբ խաւարի. եւ ասեմ. ով  
են սոքա տէր։ Եւ ասէ. սոքա են որ ատեցին զպահո-  
եւ զաղաւթո։ Եւ տեսի զոմանս արկեալ ի խաւա-  
րուտ տեղոջ եւ կապեալ զոտս եւ զձեռս նոցա. եւ  
այնպէս տանջէին զնոսա։ Եւ ասեմ. ով են սոքա  
տէր։ Եւ ասէ. սոքա են անողորմքն. որ աղքատաց  
ոչ առնեն ողորմութիւն . . .

<sup>1</sup> Երդմամբ Աստծուն ուրանալը լինում էր զանազան  
տեսակ, ինչպէս այդ տեսնուում է Վարդան Այլէակցու եւ  
հետեւեալ տեղից, Զարարանութեան մասին թղթում.  
(Եջմ. թիւ 1767, բ 3ա թ.) “Որ սուտ վկայէ. ընդ պոռնիկան-  
դատելոց է եւ որ երդնուուրացութեամբ ընկերէ մարդասպա-  
նին եւ ուրացութեամբ երդմունք այսոքիկ են. որ ասէ թէ  
ապիզար է ի հաւատոյն կամ ասէ թէ զշուն է պաշտել(եալ)  
կամ զսուտ [ասէ] կամ ծիր հանէ յանուն դիւաց կամ ոսկը  
առնէ (առնու<sup>2</sup>) եւ երդուի կամ ջրով լոյս անցուցանէ։  
Խոկ ի խաչ եւ յեկ[եղեցի] թեթեւ է քան զայնոսիկ. բայց  
Քրիստոս յոյսն մեր բնաւ հրաժարեցոյց յերդմանէ մինչեւ  
ի մազ մի գլխոյ,, եւն։ Այստեղ յոյց տրուած սնապաշտա-  
կան սովորութիւնները ծրով եւ ոսկրով նոյնպէս լուսով ու  
ջրով ինձ անյայտ են։

“Եւ տեսի զտարտարոսն ներքինս. Եւ ի նմա  
 էին այրս եւ կանայս բազումս. Եւ վիշտպք ծծէին  
 զականջս նոցա: Եւ ասեմ. ով են սոքա տէր: Եւ  
 ասէ. սոքա են որ յաւուր կիրակի հեշտացան յան-  
 կողինս իւրեանց եւ ոչ լուան զձայն սուրբ աւետա-  
 րանին՝ վասն այնորիկ տանջին: Հայեցայ ի տարտա-  
 րոսն այն եւ տեսի ալեւորք եւ գոյն նոցա ի գոյն  
 արեան: Եւ ասեմ. ով են սոքա տէր: Եւ ասէ. սո-  
 քա են անդարձ ծերքն որ ոչ զղջացան եւ ոչ խոս-  
 տովանեցան զմեղս իւրեանց այլ անդարձ եւ ան-  
 խոստովանութեամբ մեռան. վասն այնորիկ տանջին:  
 Եւ տեսի այլ գուբ հրոյ անշէջ եւ արկեալ էին անդ  
 [այրս եւ] կանայս բազումս. Եւ ասեմ. ով են սոքա  
 տէր: Եւ ասէ. սոքա են որ կին ունին եւ շնան. Եւ  
 կանայքն ունին այրս եւ շնան եւ կամ ատեաց այր  
 զկին[ն] եւ կին զայր[ն] իւր եւ ոչ յիշեցին զքրիս-  
 տոս որ վասն նոցա խաչեցաւ. վասն այնորիկ տան-  
 ջին ի հուրն յաւիտենից: Եւ տեսի այրս եւ կանայս  
 ի տեղոջ սառինն՝ եւ հատեալ զոտս եւ զձեռս նո-  
 ցա. Եւ որդունք մեծամեծք ուտէին զնոսա եւ էին  
 որդունքն կանգուն երկու. իբրեւ տեսի լացի եւ ա-  
 սեմ. ով են սոքա տէր: Եւ ասէ. սոքա են որ զորքս  
 եւ զայրիս զրկեն ի զուր եւ ի տունս իւրեանց ժո-  
 ղովեն. վասն այնորիկ տանջին հրով: Եւ տեսանէի-  
 ի պապակի եւ շտային ըմպել նոցա ջուր եւ կամ  
 կերակուր: Եւ ասեմ. ով են սոքա տէր: Եւ ասէ.  
 սոքա են որ յաւուր կիրակէի ուտէին զկերակուր  
 իւրեանց՝ եւ ոչ տային աղքատաց. վասն այնորիկ  
 տանջին: Եւ տեսի այլ տեղի. եւ անդ էին արք եւ  
 կանայք բազումք. Եւ գոյնք նոցա որպէս զարեան՝  
 եւ արկեալ էր անդ ի խորխորատ՝ եւ նա լի էր ծծը-  
 քով եւ ի վերայ կարկուտ սաստիկ եւ օդ սառնամա-  
 նուտ խաւարի: Հարցի եւ ասեմ. ով են սոքա տէր:  
 Եւ ասէ. սոքա են որ գործ անաւրէնութեան գոր-  
 ծեցին. վասն այնորիկ անողորմ տանջին: Տեսի անդ  
 եւ այլ տեղի՝ եւ անդ էին արք եւ կանայք՝ եւ թե-

թեւ էր տանջանք նոցա՝ ունէին հանդերձ սպիտակ  
 եւ աչք նոցա կոյր եւ արկեալ զնոսա [ի] խորխորատ  
 խաւարի : Եւ ասեմ . ով են սոքա տէր : Եւ ասէ .  
 սոքա են հեթանոսք որ գործէին գործս բարիս եւ  
 զխաչեալն աստուած ոչ ճանաչէին . վասն այնորիկ  
 կան ի տանջանս : Հայեցայ եւ տեսի արս եւ կանայս  
 ի վերայ գաղանաց՝ եւ էին իբրեւ զվիշապ եւ ու-  
 տէին զնոսա . եւ հրեշտակքն որ կային ի վերայ  
 աւելոյր ի տանջանս եւ ասէր . իմացարուք թէ գուցէ  
 գատաստան արդար աստուծոյ : Եւ ասեմ . ով են  
 սոքա տէր : Եւ ասէ . կանայք են որ ապականեն  
 զօտեղծուածս սուրբ պարտելով (պատրելով) զմար-  
 դիկ ի կորուստ եւ գործել տան զչարիս եւ յղանան  
 եւ սպանանեն զմանկունս յորովայն իւրեանց եւ  
 արքն այնոքիկ են ընդ նոսա . եւ մանկունքն կային  
 առաջի աստուծոյ եւ ասէին՝ վրէժ առ ի ծնողաց  
 մերոց՝ զի ետուն զմեղ կերակուր շանց եւ գաղանաց :  
 Եւ հրեշտակն որ շրջեցուցանէր զիս յամենայն տան-  
 ջանս մեղաւորաց՝ եւ տեսանէի զամենայն որ անդ  
 կայր : Յետ այսորիկ տեսանէի այլ տանջանս . էր  
 անիւ մի իբրեւ զբոց հրոյ՝ եւ ածէր հրեշտակն այլու  
 եւ կանայս , զայրս ի լեզուացն կախեալ եւ զկանայս  
 ի հերացն՝ եւ պապակէին սաստիկ ի հրոյն եւ գոյր  
 ձայն ի յանուոյ անտի որ ասէին միաբան անձինք  
 նոցա՝ ողորմեաց մեղ տէր . զի այժմ ծանեաք զժա-  
 մանակ ապաշխարութեան : Իբրեւ տեսի լացի եւ  
 ասացի՝ լաւ էր մեղաւորաց թէ չէին ծնեալ յեր-  
 կրի : Եւ ասէ հրեշտակն՝ եկ զկնի իմ եւ ցուցից  
 քեզ մեծամեծ տանջանս՝ եւ առ զիս յարեւելից  
 կուսէ ամենայն տանջանացն եւ կացուց զիս ի վերայ  
 գրի մի եւ գուբն կնքեալ էր եաւթնպատիկ : Ասէ  
 հրեշտակն որ մերձ կայր առ իս ցհրեշտակն որ կայր  
 ի վերայ գրին . բաց զբերան գրին զի տեսանէ զդայ  
 գաւզոս սիրելին աստուծոյ քան զի հրաման առւ-  
 եալէ գմայ զամենայն տանջանս տեսանել : Եւ հրեշ-  
 տակն ի տեղոյն ի բաց եկաց եւ ասէ . ոչ կարես

ժուժել հոտոյն։ Եթեւ եբաց զգուքն դժոխոց՝  
ել հոտն դառն եւ դժընդակ քան զամենայն տան-  
ջանացն։ Հայեցայ ի գուքն այն։ Եւ էին դնդակ  
գնդակ ի վերայ։ Եւ տեսի ի ներքս ի գուքն այլ  
գուք ազգի ազգի։ Եւ արկեալ էին անդ այրս եւ  
կանայս՝ շուրջանակի տանջանս։ Եւ ասէ հրեշտակն  
որ խաւսեցաւ ցիս։ ի միտ առ եւ տես։ զի յորժամ  
ընկենուն զոք աստ։ այնուհետեւ դնեն զմատանին  
ի վերայ նորա եւ ոչ ելանեն յաւիտեան։ Եւ ասեմ.  
ով են սոքա որ արկեալ են ի գուքս այս։ Եւ ես  
պատասխանի հրեշտակն եւ ասէ։ սոքա են որ ոչ  
հաւատացին զքս մարմնով եկեալ յաշխարհս եւ  
աստ տանջին յաւիտեան (112b)։”

### ԺԳ.

Պօղոսի Տեսիլքից յետոյ ի դեպ կը լինի ներ-  
կայացնել Պետրոս առաքեալի Երազի բնագիրն ու  
թարգմանութիւնը Պօղոս առաքեալի մեկնութեան  
հետ միասին, շարադասուած կենդանի ոտանաւոր  
ձեւով, մասսամբ ժողովրդական լեզուի ոճով։ Ես նո-  
րան առել եմ վերոյիշեալ (տես էջ 2—5) առժա-  
մանակ իմ մօտ գտնուած վերջին դարերի (ԺԳ—ԺԷ)  
հայ բանաստեղծների բանաստեղծութեանց ձեռա-  
գիր հաւաքածուից։ Բանաստեղծութեան հեղինա-  
կի անունը ինձ անյայտ է։

“Պետրոս յերազ է տեսեր.

Ելեալ պատմէր Պաւղոսին։ Դ կրկնեա.

Փոքրիկ այգի մի տեսայ.

Փոքրիկ հընձան մի վերայ.

Փոքրիկ հընձանին վերայ

Բարակ առւակ մի տեսայ.

Յայն բարակ առւին վերայ

Նոր բարունակ մի տեսայ.

Նոր բարունակին վերայ

Ոսկի ողկոյզ մի տեսայ.

Ոսկի ողկուզին վերայ  
 Խայտ աղաւնի մի տեսայ: գ կրկնեա:  
 Պատասխանեալ Պաւղոսին.  
 Պետրոս, երազդ ի բարին.  
 Հրեշտակային է տեսիլդ.  
 Զփռքրիկ այգին որ տեսար՝  
 Յերուսաղէմ քաղաքն է:  
 Զփռքրիկ հընձանն որ տեսար՝  
 Սողոմոնի տաճարն է.  
 Զբարակ առուն որ տեսար՝  
 Գետ Յորդանան աղբիւրն է.  
 Զնոր բարունակ որ տեսար՝  
 Աստուածածին սուրբ կոյսն է.  
 Զոսկի ողկոյզն որ տեսար՝  
 Եւր միածին որդին է:  
 Զխայտ աղաւնին որ տեսար՝  
 Մըսիթարիչ հոգին է:  
 Պետրոս, երազդ ի բարին.  
 Հրեշտակային քոյ տեսիլդ: „

### Ժ.Պ.

Աստուածածնի եւ Պօղսս առաքեալի Տե-  
 սիլքների հետ ձեռագրերում գտնվումէ մի Պատմու-  
 թիւն, թէ ինչպէս Հայոց Լուսաւորիչ Սուրբ Գրի-  
 գորը հարց ու փորձ էր անում Աստուծոյ սուրհան-  
 դակին այսինքն Հրեշտակին, երբ նա դեռ Մանեայ  
 այրումն էր գտնվում<sup>1</sup>, կամ ըստ այլ ձեռագրաց<sup>2</sup>,  
 Գրիգոր Լուսաւորչի Հարցմունքները եւ Հրեշտակի  
 պատասխանները: Այս մի պատմութիւն է, թէ  
 ինչպէս մի անգամ Ա. Գրիգորը անապատում եղած

<sup>1</sup> Պատմութիւն սրբոյն Գրիգորի եւ այլն. ձոդը. Եջմ. Թիւ 1631, 90a—96b:

<sup>2</sup> Չոդը. Եջմ. Թիւ 1636 (Հարցմունք սրբոյն Գրիգորի լուսաւորչի եւ պատասխանի Հրեշտակին վասն որդւոց (ոգւոյ) մարդկան. Թղ. 125b—144a), եւ 1637, Թղ. 20a—26b եւ 1638, Թղ. 1a—23b:

ժամանակամիջոցին սկսեց մտածել մեռած հոգիների վիճակի մասին եւ, քառասուն օր եւ գիշեր պահք պահելուց յետոյ՝ այնպէս որ “քառասուն օր եւ քառասուն գիշեր ոչ հաց էր ուտում եւ ոչ ջուր էր խմում”, ոուրբը խնդրեց Աստծուն, որ նա ուղարկէ մի հրեշտակ, որը ցոյց տար իրեն արդարների եւ մեղաւորների տեղերը։ Գրիգոր Լուսաւորչի այս Տեսլեան մէջ իմ ուշադրութիւնը զրաւեց հոգու եւ մարմինի խօսակցութիւնը, որն ես զետեղում եմ ստորեւ (ըստ Էջմ. ձոգր. թիւ 1631, 90a—92b) յառաջ բերելով բնագիրն ու թարգմանութիւնը հանդերձ մի քանի նոյն կամ համանման նիւթի վրայ զրուած հայ բանաստեղծութիւններով, որոնք, որքան ինձ յայտնի է, առաջին անգամն են տպագրուում, լրացնել Վէճերի գրականութեան յայտնի շրջանը։

Գրիգորի Տեսիլը իւրբնութեամբ համանման է սուրբ Մակարի Տեսլեանը եւ վերջնիս նմանող Պողոս առաքեալի Տեսիլքից դուրս բերած հատուածին. (Տես Թ. Բայոշկովъ, Сказания о спорѣ души съ тѣломъ, Журн. Мин. Нар. Просвѣщ. 1890—91):

Հոս հեղինակի այդ Տեսիլը ազգային սուրբին վերագրելը հեշտութեամբ կարող էր լինել, ինկատի առնելով այն հանգամանքը, որ Հայոց Լուսաւորիչը, ըստ վարուց, ճիշտ որ տեսել էր Տեսիլք, թէպէտ եւ այլ բովանդակութեամբ (Ագաթանգեղոս, Հայ բնագրի Ճի. Թիֆլիզ 1882, էջ 427 եւ Հետեւ.): Էջմիածնի ձեռագրերի թուականը, ուր զետեղուած է այս յիշատակարանը, ՓԶ դարից չէ անցնում։ Յիշատակարանը, ինչպէս երեւում է, Հայոց մէջ ժողովրդականութիւն էր վայելում։<sup>1</sup> Քարոզների մի ձեռագիր ժողովածուի մէջ (ձեռ. 1620 թ. Ասիական Մուղ. Թիւ 3) ամենածանր մեղքի վրայ խօսուած մի քարոզի մէջ այս տեսիլից

<sup>1</sup> Նա կայ եւ գրացերէն թարգմանութեամբ (Տես Վրաց “Իվերիա”, լրագիրը 1891 թիւ 118.):

վեայութիւններ են յառաջքերվում։ Զեռաղրի մէջ կարդում ենք. (7, 2a)

“Եթէ ասէ մարդ թէ փոքր մեղք ունիմ. ի՞նչ խոստովանիմ. այլ այն է մեծ առաջի աստուծոյ. որպէս Գրիգոր Լուսաւորիչն հարցուց զհրեշտակն թէ որ մեղքն մեծ է առաջի աստուծոյ. եւ հրեշտակն ասէ. զոր մարդ փոքր համարի եւ ոչ խոստովանի. այն է մեծ առաջի աստուծոյ. եւ զմարդն ամաւթով առնէ” եւն :

Գրիգոր Լուսաւորչի այս հարցմունքը հրեշտակի բացատրութեամբ հանդերձ գտնում ենք մեր Տեսլեան մէջ, որից ես այստեղ, ինչպէս վերեւումն է ասուած, յառաջ եմ բերում միայն հատուածը, որպարունակում է մեղաւոր հոգու վէճը մարմնի հետ։ Ա. Գրիգորի հարցին, թէ ի՞նչ են անում հրեշտակները մեղաւորի հոգին, երբ առնում են նրան, հրեշտակը պատասխանում է. “Երբ որ մենք պատրաստում ենք առնելու մեղաւորի հոգին, հոգին մարմնի հետ վէճի է բռնվում, եւ այստեղ իսկ հրեշտակը փոխաբերում է ամբողջապէս հետեւեալ խօսակցութիւնը կամ հոգու եւ մարմնի վէճը” :

“Պատասխազի հոգին ընդ մարմինն եւ ասէ. զի՞նչ գործեցեր, ովք մարմին. յաւիտենական հրոյն կերակուր արարեր զիս. այսպէս թուէր քեզ թէ յաւիտենական էիր յաշխարհի եւ ոչ մեռելոց։ Մարմինն առ հոգին խաւսի եւ ասէ. մի այդշափ մեծաբաներ եւ ինձ մեղադիր լինիս՝ զի յամենայն չարիս դու յառաջ յաւժարէիր եւ ցանկայիր խորհրդով եւ բանիւ՝ եւ ես գործով կատարէի. եւ յորժամ ցանկութեամբ բորբոքէի՝ ոչ արկանէիր զջուրն եւ շիջուցանէիր զհուրն յինէն։ Ասէ հոգին. ես ցանկայի միայն՝ եւ դու զչար գործոն կատարէիր՝ յուտել, յըմպել, ի շնալ, ի պոռնկել, ի յադել, ի գողանալ, ի սպանանել. եւ ոչ յիշէիր զահեղ եւ զանաշառ գատաստանն աստուծոյ։ Պատասխանի տայ մարմինն եւ ասէ. ինձ ընդէր մեղադիր լինիս՝

ես քո տաճար էի եւ բնակարան . որպէս վող ի  
 ձեռն արուեստաւորի կամ որպէս երասմակ ձիոյ՝  
 զի ընդ որ կամեսցի՝ ընդ այն ուղղեսցէ : Ասէ հոգին .  
 ես քեւ յաւժարէի յամենայն մեղս եւ ի շարիս :  
 Ասէ մարմինն . եւ արդ դու մի պարծիր . զի պոռն-  
 կութիւն մարմնոյն է եւ շնութիւն եւ սպանութիւն՝  
 եւ նախանձ եւ սնտպարծութիւն , սնափառութիւն ,  
 հպարտութիւն հոգւոյն : Ասէ հոգին . եթէ այդ  
 այդպէս իցէ , ապա վայ մեղաւորացս եւ եղիելեացս՝  
 արդ ի միասին գործեցաք զւարիս . ի միասին տան-  
 ջելոց եմք ի հուրն անշէջ . զի տեղի ունէաք սեր-  
 մանելոյ եւ ոչ սերմանեցաք զսերմն բարի . եւ աւ-  
 ուրք էին գործելոյ զբարի եւ ոչ գործեցաք : Արդ  
 վայ մեղ զի անկաք յերանութենէ կենացն . տեսա-  
 նէաք զի այլք գործէին զբարիս եւ մեք ծաղը առ-  
 նէաք եւ ոչ գիտէաք թէ այդ առաջի կայր մեղ .  
 գոշէին քահանայքն առաջի մեր եւ մեք ոչ լսէաք  
 եւ ոչ եմուտ պատգամն աստուծոյ յականջս մեր :  
 Յորժամ ասէին վասն գեհենոյն՝ մեղ իրրեւ երազ  
 թուէր՝ անաւրէնեցաք եւ ոչ յիշեցաք զահեղ եւ  
 զանաշառ՝ դատաստանն աստուծոյ . արդար են դա-  
 տաստանքն աստուծոյ եւ ոչ դոյ ակնառութիւն ա-  
 ռաջի նորա եւ հատուցանէ բատ գործոց իւրաքան-  
 չիւրոյ : Յայն ժամ հեծելով եւ հառաշելով՝ ասէ  
 հոգին ընդ մարմինն . արդ վայ ինձ . զի՞նչ լինիմ ես .  
 զի սարսեալ եմ եւ դողամ ի գնալս իմում ի վեր  
 եւ ոչ իշխեմ հայել ի հրեղէն զաւրութիւնս՝ զի  
 կոփելով եւ ձաղելով տանին զիս : Ասէ մարմինն .  
 կորեայ . զի՞նչ լինիմ ես . զի որպէս ամուր եւ գե-  
 ղեցիկ աշտարակ էի եւ փլայ՝ երկեաւ եւ զարհու-  
 ցաւ սիրտ իմ եւ եղէ հաւասար գետնոյ . գնայուն  
 էի եւ անշարժ եղէ . խաւսունս եւ իմաստունս յի-  
 մարեցայ . ապականեցաւ , պակասեցաւ պայծառ եւ  
 գեղեցիկ գեղ վայելսութեան իմոյ . եղծաւ կառա  
 ցանկալիս բազմաց . խաւարեցան աչք իմ՝ պայծառ  
 եւ գեղեցիկ եւ լուսաւոր . սեղմեցան եւ խլացան

Դրունք լսելեաց իմոց . Հատաւ բարբառ ի բերանոյ . կորեաւ բանք ի շրթանց իմոց : Ասէ հոգին՝ ես զի՞նչ լինիմ . զի ի հրակերպից հրեշտակացն սարսեալ եմ . ի վեցթեւեան սերովբէից դողամ եւ ի դատաւորէն զահի հարեալ եմ եւ սարսիմ յահէ նորա : Ասէ մարմինն եւ ես զի՞նչ լինիմ զի յերկիր անկայ . մանըցայ եւ ընկրկեցայ ի գուբ՝ եւ լինելոց եմ կերակուր որդանց : Ասէ հոգին՝ էջ լսեայ եւ հանգիր մինչեւ ի գալուստն դատաւորին քրիստոսի . մի թէ յաղղէ մերմէ հանդիպի ի դպրութիւն կամ ի քահանայութիւն կամ ի գործս արդարութեան որ յիշեն զմեզ ի ձեռն եկեղեցւոյ՝ կամ ի պատարագ կամ յողորմութիւն . միթէ ողորմի աստուած եւ թողութիւն շնորհեսցէ յանցանաց մերոց : „

ՓԳ դարու բանաստեղծ Խաչատուր Կեչառուեցու բանաստեղծութիւնների մէջ մենք գտնում ենք մի քանի տուն<sup>1</sup>, նոյնպէս նուիրուած հոգու եւ մարմնի վէճին :

“Հոգիս դատախազ լինի մարմնոյս<sup>2</sup>  
Կեղուկ տայ սրտիս,  
Թէ էր կուտեցեր չարիս  
Յանցաւոր յայս սուտ յաշխարհիս:  
Կամ էր կորուսեր դու զիս  
Եւ յանշէջ կրակ դրեր զիս.  
Այն աւր որ հաշիւ լինի,  
Դու այրիս ւանզերծ տանջեն զիս:  
Մարմնոյս պատախան այտ  
Որ ի տալ մտացո եւ հոգոյս.  
Կզի[ս] սպասաւոր էր առնես.  
Այդ սուտ զուր է իմ խոցերիս (խոցելոյս).  
Ես ձի եւ դու տէր ձիոյս.  
Ես ծառայ ւիշխան դու գերոյս.”

<sup>1</sup> Էջմ. ձոգր. Թիւ 86, ժզ 6ա—6բ էջ: Համարատելը ինձ է պատկանում:

<sup>2</sup> Զոգրում — զՀոգիս դատու խա[զ լ]ինիմ մարմնոյս

Կամելու քո. գործ՝ լինի ինձ.  
Մեղ էր<sup>1</sup> դնես հողածնոյս:  
Աշխարհս էր ի ծով նման.  
Զիս ի վայր տարաւ և յանդիման.  
Կենցաղս էր ալեաց նման.  
Զիս ի մէջ էառ քան զընդան:”

Ես բաց թողի վերջին տունը. նորա մէջ խօսմում է զղջման (փոշիման) վերայ, որպէս կեանքի հետեւանքի մասին, որ նմանեցրած է մի ամառուան մէջ ծաղկած եւ թարշամած ծաղկին. վէճի շարժառիթին նա ոչինչ չի աւելացնում:

Մահուան ամենազօրութեան վրայ խօսում է բացադարձութեամբ ԺԵ դարու վերջի հայ մատենագիր Յովհաննէս Թուլիուրանցին ուղիղ Տաղ Թուլիարանցու<sup>2</sup> խորագրուած բանաստեղծութեան մէջ, ասելով թէ ինչպիսի սարսափ է տիրում իրեն ամէն անգամ մտաբերելով մահը, որը նորան թւում է “բոլոր թոյներից ամենադառնը”. բանաստեղծը շարունակում է:

“Սողոմոն յիշեաց ըղքեղեւ ասաց. եղուկ վայ եմ ես.  
Նախատեաց զիմաստութիւն. քան զանդէտ աղքատ  
մեղայ ես.

Անմեղք ի յաշխարհս ելի եւ մեղօք երթամ սեւ  
երեսս:

Սողոմոն արքայ ասաց. մի ասեր թէ արքայ եմ ես.  
Ունիմ շատ դրախտ, շատ գանձ, շատ դարպաս եւ  
ոսկի ի ներս:

Ի զուր խռովեալ գանձես. ոչ դիտես թէ ում ժուցիվես.

Զաշխարհս ես ի զիրկս առեր, քեղ ի (քեղի) խոր  
դժոխս կու փորես:

Է մահ թէ դու քէն ունիս ադամայ, յորդիս կու  
հանես

<sup>1</sup> Զոդրում — մեղեր:

<sup>2</sup> Եղմ. ձոդրից թիւ 86, ժղ 4a—4b էջ:

կամ մեղաց հարուած ես դու, ի մահու պաղէն  
ծնեալ ես :

Մովսէս մարգարէն չասեսւի դաւթայ իսկի չամաչես:  
ԶԱԲՐԱՀԱՅԻՆ հայր տանիս, զիսահակ ի հողն աճըռես  
ԶՏՐԴԱՄ աթոռոյն ձգես, զկոստանդին ի յաշք  
չըերես.

Թէ կանկել է հազար հեծել եւ ժողովք, իսկի չի  
վախես:

Թէ հագել է վեց զրեհ, նետ նետես ի թափն  
անցնես.

Առնես զնայ, ի բանդ ածես, դէմ դռան քար մի  
դու ձգես:

Արծիւ ես, յերակ թռչիս, լայնայձիդ զթեւդ տա-  
րածես:

ԶԵՆ աշխարհս հզաւը մանուկ ւի թեւի ծ[ր]արս  
ծրարես:

Հազար երանի նորա որ բարի գործով դտանես.  
Հեղեղ ըզնայ է տարեր, ի մեղաց մէջն զով բռնես:  
Յովաննէս թուրկուրանցի, զուր կասես, զայլ ոք  
խրատես.

Եաւթանասուն տարի լցեր ի մեղաց մէջն կացեր ես:”

ԺԶ դարու բանաստեղծ Գրիգոր Աղթամար-  
ցին, որը սիրում էր պարծենալ իւր լեզուաբանական  
գիտութիւններով, եւ բանաստեղծութիւններ էր  
զրում խառն երեք լեզուներով, մայրենի լեզուով,  
պարսկերէն եւ տաճկերէն, հոգու մարմնից անջա-  
տուելուն մի բանաստեղծութիւն է նուիրել, այս  
անգամին հայ լեզուով, որը ձոգրում<sup>1</sup> խորագրուած  
է այսպէս “Գեղեցիկ Տաղ հոգու եւ մարմնի այգու  
վերայ:”

<sup>1</sup> Էջմ. Թիւ 86, ԺԹ. 12a Թս Տաղ գեղեցիկ ի վերայ  
այգոյ հոգոյ եւ մարմնոյ: Այս բանաստեղծութիւնը տպա-  
գրուած է Հայոց ժողովուդական երգերի թւում (Armen.  
popular Songs by the P. Leo M. Alishan. Venice 1852 թ.  
pp. 18—25), բայց մի ուրիշ օրինակում առանց հեղինակի ա-  
նուան եւ ըստ երեւութին սրբագրուած ուղղագրութեամբ:

“Ամէն առաւաւտ եւ լոյս  
 Պըլպուլն ասէր. եւ այգուս.  
 Զեմ ելներ ես այս յայգուս.  
 Յայս իմ նորայտունկ այգուս:  
 Քար իմ(-եմ) բերեմ(-եր) գետերուս.  
 Փուշ եմ բերեմ(-եր) սարերուս.  
 Ցանկ եմ շիներ այս այգուս.  
 Ինչպէս ելնեմ ես յայս յայգուս.  
 Յայս իմ նորայտունկ այգուս:  
 Տունկ եմ տնկեր այս յայգուս.  
 Տունկ եմ բերեմ(-եր) այս այգուս.  
 Դեռ չեմ կերեմ(-եր) այս պտղուս.  
 Այս իմ նորայշէն տնկուս(<sup>՞</sup>).  
 Ինչպէս ելնում ես այս յայգուս.  
 Յայս իմ նորայտունկ այգույս:  
 [Հ]ընձան իմ(եմ) փորեր այգոյս.  
 Կարաս եմ լցեր զինուս:  
 Դեռ չեմ խմեր այս զինուս.  
 Կասեն թէ արել եւ յայգուս.  
 Ինչպէս ելնեմ ես յայս յայգուս.  
 Այս [իմ նորայտունկ այգոյս]:  
 Հրեշտակն եկ խնդիրն հոգուս.  
 Յահէն կապեցաւ լեզուս.  
 Կասեն թէ արել եւ յայգուս.  
 Ինչպէս ելնեմ ես յայս յայգուս.  
 Այս իմ նորայտունկ այգուս:  
 Տանին ի յեղեր հողոյն.  
 Դնեն զիս ի մէջ հողոյս.  
 Ծաղկունքն վերանան յայգոյս.  
 Այս իմ նորայտունկ այգոյս.  
 Ահայ որ ելա[յ ես յայգուս]:,,

Յատկապես հոգու եւ մարմնի վէճի շարժառիթը մենք մշակուած ենք դտնում հայ բանաստեղծ բուդաղօղլու մօտ, որն ինձ յայտնի է միայն ստորեւ առաջ բերուած տաղից “Հոգու մասին” (Տաղ վասն հոգոյ ասայցել է): Այս Տաղը դտնուում է մի վեցիջեան ձողրում ի՛՛-12<sup>0</sup> (Աս. Թանգ. Թիւ 3, այլ է քարոզների ձեռագրից, որ նոյն թուահամարն ունի): Հեղինակը կոչում է իրեն՝ վերջին տունի մէջ բուդաղօղի Դաղեխն, որի մէջ բացի դորանից գանգատուում է իւր մեղաւորութեան վերայ, խնդրում է ընթերցողներին եւ ունկնդիրներին Հայր Սեր ասել եւ յիշել իրեն աղօթքի մէջ, եւ վերջապէս իւր յոյսը դնում է Աստուծոյ ողորմածութեան վերայ: Չոգրի վերջում բնագրի գրութեան ձեւով (նօտրգիր) գրուած է մի աղօթք, շատ կարելի է ոչ պատահմամբ հոգու եւ մարմնի անջատման մասին ոտանաւորի մօտ:

“Յանուն հօր եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ ամէն. եւ յետոյ մտուցցանել առ աստուած յաղօթս հետեւեցեալս. Ողջոյն քեզ Մարիամ լի շնորօք տէր ընդ քեզ օրհնեալ ես դու ի կանայս եւ օրհնեալ է պտուուղ օրօւայնի քոյ Յիսուս սուրբ կուս Մարիեամ մայր աստուծոյ. բարեխօսեայ վասն մեր մեղմեղաւորացս այժմ:”

Դժուար է ասել, թէ արդեօք օգտուել<sup>1</sup> է բանաստեղծը իւր ոտանաւորի համար հոգու եւ մարմնի վէճի մի որ եւ է հայ արձակ քերթուածով՝ թէ սիւժետը փոխ է առել անմիջապէս օտարալեզու աղբիւրից: Օտար<sup>1</sup> բառերինկատելի առատութիւնը, Աբդուլայ գերվիշի յիշատակութիւնը եւ Աղեքսանդրին խոկանդէր կոչելը դեռ եւս ոչինչ չի ապացուցանում:

<sup>1</sup> Բառերի մեծամասնութիւնը արաբական ծագում ունին, երկու երեքը պարսկական, սակայն նոքա ամէնքն էլ գործ են ածւում եւ տաճիկ լեզուում:

Հայոց աշուղների — ժողովրդական երգիչների մօտ — այդ մի հասարակ երեւոյթ է . բացի դորանից մեր բանաստեղծը Տաճկահայ կարող էր լինել . ինքը հայ-հեղինակը իրեն բուդաղեան չէ կոչում, այլ բուդաղողի, այսինքն տաճկական աղդանուան ձեւով : Սակայն ոտանաւորը, դատելով լեզուից, հնութեամբ կարող չէ պարծենալ . իսկ նորա արտագր. օրինակը հազիւ թէ միադարեան լինի . օրինակը լի է ժողովրդական ուղղագրութեան նմուշներով եւ տեղ տեղ կատարեալ անդրագիտութիւն է ցոյց տալիս . դործն դժուարանում է նաեւ առաջին թերթի այսինքն առաջին երկու էջերի վնասուած լինելուց : Ի նկատի առնելով այս հանդամանքները ես ձեւակերպում եմ ձռգրի բնագիրը՝ շուղղելով մինչեւ անդամ սխալները, իսկ իմ կարծիքները եւ մեկնութիւնները ես զետեղում եմ փակագծերի կամ բնագրի եւ թարգմանութեան ծանօթութիւնների մէջ . ես, ի հարկէ, հեռու եմ այն մտից, թէ իմ բոլոր կարծիքները կարող եմ լիովին յաջող համարել : Համարատելը ինձ է պատկանում, բայց տուները անփոփոխ են, ինչպէս այստեղ, ձռգրում . այն բաց տեղերը, որոնք ես չկարողացայ լրացնել, նշանակուած են հարցական նշանով ուղիղ փակագծերի մէջ :

1. Հոգին մարմնուն . “Աղբեր” [ , ասաց . ]  
“Ծուր կու գան [ք] աշխար զհետ իրաց,  
Դատել եմք շատ մալ-խազինայ<sup>1</sup> .  
Մեղք ու վարց կշեռն է դրած : ”
2. Հողին մարմնին ասաց .  
“Միաբան ը [նշուր եմ] ք հետ իրաց (իրերաց)  
Ծունը ածեմք, աղօթք անեմք,  
Թողութիւն ինդրեմք մեր մեղաց : ”
3. Մարմինն ի հոգին ասց .  
“Դեռ մանուկ եմ, հետեր մանկանց

<sup>1</sup> خزینه مال

“Նստեմք, ուտեմք ու խմեմք,  
Մի զմի սիրով ենք սիրած :”

4. Հոգին մար անց .

“Դու արթուն կաց, դու իմաց .

Գնա մուտ եկեղեցո [°] .

“Ծունը ածէ, դու քոյ մեղքն լաց :”

5. Մար ի հոգին ասաց .

“Աշխատել պի [տիմք] շոր ու հաց .

“Նստեմք, ուտեմք ու խմեմք ,

Շոր հաղեմք, շուռ գամք զարդարած :”

6. Հոգին մահին ասաց .

“Քեզ խրատ մի [տամ]. խելաց կաց .

Մի կեր հաց . մի հ[աց]

Խնդրէ որ տաց ախքատաց<sup>1</sup> :”

7. Մար ի հոգին անց .

“Ամարաթ<sup>2</sup> է շթ[շտապ հասած] .

Ապա հետ աղկատ [մարդկաց]

Սրտով ուտեմք աղ ու հաց :”

8. Հոգին մահին անց .

“Դու անդէտ ես՝ անիմաց .

Թէ ապրես 100 տարի ,

Քանց առաջ մեռած ես՝ մեռած :”

9. Մար ի հոգին անց .

“Դեռ թվինքն մեր չէ կատարած .

Թէ ապրեմ 100 տարի ,

100 էլ խնդիրք եմ արած :”

10. Հոգին մին անց .

“Հանտիպէ հանկարծակաց .

<sup>1</sup> Ես այդպէս եմ լրացնում այդ վնասուած տեղը ,  
նշմարելով նորա մէջ աւետարանի ուսման թոյլ արձագանգը ,  
նոյնալէս եւ մօտեցնելով հայկական այս առածին՝ Մուրամ  
մուրամ մուրացկանի տամ . (Ա. Ճուլարտեան, Առածք ազ-  
գայինք . Վենետիկ, 1880 թ., էջ 26) :

<sup>2</sup> Ամարաթ = Ճաշ

Ելնես տափ ու սար<sup>1</sup> ընկնես .

Աղաչես դու հրեշտակաց : „

11. Մը ի հոգին անց .

“Թէ նման ես հրեշտակաց .

Պիտի իմ կամաւ լինես .

Ամանաթ<sup>2</sup> ք[եզ] ինձ է տված : „

[12. Հոգի ի] մը անց .

“Ամանաթդ պահիր ձեռաց .

[Աւանդել] պիտիս տիրուն

Ուղ նա քես (քեզ) է տված .

[Մի] պահիր(-եր) պղնձի նման

Ժանդոտած<sup>3</sup> [օ] է գձած .

Պահիր դու ոսկու նման

[Խնամա]ծ, շորով փաթաթած : „

[13. Մար ի հոգին] անց .

“Դեռ խորուրդն իմ չէ [կատարա]ծ .

Ունեմ շատ դուստր որդի ,

[Ունեմ շատ] մալ խաղինայ .

Խաղինին [դուռն եմ] բացած : „

[14. Հոգին ի մար անց].

“Քան զքեզ մեծ թագաւորաց

Դուստր, որդին, մալ խաղինէն

Անտը մնացած : „

15. Մար ի հոգին անց .

“Գին տված<sup>4</sup> փողով եմ գնաց (գնած) .

Ունեմ շատ քոշք ու սահրայ<sup>5</sup> .

Արծաթով, ոսկով է ծէփած : „

<sup>1</sup> داپ و سار պարս.

<sup>2</sup> اهانست

<sup>3</sup> Զոգրում “ժանդոտած”, “գձած”, վոխանակ  
“գձձած”:

<sup>4</sup> “Գին տալ,, եւ “դնել,, հոգին փրկել, ազատել մըտքով յաճախ է պատահում, ի միջի այլոց մի քարոզի հետեւեալ հատուածում. (Քարոզ) ի բան մարդարէին որ ասէ. որպէս իժի եւ քարրի զի խցեալ է զականջս իւր (ձոգը. Աս. թանգ, թիւ 3, թ 10 թ թ) եւայլն:

<sup>5</sup> کوشک و سرای

16. Հոդին ի ման անց .

“Դու իշխան ես վառաւորաց .

Գնայ՝ մէկ սահմայ շինէ .

Որ կենաս զորի յաւիտեան .

Գնայ մի կարմոնձ կապէ .

Դու մազէ կարմուճն<sup>1</sup> ես անցկացած : ”

17. Մըն ի հոդին անց .

“Ճատ ապրանք ունեմ աշխատած .

Արի, իմ տխմար հոդի .

Զե՞ն[չ] գիտես, ընչօվ եմ դատած : ”

18. Հոդին ի մըն անց .

“Սուտ աած (ասած) . ողորդօվ ես դատած .

Ո՞ւր այ հայրն Ղարունին ապարանքն .

Չեռնէն գնաց :

Ո՞ւր այ դարվիշ<sup>2</sup> Ապդօլին,

Իւր հմար դրախտն էր շին[ա]ծ

Կամ թարայ թագավորին ,

Կռքնէր ած էր արած :

Արի, իմ տխմար մարմին .

Բեր տեսնեն[ք] . աշխարումս մնաց .

Չի մնաց՝ Աբրիհամուն[ն] ,

Որ Սահակ մատաղ էր տված .

Չի մնաց որդուն Դավթի

Սողոմոն[ին, որ] տաճարն էր շինած .

Չի մնաց Խոկանդարին .

Որ աշխարս զաւթ<sup>3</sup> էր արած .

Մեռաւ, փոշիման<sup>4</sup> գնաց

<sup>1</sup> Ասլիկ դայեակը ժողովրդական հեքիաթների յայտնի հաւաքիչ Գ. Սրուանձտեանի մօտ (Մանանայ. կ. Պոլիս 1876, էջ 89) պատմում է մազէ կամուրջի մասին, որ անց է կացրած կրակէ գետի վերայով. կամուրջի այն կողմը գտնուում է Դրախտը, այս կողմը — Դժոխքը: Ասլիկի ամբողջ պատմութիւնը (ib. էջ 88—89) կրում է անվաւերական տեսիլների ազդեցութեան ակնյայտնի հետքերը:

<sup>2</sup> درویش պարս.:

<sup>3</sup> ضبط

<sup>4</sup> پشمیمان պարս.:

Ե(ի՞նչպէս) մարդն որ կոտն<sup>1</sup> էր ցանած.  
 Դու չես ավատալ ինձի .  
 Գնայ մօտ կարքաւորաց՝  
 Աստուծոյ բանքերն (բանք են) օրինած .  
 Մի երթալ հարամ<sup>2</sup> ուտել,  
 Քանի կայ հալալն<sup>3</sup> դրած .  
 Մի երթալ ընկեր զըկել,  
 Ընկերի զըկօղն է զըկած .  
 Մի երթալ բապասանել  
 Դրկցէտ հետ<sup>4</sup> օտար մարդկաց .  
 Մի երթալ մարդու զամղել  
 Մեծունած մօտն աւանած :

19. Դու լիլըյին-լային<sup>5</sup> ես Ուդայինման .  
 Կայենին , անակն անիծած .  
 Արի , իմ տխմար մարմին .  
 Դու լսէ թէ ինչ եմ ասած : „  
 20. Մըն ի հոգին անց .  
 “Ինչ ասիր , մտնէս գնաս ,  
 Թէ մէկ , թէ հաղար ասես ,  
 Կու թվի . իսկի չեմ լսած<sup>6</sup> :  
 21. Դեռ պիտի ուտեմք ու խմեմք .  
 Ինչ ապրանք ունեն[ք] աշխատած .  
 Դեռ պիտի սաֆալ<sup>7</sup> քաղեմք .  
 Դեռ կամքն իմ չէ կատարած : „

<sup>1</sup> Տեղն ինձ աղաւաղուած է թուում . կոտն ես հասկանում եմ կուտնի մոքով : Գուցէ բանաստեղծը ակնարկում է աւետարանի օրոման առակիր կամ Վարդանի առակի վերայ (Զոդր . Բերլինի Արք . Մատենադարանի , Ms. or Minut. 273) տխուր ճակատագրի մասին , որ հասել է մարդուն , որը դժնիկ է տնկել եւ փուշ սերմանել :

حِرَام

حِلَال

<sup>4</sup> Զոդրում “Հետո : ”

<sup>5</sup> لَعِينَ = [այլ]ին

<sup>6</sup> Հմմտ . Մէկ ականջէս մտաւ , մէկալէն ելաւ առածը . (Ս . Շուլարտեան , Առածք Ազգայինք . Վենետիկ 1880 . Թ . էջ 109.)

صَفَّا

## 22. Արն ի հոգին անց.

“Ես քեզի փոքրուծ ե[մ]պահած.  
Պահել եմ մէջ ղափաս[ի]տ<sup>1</sup>  
Սունուցած, չեմ թուռցոցած.  
Հմիկո ճնճղկի նման  
Դու թռած, ծառին ես նստած.  
Չես գալ քո բնիդ վերայ.”

Աւերած խափաստ է՝ քանդած:<sup>2</sup>

## 23. Հոգին ի մըն անց.

“Կութվենք, աղբէր, բաժանած.  
Էտ քոյ անիուն<sup>3</sup> մալտ, տեսնեմ,  
Դու ինձ ինչ ես տված.”

Ոչ ունեմ դայեկան ձեռիս  
Խէր արած, վարձուց բաժանած:<sup>4</sup>

## 24. Մարմին ի հոգին անց.

“Բիբֆայ<sup>5</sup> աղբէր ես կանգնաց  
Թողեր ես ինձի, կերթաս.  
Կութվի օր մի չես տեած:<sup>6</sup>

Պահիկ մի մօլաթ<sup>7</sup> արայ.

Համբորեմ ես քես կարօտած,  
Ընչուրի հաւատամին.”

Քհանէն կարքն կատարած:<sup>8</sup>

## 25. Հոգին ի մարմինն անց.

“Ես քէն եմ հետ քես՝ խռօված.”

Թողեր եմ, դարտակ կերթամ

Անպաշար ճամփէս մոլորած.

Երթամ ես ղարի<sup>9</sup> աշխարհ.

Երբ չունեմ ես տուն մի շինած,

<sup>1</sup> قَسْ = خیر

<sup>2</sup> لَامَ بَرْكَةَ مَهْبِهِنْ فَوْسَانَهَاكَلْ ْلَامَ، ْلَامَ لَامَنْ ْلَامَنْ ْلَامَنْ ْلَامَنْ

<sup>3</sup> بَرْفَا

<sup>4</sup> سَهْمَهْ = تեսած կամ տեւած:

<sup>5</sup> حَلْمَتْ

<sup>6</sup> قَارِبَ = خَرَبَ

Դեմ առնում օտար դռան,  
Զի՞նչ խնդրեմ, ու ոնչիչ<sup>1</sup> չեմ տված։”

26. Մարմինն ի հոգին ասաց.

“Փոշիման եմ ես ի մեղաց.  
Թաղվեր ե [մ] խոր ու զնդան.  
Ըլտիարու<sup>2</sup> ձեռնէս դնաց.  
Գնայ, իմ աղքատ հոգի,  
Ես թաղած ու դու մուռած<sup>3</sup>  
Ընչուրի դադաստանին.  
Այլ աստուած լինի ողորմած։”

27. Հոգի մարմնուն ասաց.

“Վայ ինձ, վայ մեղաւորին.  
Տէրն դադաստան կանի.  
Ինչ ասեմ կալած եմ, կապած.  
Վայ ինձ, վայ մեղաւորին,  
Արդարին դրախտն է շինած.  
Մեզ համար դժողկն է շինած.  
Դժողկն տանջել պիտեմք յաւիտեան։”

ԺԵ.

Խօսելով Գրիգոր Աղթամարցու մասին, ես  
յիշատակեցի նորա սովորութիւնը պաճուճել հայ  
ոտանաւորները տաճկերէն եւ պարսկերէն ամբողջ  
տողերով եւ երկտողեաններով (distique): Բոլորո-  
վին ուրիշ բան է, երբ հայ ոտանաւորների մէջ  
պատահում են պարսկերէն բառեր, որպէս արդէն  
հայոց շրթունքներում քաղաքացիական իրաւունք  
ստացածներ, թէպէտ եւ մի որոշ շրջանի միայն,  
կամ որպէս ստերէոտիպ բանաստեղծական արտա-  
յայտութիւններ, փոխ առնուած հայ բանաստեղծ-  
ներից առանց փոփոխութեան. այդպէս է օր. բ[ա]րք,  
ձիւն պարսկերէն քրից եւ ալնէ, աշկարայ ա-

<sup>1</sup> Որ ոչ ինչ։

<sup>2</sup> ختنار եւ վերեւը Զնդան = ندان

<sup>3</sup> Աղթամած կամ շատ կարելի է մուրացած (°)։

բաբ - պարսկական չվահից, մի բանաստեղծութեան մէջ<sup>1</sup>, որ հետաքրքրեց ինձ իւր փոքրացուցիչ կամ փաղաքշական բառերով, ինչպէս՝ սրտիկ, դռնիկ եւ խաբրիկ:

Աչերտ արծաթ է բրիայ.  
Պաղ ջրեր ինքն ժողովին.  
Ծարվեր եմ. թող ջուր խմեմ.  
Կարաւտով՝ շերթամ մեռանիմ:  
Սրտիկո երկու դուռն ունի.  
Մէկն գաղտուկ. մէկն ալանի.  
Կերթամ այն գաղտուկ դռնիկն.  
Կու կանչեմ խաբրիկ ալանի:  
Ով որ սպիտակ ծոց ունի.  
Թող ապրի շապիկ հագանի.  
Զկոճակն ի վերայ շարէ.  
Հատ մանկան լեզի պատառի:  
Ոչ ի այրն (°) ներկած հագանի.

<sup>1</sup> Էջմ. Զոգը. թիւ 103ի վերջում. 123 թ. in-20 : Գրութիւնը 10, 8×7, 2 հզմ.: — Տող. 20: — Թուահամարները. հայ տառերով իւրաքանչիւր 22 թերթից յետոյ: — Թուղթը. հաստ, դեղնկեկ, մոմած: — Գիրը. բոլորդիր: — Զարդերը. գունագեղ զարդագրեր կապուած մանրանկարների հետ լուսանցքների վրայ, խորանք թերթերի ճակատին (4ա, 48ա եւ 79ի թ.): — Կազմը. տախտակեայ, կաշու վրայ կոխած ձեւանկարներ: — Վիճակ. կազմը խախտուած է, թերթերը քայլայուել են, սկզբից սկակասում է 12 թերթ: — Արտագրչի անունը եւ թուահամարը եւ չգտայ: Բովանդակութիւնը. 1. Տաղագիրք (1ա—4ա թ.) սկզբից թերի. 2. Պատմութիւն Յովասափու, ոտանաւոր աղբիւր Առաքել Բիթլիսեցու (4ի—48ի թ.). 3. Պատմութիւն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ոտանաւոր, նոյնպէս Առաքելի (49ա—78ի թ.). 4. Բանաստեղծութիւն, նուիրուած Ներսէս պատրիարքին, առանց վերնագրի (79ի—91ա թ.). 5. Պատմութիւն Մարիսայի եւ Գասպարի կամ, ըստ այլ իմ մօտ գտնուած արտագրուած օրինակին, կոսպարի, Ասեցի վաճառականների, նոյնպէս անվերնագրի (91ա—98ի թ.). այս Յակոբ Արծկէացու ոտանաւոր հոգեշահ պատմութիւնն է, թէ ինչպէս կրակապաշտ Գասպարը քրիստոնէութիւն ընդունեց. Եւ 6. Բանաստեղծութիւններ մի ամբողջ խումբ հայ բանաստեղծների. Գրիգոր Աղթամարցու, Աստուածատուր Հենեցու, Մարտիրոս Հեղանցու, Նարեկացու, Կոստանդի եւ սյլն (98ի—123 թ.):

Ու մանկան լեզին պատառի .  
Կերթամ կանիծեմ էն ակն .  
Որ լեզակն իւրմէ կելնի :

Սէր դէպի փաղաքշական խօսքերը էի վերջաւորութեամբ մենք նկատում ենք արդէն հայոց հին ժողովրդական երգերում, որոնք պահպանեղ մեզ համար Ա. Խորենացին, այդպէս կարմրիկ, եղեգնիկ, պատանեկիկ (I, լա) եւ, այսօր ըստ Սանահնի արտագրուած օրինակին, “տեղեկիկ, փոխանակ՝ տեղի (I, լ), նոյնպէս “Սարթենիկ” (I, լ. եւ II, ծ) եւ, թերեւս, “գեղեցիկ, Արտաշէսի վերայ գրուած ոտանաւորի մէջ (II, ծ):

Հեծաւ արի Արտաշէս <sup>1</sup>  
Ի սեաւըն գեղեցիկ եւն :

## Փ. 9.

Վերջայնելով խօսքս, չեմ կարող չօյայտնել իմ ցաւը, որ մի քանի հայ հրատարակութիւններ, մանաւանդ հնատիպներն ու արտասահմանեանները, անմատչելի էին ինձ սյս Նկատողութիւնները կազմելիս. այսպէս զօր. ես այժմ միայն միջոց գտայ ծանօթանալու Բաղաամի եւ Յովասափի պատմութեան տպագիր արձակ բնագրի հետ ըստ Սինակսարի, որը նորերս մտաւ կայս. Հաս. Մատենադարանը մի տասնեակ ուրիշ հայ հնատիպ գրքերի հետ միասին. տպագիր հրատարակութեան մէջ նոյնպէս պահպանուած է թարգմանիշ Աստի յիշատակարանը (ԳԼ. Ա): Յովասափի եւ Ասանէթի պատմութեան հայ թարգմանութեան մասին նկատողութիւնս կազմելիս (ԳԼ. Թ) ես շկարողացայ օդտուել Հ. Բատիֆֆոլի աշխատութիւնից, որը վերաբերում է այդ առարկային. Studia Patristica, Études

<sup>1</sup> Ես գուրս ձգեցի բնագրից արքայ բառը, որպէս եօթնոտեան շափը խանգարող. նա, ըստ երեւութիւն, պատմաբանի բացատրութիւնն է:

d'ancienne littérature chrétienne par P. Batiffol. I. fasc. Le livre de la prière d'Aseneth. in-8° 1889: Այդ գիրքը դժբախտաբար այժմ էլ չկարողացայ ձեռք բերել: Գրիգոր Տաթեւացու շարադրութեան միջից հանուած հատուածը, որն ես յառաջ եմ բերել Զ. գլխի վերջընթեր նկատողութեան մէջ, արդէն տպագրուած է Պ. Փիրզամալեանի մօտ (Նոտարք Հայոց եւն. Պօլիս. 1880. էջ 27) բայց այլ թուականով եւ ըստ այլ ձուգրի: Կարեւոր եմ համարում նոյնպէս Յիսուսի Մանկութեան պատմութեան մէջ գտնուող “տախտակ” բառի թարգմանութիւնը լրացնել (էջ 50) ես թարգմանել եմ ճօսկա բառով, աւելի պարզ կլինի, եթէ “տախտակ”ը այդ տեղ հասկանանք փոքրիկ տախտի՝ այսինքն գահի մտքով:

Ներկայ թերթս տպագրուած էր արդէն, երբ ստացուեցաւ Ամսօրեայ Հանդիսի օգոստոսի համարը, ուր Սուտ-Կալիսթենէսի Աղեքսանդր Մակեդոնացու Պատմութեան մասին գրուած հետաքնին էտիւդներում, 229 էջի վերայ, յառաջ են բերուած Խաչատուր Կեշառուեցու ստանաւորները, որոնք ունին շատ նմանութիւն ըստ ոգուն եւ ըստ ոճին ստանաւոր Հոգու եւ Մարմնի վէճի հետ (տես վերեւը էջ 71): Նոյն յօդուածից իմացայ, որ Խաչատուրի մի քանի բանաստեղծութիւնները տպագրուած են Հ. Պետոնդ Ալիշանի մօտ Այրարատի նկարագրութեան մէջ (Վենետիկ. 1890), շատ կարելի է, որ նոցա թուում գտնվում է նոյնպէս այն բանաստեղծութիւնը, որն ես յառաջ եմ բերել էջմ. թիւ 86 ձուգրից հանած քաղուածում:

Բազմահմուտ հայերէնագիտիաշխատութիւնը գեռ եւս չկայ ոչ Համալսարանի մատենադարանում, ոչ Հասարակացում եւ ոչ էլ Ասիական Թանգարանում:

Մի քանի պատճառներով, որ մասամբ ցոյց եմ տուել ստորեւ, մտցնում եմ այս գլխի մէջ

տարբեր ընթերցուածներ Մ. Խորենացու Պատմութեան ըստ Սանահնի ձռդրին, որի տէր սրբազան Սարգիս Գասպարեանին մի անգամ եւս յայտնում եմ խորին շնորհակալութիւնս որ այնքան սիրով շնորհեց ինձ: Յիշուած ձռդրը<sup>1</sup> բաղկացած է 289 թերթից (սկզբում երեք թերթ եւ վերջում երեք թերթ պակաս են) in-4<sup>0</sup>, երկսիւն, իւրաքանչիւրը 17×5, 8 հզրմ., տող 27, մագաղաթի վրայ գրուած, բոլորգիր: Թերթերը Ստ. Ասողիկի Պատմութեան մէջ խառնուած են գրողի յանցանքով, բացի գրիչ Ներսէսի յիշատակարանից որ ձեռագրի վերջումն է, գտնվում են նոյնպէս դարձեալ նորառիչ երկու յիշատակարանները, մինը ձեռագրի մէջ տեղում, իսկ միւսը Ստ. Ասողիկի Պատմութեան վերջում, բայց նոքա իրականապէս ոչինչ նորութիւն չեն ներկայացնում առաջնին համեմատութեամբ, որն եւ յառաջ է բերուած ստորեւ: Կայ մի յաւելուած գրութիւն 36 թերթի վրայ 1874 թուից, որը հաղորդում է, թէ աւագ քահանայ Դաւիթ Շահինեանն է նուիրել այդ ձռդրը այժմուան տիրոջն ի նշան բարեկամութեան: Կայ այլ եւս մի քանի տեղերում յաւելուած գրութիւն 1885 թուից Մեսրոպ Սմբատեան՝ Նախիջեւանցի եպիսկոպոսի ձեռքով: — Բովանդակութիւն: Ա. Մովսիսի Խորենացւոյ Յաղագս մերոյ սկզբանն. Ասմ բանիցս Սահակյ Բագրատանւոյ ինդրաւղ (5a—128aթ.) Բ. Ստեփաննոսի Տարօնեցւոց Ասողիկան Պատմութիւն Տիեզերական (129a—221bթ.). Գ. Պատմութիւն ըռստակէսի Լաստիվերոյ վարդապետի: Վասն անցից ան[ց]ելոց ի յայլասեռ ազգաց որ շուրջ մերը են: Անց[ք] ընդ աշխարհու հայոց (222a—276aթ.) եւ Գ. Մովսիսի Խորենացւոյ ասացեալ է երկրաչափ յաղագս աշխարհագրութեան տիեզերաց (277b—286aթ.): Ահա ձռդրի վերջում գրուած յիշատակարանը:

<sup>1</sup> Տես ներկայ Նկատողութիւններիս Բ գլուխը:

“Փառք անհասանելի . անճառի . անեղի . անմահի . ամենակարողի . ամենազօրի . եւ արարողի ամենայն էիցո յանէից՝ հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ անձամբ եւ դիմօք տրոհեալ . այլ իսկութեամբ անսկզբնութեամբ զօրութեամբ իշխանութեամբ միաւորեալ նմա ահութիւն եւ փառք յամենայն էիցո ամեն : Որ կարողացոյց զիս զթմրեալս [յամենայն տեսակս մեղացո զանյիշելի եւ զեղկելի մեղսասէր եւ չարագործ ներսէս սուտանուն . ծրագրել զպատմութիւն թագաւորացն մերոց : Աղաչեմ զձեղ զամենեսե [ա]ն յիշելոյ եւ թողութիւն խնդրելոյ յանոխակ [ալ անյ]իշաշար տեսառնեն (այսուէս) զծնօղսն զտէր Աղարիայ քահանայն եւ զմայրն իմ Ռւղուսաւլթանն : Ամեն :

Գրեցաւ պատմագիրքս ի յերկիրս Լաւու ի գեւզս Աւգսորի (°) ի վայելումն Սարգիս ահրեպիսկոպոսին ի սուրբ եւ գերահռչակ ուխտս որ կոչե Սանահին որ է իսկիզբն եւ մայր ամենայն վանորայից ընդ հովանեաւ լուսոյ մաւր սուրբ աստուածածնիս եւ հրաշափառ ամենափրկիչ սուրբ կաթաւղիկէի եւ այլ սրբոցս որ աստ հաւաքեալ կան :”

Սանահինի վանքի վանահայրերի թուում Սարգիս անունով դիտենք միայն մի անձն . այդ Սարգիս եպիսկոպոսն է, Բերեկի որդին, Արղութեանների աղքատոհմից : 1633 թուին նա նորոգեց Սանահինի տաճարի գմբեթը, որ վեասուել էր սաստիկ երկրաշարժից (Description des Monastères Arméniens d’Haghbat et de Sanahin, par l’archim. Jean de Crimée avec Notes et Appendice par M. Brosset, St. Pet., 1863, p. 77): Այդ տաճարում մի արձանագրութիւն կայ, որ հաստատում է թէ Բերեկի որդին՝ Սարգիս արքեպիսկոպոսը 1652 թուին վերականգնել է Փրկչի եւ Աստուածամօր տաճարները, Ս. Գրիգորի եկեղեցին, մատուռն ու մասունքների խուցը (Նոյն, էջ 66): 1652 թուից մեցած մի հրովարտակ կայ, որ Վրաց թագաւոր Ռու-

տոմը յանուն այս եպիսկոպոսին է տուել (‘Առյն, Էջ 88—88), նորա գերեզմանը գտնվում է Սանահին վանքում Փրկչի եկեղեցու մուտքին մօտ՝ աջ կողմը (‘Առյն, Էջ 79): Ապա ուրեմն մեր յիշած ձռդրը, որ Սանահինի վանահայր Սարգիս արքեպիսկոպոսի համար է գրուած, ԺԷ գարու կէսին է վերաբերում, թէեւ մագաղաթի վրայ է գրուած:

Ես արդէն առիթ ունեցայ խօսելու այն էական օդնութեան մասին, որ ձռդրի ու տպագրի համեմատութեան գործին ցոյց տուեց Էջմիածնի միաբաններից մինը՝ Գալուստ Մկրտչեանը։ Համարեա ամէն երեկոյ, երբեմն եւ առաւօտները, հէնց որ առակների ձեռագրերով պարապելու ընդհատում էի, մի քանի ժամ անց էի կացնում այս համակրելի միաբանի սենեակում, ուր կարգով մեղանից մէկը կարդում էր ձռդրը, իսկ միւսը տարբեր ընթերցուածները նշանակում էր տպագիր հրատարակութեան էջերի վերայ։ Իմ Էջմիածին մնալուս վերջին օրերում, երբ բոլորովին ժամանակ չունէի, միաբան Գալուստ Մկրտչեանը շարունակում էր ձեռագրի ու տպագրի համեմատութիւնը մինակ։ օգտուելով սակայն ժամանակ ժամանակ Էջմիածնի մատենադարաննապետ Հ. Սահակ Ամատանու գործակցութեամբ։ Այս կերպով բաղդատուեցաւ Մ. Խորենացու Պատմութեան տպագիր բնագիրը Սարգիս եպիսկոպոսի ձեռագրի հետ, որն ես ծագման տեղին նայելով Սանահինեան կոչեցի։

Սանահինեան օրինակի վարիանտները գլխաւորապէս կարեւոր են սկզբնագրի տառերի նկատմամբ<sup>1</sup>. ապա՝ թէեւ տարբեր ընթերցուածների մեծ

<sup>1</sup> Գլխաւորապէս Սանահինեան օրինակի վերայ Հիմնուելով՝ Միաբանը (կեղծանուն) բաւական հետաքնին հետեւանքների հասաւ նկատմամբ հին հայոց մատենագրական յիշատակարանների վերանորոգութեան արտագրողների ձեռքով. այս հետեւանքները՝ Մովսէս Խորենացու պատմութեան վերայ արած ուրիշ հետաքնին նկատողութիւնների հետ ամփոփուած են մի քանի յօդուածների մէջ, որ տպագրուած են 1890 եւ 1891 թուի ‘Արարատ,, հայ ամսագրում’:

մասը կամ գրչի եւ կամ պարզաբար սխալ է, բայց  
յաճախ դրանք էլ հնէազրութեան նկատմամբ բառ  
ական բան կը տան. մի քանի դեռքեր, զոր զօր. — Եւ Տ  
տառերը այնտեղ, ուր սպասելի էր է եւ ա, ինչպէս  
“Պուամու” եւ “Տեւմամոս” (էջ 92, 5 եւ 65, 9) ցոյց են  
տալիս թէ սկզբնագիրը գրուած էր երկաթագրով,  
ուր միայն կարելի է այս տառերի շփոթումը: Պէտք  
չէ ամենեւին հաւատ ընծայել այն վարիանտներին,  
որոնք կարող էին գրողի անուշադրութիւնից սպառ-  
դել, տառեր, վանկեր, բառեր եւ ամբողջ հատուած-  
ներ բաց թողնելով, կամ սխալ կարդալով պա-  
տուով բառերը՝ մանաւանդ Ան-ն, Ան-նն, Ան-ն,  
Ան-նն եւայլն: Սակայն այսպիսի դիտողութիւն-  
ներ ամէն ոք կարող է անել, աչքէ անցնելով յե-  
տագայցուցակը. իսկ բոլոր ընթերցուածների պատ-  
շաճաւոր գնահատութեան համար, որքան որ հնա-  
րաւոր է այժմս, կան աւելի ձեռնհաս անձինք, որոնք  
Մովսէս Խորենացու պատմութեան ուսումնասիրու-  
թեան ամբողջ տարիներ են նուիրել. այդպիսիների  
ձեռքը Սանահնեան օրինակի վարիանտները շուտով  
տալու համար ես որոշեցի նրանց զետեղել առաջի-  
կայ Նկատողութիւններիս<sup>1</sup> մէջ: Չողրի հետ բաղ-  
դատուած է Տփխիսի 1881 թուի տպագիրը<sup>2</sup>, որ

<sup>1</sup> Մեր ներկայ հրատարակութեան մէջ զանց առ-  
նուած են այս համեմատութիւնը, զորոնք կարելի է տես-  
նել ոուսերէն քնազրին վերջը դրուած: Այս համեմա-  
տութիւնն զործքին միծ մասը կը կազմէ, (էջ 46—94),  
ուր Խորենացոյ զրոց Տփղիսի տպագրութեան էջերու  
եւ տողերու կարգաւնշանակուած են առանձին սիւնակ-  
ներու մէջ յիշեալ ձեռազրին տարբերութիւնը: Այս տար-  
բերութիւնը քաւական շատ են եւ կարեւոր, զորոնք  
Խորենացոյ զործքին քննողը պէտք չեն անտես ընել:

<sup>2</sup> Հետեւաբար այս հրատարակութեան համեմատաբ-  
րեր ընթերցուածների մօտ ցոյց են տրուած էջեր եւ առ-  
զեր. վերջիններս պէտք է համարել ներբեւից, երբ թուա-  
նշանի առաջ նուազական է դրուած:

Հաւագոյններից մէկն լինելով հանդերձ, միանգամայն հանրամատչելի է։ Ուրեք ուրեք պատահում էին վարիանտներ, որոնք արդէն Սահահնի ձոգրից անկախ՝ ցոյց են տրուած վենետիկեան հրատարակութեան, ինչպէս եւ Կարինեանի աշխատութեան (Բաղդատութիւն եւն. Տփխիս 1858) մէջ. մենք բոլորն էլ մացրել ենք մեր ցուցակում։

